

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԿԻՆԸ
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

1/2021

396(1-11)

ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A/108295

ԿԻՆԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ



ԵՐԵՎԱՆ
«ՎԱՌՄ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ
2021

ՀՏԴ-08
ԳՄԴ-94
Կ 492

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԵՆՏ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

ՀՈԳԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ Մարիամ Խանզադյան

Խմբագրական խորհուրդ՝ Արամ Զույան, Ռոբերտ Ղազարյան,

Երվանդ Գրեկյան, Հասմիկ Հմայակյան, Ռուսլան Յակոբյան,

Նեյլի Մինասյան, Զրիարիմե Մելքոնյան, Տիգրան Միքայելյան

Սրբագրիչ՝ Արևիկ Զամալյան

Կ 492 Կիմը արևելյում / ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ.- Եր.:
2021.- 136 էջ:

«Կիմը արևելյում» ժողովածուն ընդգրկում է 2019 թ. դեկտեմբերի 16-17-ին
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացված «Կամայր արևել-
յում» գիտաժողովի նյութերը: Նախատեսվում է արևելագետների, հայա-
գետների համար:

Կազմի վրա՝ տապանաքար Մարաշից. նստած կիմը իլիկով, մ.թ.ա. IX-VII դդ.:
Աղբյուրը՝ Dominik Bonatz: Das syro-hethitische Grabdenkmal –
Untersuchungen zur Entstehung einer neuen Bildgattung in der Eisenzeit im
nordsyrisch-südostanatolischen Raum. Von Zabern, Mainz 2000, ISBN 3-
8053-2603-3, S. 21, 40–41, 79, 92, 96, Tafel XVIII (s. v. C 51):

Լուսանկարի աղբյուրը՝

<https://www.flickr.com/photos/126337530@N04/15159837958>

ՀՏԴ-08

ԳՄԴ-94

ISBN 978-9939-875-63-7

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2021

INSTITUTE OF ORIENTAL STUDIES NAS RA
WOMAN IN THE EAST
A COLLECTION OF PAPERS

Published by the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies of NAS RA

Editor-in-Chief: *Mariam Khanzadyan*

Editorial Board: *Aram Kosyan, Robert Ghazaryan, Yervand Grekyan, Hasmik Hmayakyan, Ruslan Tsakanyan, Nelli Minasyan, Christine Melkonyan, Tigran Mikayelyan*

Corrector: *Arevik Kamalyan*

WOMAN IN THE EAST / - Yerevan: Institute of Oriental Studies of NAS RA, 2021.- 136 p.:

The collection "Woman in the East" represents materials of the conference «Women in the East» held on December 16-17 2019 at the Institute of Oriental Studies NAS RA. The collection is intended for orientalists and armenologists.

Cover picture: relief of a seated woman holding a spindle; funerary stela from Marash, 9th-7th century BC. Source: Dominik Bonatz: Das syro-hethitische Grabdenkmal – Untersuchungen zur Entstehung einer neuen Bildgattung in der Eisenzeit im nordsyrisch-südostanatolischen Raum. Von Zabern, Mainz 2000, ISBN 3-8053-2603-3, S. 21, 40–41, 79, 92, 96, Tafel XVIII (s. v. C 51).
Photography source:

<https://www.flickr.com/photos/126337530@N04/15159837958>

© Institute of Oriental Studies of NAS RA, 2021

YEREVAN
«VARM» PRINTING HOUSE
2021

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական խոսք	5
Խանզաղյան Մարիամ	
Առաջավորասիական հայելիների պատմությունից	6
Լսրեր Խանյան	
Խելացի կնոջ բնման հայ բանահյուսության շահարսյան սյուժեներում	42
Հասմիկ Հմայակյան	
Ամուսնական հարաբերությունները խեթական հասարակությունում	57
Մարիամ Մելքոնյան	
Կամանց կարգավիճակը օսմանյան կայսրությունում՝ կին գրողների կյանքի և գործունեության օրինակով (XV-XVI դարեր)	74
Մելքոնյան Քրիստինե	
Հայ կնոջ կերպարը XIX դարի քրիտանացի ճանապարհորդ Ջեյմս Քրեգի ներկայացմամբ	89
Նևլի Մինասյան	
Կնոջ դերը միջնադարյան մոնղոլական հասարակությունում	102
Տիգրան Միրայեկյան	
Կամանց վերաբերյալ կարծրատիպերը վաղմիջնադարյան արաբալեզու աղբյուրներում (IX-XI դդ.)	115
Արամ Քոսյան	
Հայկական լեռնաշխարհի կանայք ըստ խեթական սեպագիր աղբյուրների	124

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՒՄՔ

2019թ. դեկտեմբերի 16-17-ը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ գիտաժողով, որը նվիրված էր արևելյան հասարակություններում կանանց իրավական և սոցիալական կարգավիճակի խնդիրներին՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Իր տեսակի մեջ եզակի այս գիտական միջոցառման ընթացքում ներկայացված զեկուցումները լայն աշխարհագրություն ունեն՝ Առաջավոր Ասիայից մինչև Հեռավոր Արևելք: Մասնավորապես քննարկվում են հնագույն առաջավորասիական պետություններում (Խերական տեքություն, Եգիպտոս, Միջագետքի պետականություններ), Արաբական խալիֆայության, Օսմանյան կայսրության, Սեֆյան Իրանի, ինչպես նաև մոնղոլական շրջանի Հեռավոր Արևելքի՝ կանանց կարգավիճակին առնչվող խնդիրները:

Ներկա ժողովածուում ամփոփված է վերոհիշյալ գիտաժողովին ներկայացված զեկուցումների մի մասը:

Արամ Բոսյան

ԱՌԱՋԱՎՈՐԱՄԻՆՎԱՆ ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*«Եվ նա, ով արկղիկ անգամ չունի, սնդուկի
փրոտի է արդեն.*

*Եվ նա, ով ջրում իր արթաջուլանքով էր քափա-
քարվում, հայելի ունի արդեն»:*

Հին եգիպտական առած¹

Թանալի քառեր. առասպելաբանություն, հայելի, կանայք, Հին Եգիպտոս, Հին Միջագետք, Pax Hethitica.

Համատարագիր

Հոդվածում ներկայացված է առաջավորասիական հայելիների պատմությունը՝ մ.թ.ա. VI հազարամյակից (Չարալ-Հոյուր, Բադարի) մինչև մ.թ. I հազ. սկիզբ (եգիպտական, խեթական, միջագետքյան, ուշ խեթական նյութերի հիման վրա)՝ նրանց առաջացման, հիմնական չևերի, սեմիոտիկայի և նշանակության համադրերստում:

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ

Նյութական օբյեկտը կարող է և՛ կիրառական նշանակություն ունենալ, և՛ լինել խորհրդանիշ: Մարդը հայտնագործում է թե՛ քնուքյան, թե՛ իր ստեղծած առարկաների կիրառման հնարավորությունները՝ զուգահեռաբար օժտելով դրանք առարկայի նյութական հատկություններից բխող սիմվոլիկայով: Մյուս կողմից՝ կիրառական և սիմվոլիկ հատկությունների փոխկապակցվածության արդյունքում սիմվոլիկ նշանակությունը կարող է հանգեցնել երկրորդային կիրառական կամ կարծեցյալ կիրառական նշանակության (օր.՝ ամանոքյա եղևնին տիեզերական ծառի գաղափարի կարծեցյալ կիրառական նշանակության վառ օրինակ է)²:

¹ O’Neil 2011: 9.

² Lennu 1988: 6.

Յուրաքանչյուր հասարակությունում գոյություն ունի նյութական առարկաներին տրվող իմաստների և նշանների բարդ համակարգ, որը հասկանալի է տվյալ հանրույթի անդամներին պատմական կոնկրետ փուլում: Ե՛վ առարկան ստեղծողը, և՛ այն օգտագործողը ծանոթ են առարկայի համատեքստին, բայց հետազոտողի համար այն հասանելի չէ, և միայն համատեքստի, իմա՝ մշակութային միջավայրի վերակազմությամբ է հնարավոր քիչ քն շատ ճիշտ պատկերացում կազմել այս կամ այն առարկայի նշանակության մասին³:

«Գեղագիտական առարկայի մեջ միավորվում են փոխակերպված կիրառականությունը («գեղեցիկի պահանջի» քավարարումը) և խորհրդանշական գործառույթների ոչ հստակ ուրվագծված, բայց շար ինրենսիվ դաշտը: Գեղագիտական առարկան կարող է հանդես գալ որպես միասնական նշան և փարբեր մակարդակների նշանների հիերարխիկ կառույց, և միևնույն ժամանակ կարող է հանդես գալ որպես սեփականարիորջ սոցիալական կարգավիճակի խորհրդանիշ»⁴:

Հայելին՝ որպես գեղագիտական առարկա, իր մեջ ամփոփում է տարբեր սեմիոտիկ (նշանագիտական) մակարդակներ. ա) այն նյութական մշակույթի առարկա է իր ֆիզիկական հատկություններով, և բ) հայելին ունի իր սեփական մշակութային համատեքստը և հանդես է գալիս որպես արվեստում և պատմական աղբյուրներում արտացոլված աշխարհատեսական մոդելի բաղկացուցիչ մաս⁵:

Հայելու առաջին սեմիոտիկ մակարդակը **ջուրն է** հայելու գաղափարն իսկ պիտի որ ձևավորվեր ջրի փինջ մակերեսին նայելիս: Բնական այս հայելին դրդեց մարդուն իմաստավորել իր արտացոլումը: Հայելու մեջ ուրվագծվեց հայելային «ես»-ը, որը հաջորդ փուլում վերափոխվեց սոցիալական «ես»-ի, և ըստ այդմ էլ հայելին դարձավ շեմային երևույթ և ձեռք բերեց *«կառուցվածքային խաչմերուկի»* իմաստ⁶: Հայելային անդրադարձը դարձավ գիտակցության

³ Рон 2004: 20.

⁴ Левин 1988: 6-7.

⁵ Байбурин 1981: 226; Рон 2004: 23-24.

⁶ Эко 2020: 13.

խորհրդանիշ՝ իրականության արտացոլում⁷, ինչպես նաև երևակայության (կամ կրկին գիտակցության) խորհրդանիշ՝ տեսանելի աշխարհի ձևական իրականությունն արտացոլելու իր ունակությամբ⁸:

Սեփական արտացոլանքը դրդում է մարդուն յուրօրինակ հոգեկան աշխատանքի. հենց հայելուն է պատկանում որոշիչ դերը մարմնի հատվածական ընկալման հաղթահարման և սեփական «ես»-ի՝ մեկ միասնական կերպարի մեջ հավաքելու գործում⁹:

Հայելին երկրային և անդրշիրիմյան աշխարհների մեջտեղում գտնվող մեղիում-առարկա է, ինքնահայեցման և տիեզերքի արտացոլման գործիք, և այդ համգամանքը հայելային սիմվոլիզմը կապում է ջրի՝ որպես արտացոլող հատկություններ ունեցող երևույթի հետ¹⁰: Հայելին մակերես է, որը կարող է նաև կլանել և իր մեջ պահել պատկերը, ինչպես նաև այդ պատկերներին կենդանություն հաղորդել¹¹:

«Դատարկ» հայելու և «քնակեցված» հայելու միջև այդ տատանումը, արտացոլման ժամանակավոր քնույթը հայելուն հաղորդում է որոշակի փուլայնություն, որն իր քնույթով կանացի է, և, որպես հետևանք, կապված է լուսնային սիմվոլիկայի հետ¹²: Բացի դրանից՝ հայելին մոզական առարկա է, որն ունակ է արտացոլելու աշխարհը, քացահայտելու անցյալն ու կանխատեսելու ապագան, իր մեջ ամփոփելու մարդու պատկերն ու հոգին: Անտիկ փիլիսոփայության մեջ հայելին միջոց էր հավերժությունը տեսնելու համար: Այս նշանակությամբ են քացատրվում հայելու միջոցով գուշակությունները հունական տաճարներում կամ հայելու դերը վերածննդի մասին օրփեսական ուսմունքում¹³:

Իր մոզականությամբ հայելին ներառվում է ձեսի մեջ. «Կենցաղային նպատակներով օգտագործվող առարկայի սեսիոտիկ կար-

⁷ Cirlot 2001: 90-91, 176 ("At the same time, the lake - or, rather, its surface alone - holds the significance of a mirror, presenting an image of self-contemplation, consciousness and revelation").

⁸ Ibid.: 211.

⁹ Kanoena 2011: 8.

¹⁰ Cirlot 2001: 211.

¹¹ Ibid.

¹² Ibid.

¹³ Becconova 1982: 102.

Պաշտոնաթղթությունից հետո՝ 1870-ական թթ. սկզբին, մի քանի տարի ապրել է Օսմանյան կայսրությունում²:

Մեր կողմից ընտրված աշխատությունը վեր է հանում Հայաստանի ու հայերի, ինչպես նաև հայ կնոջ կերպարի նկարագրի որոշ կողմեր: Ջեյմս Քրեգն առաջին հատորում համառոտ ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը՝ անտիկ ժամանակներից մինչև իր ապրած ժամանակահատվածը: Սա վկայում է, որ հեղինակը՝ Օսմանյան կայսրություն էր ժամանել հայերի անցյալի մասին արդեն որոշակի պատկերացումն ունենալով: Մեր կողմից քվանտիտատիվ վերլուծության են ենթարկվել երկրորդ հատորի 3-րդ և 4-րդ մասերը, որոնց խորագրերն են «Հայկական կյանք» և «Հայերի քնութագիրը»: Աշխատության այս բաժիններում Քրեգը բավական մանրակրկիտ նկարագրում է Էրզրումում (Կարին) բնակվող հայերի կենսապայմանները, սոցիալական կարգավիճակը, հոգևոր-կրոնական կյանքը, ավանդույթներն ու սովորույթները և այլն:

Մույն վերլուծության նպատակն է ներկայացնել հայ կնոջ կերպարը ըստ բրիտանացի ճանապարհորդ Ջեյմս Քրեգի աշխատության, որտեղ հեղինակը հայերին քնութագրում է որպես քաղաքակիրք, մշակույթ կերտած, հանգիստ, աշխատասեր և հյուրասեր ժողովրդի. նա հայերին համարվում էր տեղի բնիկներ, որոնք ստիպված էին կողք կողքի ապրել մուսուլմանների հետ: Միաժամանակ իր աշխատության մեջ նա մեծ տեղ է հատկացնում հայ կնոջը՝ դիտարկելով նրա արտաքին տեսքը, ներքին էությունը, սոցիալական դիրքը և դերը ընտանիքում: Աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է տարբեր տարիքային խմբերի և սոցիալական կարգավիճակ ունեցող հայ կանանց՝ երիտասարդ, ամուսնացած, տարեց, հարուստ, աղքատ, քեթևաբարո և այլն:

Ջ. Քրեգը շատ հաճախ հայ կնոջը ներկայացնում է տարբեր իրավիճակներում՝ բավական հետաքրքիր գնահատականներ տալով: Ավելին, աշխատանքը կարդալուց այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հեղինակն ապրել է հայ ընտանիքում, քանի որ շատ

² Creagh 1880: 2.

զավիճակի հերաքրքիր փոփոխություններից մեկը նրա ներստումն է ծխական համարեքարում: Առարկաների լեզուն ավելի հարմար է դառնում ծխական տեղեկատվության փոխանցման համար»¹⁴:

Մետաղյա հայելին իր հերթին փոխում է հայելու սեմանտիկան: Անդրաշխարհի հետ կապ ունեցող առարկան, շնորհիվ մետաղի փայլի և դրա հետ կապված հավատալիքների, ձեռք է բերում առասպելաբանական այլ իմաստներ և երանգներ. առաջին պլան է մղվում լույսի և բերրության աղբյուր հանդիսացող հայելի-արեգակի առասպելաբանական սյուժեին¹⁵: Հենց մետաղյա հայելիներն են վկայված նաև հինկտակարանյան տեքստերում¹⁶:

«Հայելու կապը արևի աստծո հետ կանխորոշված է առարկայի հարկություններով: Նախ և առաջ՝ հայելիները պարբարաբարում էին քրոնոզից և մեթաղների զանազան խառնուրդներից, և խառնուրդների բաղադրության մեջ եղած արծաթն ու ոսկին արտացոլմանը հաղորդում էին ոսկյա կամ արծաթյա գույն: Ոսկին և արծաթը շար ժողովուրդների մշակույթում արևային սեմանտիկա ունեն, քանի որ մեթաղի փայլն ասոցացվում էր կայծակի, կրակի և լույսի հետ: Մեթաղյա հայելիների մակերեսը, որը հավաքում և անդրադարձնում է լույսի ճառագայթները, ընկալվում է որպես լուսային օջախի աղբյուր և դառնում է լուսապտուների խորհրդանիշ»¹⁷:

Հայելին ընկալվել է որպես արևի պատկեր կամ որպես արեգակնային աստծո պատկեր, նրան վերագրվել է պողաբերության վրա ազդելու ունակություն: Իր հենց այս նշանակությամբ հայելին ունի հատուկ դեր հարսանեկան ծեսերում¹⁸: Իրանական և հնդկական մշակույթներում հայելին ձեռք է բերել նաև հերոսի հատկանիշի և

¹⁴ **Բանբյրոս** 1981: 224.

¹⁵ **Քոն** 2004: 61.

¹⁶ «Պղնձ է ասուզանն ու դրա սղնձ է պատուանդանը պատրաստեց ոխխառոր այն կանանց հայելիների պղնձից, որոնք վրանը խփած օրը վկայություն խորանի դասն ձուռ էին հասարակ» (Նվից, 38:8):

¹⁷ **Քոն** 2004: 60.

¹⁸ **Բեցոնոնա** 1982: 102.

աստվածուհու հետ նրա սրբազան ամուսնության հատկանիշի սեմանտիկա¹⁹;

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵԼԻՆԵՐԸ ՉԱԹԱԼ-ՀՅՈՅՈՒՔ ԵՎ ԲԱԳԱՐԻ

ՉԱԹԱԼ-ՀՅՈՅՈՒՔ: Ի կոմիտն-Կոմյայից 50 կմ հեռավորության վրա 1961-1963 թթ. Ջեյմս Մեյլարտի ղեկավարությամբ անցկացված պեղումների ընթացքում հայտնաբերվեց Չաթալ-Հյոյուք նեոլիթյան բնակավայրը, որի ամենավաղ մշակութային շերտերը քվադրվում են մ.թ.ա. VIII հազարամյակի կեսերով: Հնագիտական այս հայտնագործությունն արձատապես փոխեց հինարևելյան քաղաքակրթությունների առաջացման մասին պատկերացումները: Այս հնավայրում հայտնաբերված խեցեղենը, գեղեցիկ որմնանկարները, կանացի արձանիկները, պաշտամունքային առարկաներն ու առաջին «տաճարային» կառույցները շատ ինքնատիպ են և դեռ ուսումնասիրության ընթացքի մեջ են²⁰: Բնակավայրը գոյատևել է մինչև մ.թ.ա. VI հազարամյակը (մ.թ.ա. 7500 քվակամներից մինչև մ.թ.ա. 5700թ.):

Չաթալ-Հյոյուքից պեղված առարկաների շարքում առանձնանում են օբսիդիանից պատրաստված հայելիները: Չաթալ-Հյոյուքում քարի պաշարներ չկան, տարբեր գործիքների համար քարը բերվել է հարակից տարածքներից²¹: Հնավայրից ոչ հեռու օբսիդիանի հարուստ պաշարներ կան, որոնք գոյացել են հարավ-արևելքում գտնվող հրաբուխների ժայթքումներից (այդ հրաբխային լեռներն են Քարադաղը և Հասամդաղը)²²:

¹⁹ Ермоленко 2001.


²⁰ Մեյլարտի ուսումնասիրությունները շարունակել է Յեն Հոդդերը, որի խմբագրությամբ հրատարակվել են *The Leopard's Tale: Revealing the Mysteries of Catalhöyük* (Cambridge, 2006), *Religion in the Emergence of Civilization: Catalhöyük as a Case Study* (Cambridge, 2010), *Violence and the Sacred in the Ancient Near East: Girardian Conversations at Catalhöyük* (Cambridge, 2019) և այլ ժողովածուներ:

²¹ Baysal, Wright 2006: 308.

²² Օբսիդիանի հնարավոր աղբյուրների մասին տե՛ս Carter et al. 2006.

Չարալ-Հյոյոքի հայելիները մինչ այժմ հայտնաբերված ամենահին հայելիներն են²³: Մ.թ.ա. VII-VI հազարամյակներով թվագրվող 10 կամացի դամբարաններում հայտնաբերվել են օրսիդիանից պատրաստված հոյակապ փայլեցված հայելիներ, որոնց մակերեսն, ի դեպ, ոչ թե հարթ է, այլ քերակի կորույթուն ունի²⁴:

Նկար 1. Չարալ-Հյոյոքի օրսիդիանե հայելիներից երկուսը: Անատոլիական քաղաքակրթությունների թանգարան, Անկարա²⁵:



Օրսիդիանը փայլեցրել են և կրային շաղախի օգնությամբ խնամքով ամրացրել բոնակը: Օրսիդիանը դժվարամշակ քար է, և հնագետներին զարմացրել էր Չարալ-Հյոյոքի քնակիչների վարպետությունը, որոնք կարողացել են կարծր օրսիդիանից այսչափ կատարյալ և առանց քերծվածքների հայելիներ ստանալ²⁶: Կա տեսա-

²³ Չարմանակի զուգադիպությամբ մայաներն ու ացտեկները նույնպես ունեին մոզական գործառույթներով օրսիդիանից հայելիներ. տե՛ս <https://bit.ly/3DyiQWx>:

²⁴ *Epoch* 2007: 1222.

²⁵ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3Dwp7Uj>:

²⁶ **Берни, Лэнг** 2016: 22. «Обкалывание (вырубание), шлифовка, полировка и сверление – эти техники использовались ремесленниками Чатал-Хююка при изготовлении инструментов, оружия, сосудов, статуэток и украшений из камня. Обрабатывались разные виды камня, за исключением разве что твердых вулканических пород, таких как гранит. Obsидиановые зеркала, найденные в захоронениях, встав-

կես, որ օրսիդիանը հղկել են կորունդով կամ մանրահատիկ տիդմով, որոնց պաշարներով հարուստ է Փոքր Ասիան²⁷, այնուհետև փայլեցրել կաշվով²⁸:

2001 թ. հնագետները փորձեցին վերարտադրել հայելիների պատրաստման ողջ տեխնոլոգիական գործընթացը: Փորձը հաջողությամբ ավարտվեց, և նրա նկարագրությունը լույս տեսավ 2001 թ.²⁹ ԱՄՆ Հնագիտության ինստիտուտի պարբերականում²⁹:

Նկար 2. Չարալ-Հոյուրի օրսիդիանի մշակման տեխնոլոգիաների վերակազմության փորձի արդյունքում ստացված արտացոլումը³⁰:



Հայելիները հայտնաբերվել են կանանց, ըստ երևույթին՝ ազդեցիկ³¹ կանանց, դամբարաններում: Բացառված չէ, որ բացի իրենց կիրառական գործառույթից՝ հայելիները մաս ինչ-ինչ մոզական կամ

жались в известняковый раствор и полировались с применением неизвестной техники. Перфорация круглых предметов, таких как буланы, не представляли трудности, чего нельзя сказать о сверлении каменных бусин, в том числе обсидиановых, в которых обнаружены отверстия слишком тонкие для современной стальной иглы. Как это делалось – непонятно. Использование медных бусов является маловероятным».

²⁷ Enoch 2006: 775.

²⁸ Ibid: 1226.

²⁹ Ստամբուլի արդյունքի մասին տե՛ս <https://bit.ly/3qOOITb>:

³⁰ Enoch 2007: 1223.

³¹ Meilapr 1982: 88.

պաշտամունքային դեր են ունեցել³²: Չարալ-Հյոյոքի կանանց կարգավիճակի կամ ենթադրյալ մայրիշխանական հասարակության մասին պատկերացումներն այժմ փոխվել են. երեսնալիցնում կանանց ավելի մեծ դերակատարում էր վերագրվում, ապա այժմ հակված են կարծելու, որ կանանց և տղամարդկանց կարգավիճակները հավասար են եղել³³:

Նշենք, որ առաջարկվել է օբսիդիանե հայելիների հնարավոր կիրառման մեկ այլ տեսակետ. ենթադրվում է, որ մեոլիթյան այս տեխնոլոգիաներով պատրաստված հայելիները կարող էին ծառայել որպես ոսպնյակներ աստղային երկինքն ուսումնասիրելու համար³⁴:

ԲԱՂԱՐԻ: XX դարասկզբին հարավային Եգիպտոսում ընթացող հնագիտական պեղումները բացահայտեցին հետաքրքիր ու ինքնատիպ մի մշակույթ, որը շրջակայքում գտնվող Էլ-Բադարի քնակավայրի անունով կոչվեց «Բադարյան մշակույթ»: Պեղվել և ուսումնասիրվել է մոտ 600 դամբարան, որոնք բնակավայրում են մ.թ.ա. 4500-3250 թթ: Այս հնավայրում է հայտնաբերվել Եգիպտոսի պատմության մեջ ամենահին մետաղյա գտածոն՝ պղնձե հերյուրը: Դամբարաններում հայտնաբերվել են խեցեղեն, գարդեր, աշխատանքային գործիքներ՝ այն ամենը, ինչ կարող էր պետք գալ անդրշիրիմյան կյանքում:

Տեխնոլոգիական առումով սա այն շրջանն է, երբ քարի մշակման մեջ օգտագործվում էր «քաջ հղկման» մեթոդը: Մինչ այդ քարե պատրաստուրը հղկում էին մեկ այլ անհարթ քարով: Հետո սկսեցին հիմնաքարի վրա կվարցե կարծր ավազ լցնել, իսկ ավելի ուշ պատրաստուրը թրջում էին, ապա նոր պատում ավազով և հղկում, ինչը թույլ տվեց և՛ արագացնել հղկման գործընթացը, և՛ ավելի որակյալ ու հարթ մակերես ստանալ: Հղկելուց հետո քարը մշակում էին արդեն շեշաքարի փոշիով՝ արդյունքում ստանալով հայելու պես ողորկ մակերես:

Ահա այդ ողորկ ու փայլեցված մակերեսն էլ, ըստ որոշ գիտնականների, օգտագործվել է որպես հայելի: Թաց քարը քավակահին

³² Wason 2010: 282.

³³ Hodder 2004: 79.

³⁴ Vit, Rappenglück 2016.

լավ անդրադարձնող հատկություններ է ձեռք բերում: Այս ենթադրության օգտին է խոսում դամբարաններից մեկում հայտնաբերված լուսնաքարե սալիկը, որը թվագրվում է մ.թ.ա. 4400-4000 թթ.³⁵: Քարի վրա փայտի հետքեր են հայտնաբերվել, սալիկը հավանաբար տեղադրված է եղել փայտե շրջանակի մեջ:³⁶

Ն.ԿԱՐ 3. Բաղարի հնավայրի հայելին³⁷:



Naqadda II հնավայրում հայտնաբերված քարե հղկված սալիկը ամենայն հավանականությամբ նույնպես ծառայել է որպես հայելի³⁸: Հաջորդ փուլերում հայտնաբերվել են փայլարի մշակված շերտեր, որոնք նույնպես կարող էին հայելիներ լինել³⁹. մնան տիպի «հայելիներ» հայտնաբերվել են Ստորին Նուրիայում, Քուստուլի դամբարանադաշտի տարածքում և թվագրվում են մ.թ.ա. 3800-3100 թթ.⁴⁰:

Քարե հայելիների ավանդույթը շարունակվել է հետագա դարերում և այլ մայրցամաքներում. օրսիդիանե հայելիներ հայտնաբերվել են Հարավային Ամերիկայի հնավայրերում⁴¹, իսկ ստիսարակ հղկված քարի անդրադարձնող հատկություններն օգտագործվել են

³⁵ Brunton 1928: 3, 35; O'Neill 2011: 2.

³⁶ Vorster 2016: 184; O'Neill 2011: 2; Enoch 2006: 776.

³⁷ Նկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3DuTLff>, դամբարանի գտածոների նկարագրությունը տես՝ Brunton 1927: 61:

³⁸ O'Neill 2011: 2.

³⁹ Brunton 1928: 35.

⁴⁰ Török 2009: 43.

⁴¹ Schweig 1941: 259, տես նաև Saunders 2010, Enoch 2006: 778-779.

շատ երկար: Բերենք միայն մի օրինակ: Հոռոմեացի պատմիչ Սվետո-
նիոսը Դոմետիանոս կայսեր պալատի մասին պատմելիս գրում է, որ
«նա հրամայել էր պարերը սալիկապարել փայլուն լուսնաքարով,
որ արքայացունան մեջ տեսներ այն ամենն, ինչը կատարվում է մեջքի
հերկում»⁴²:

ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՏԱՂՅԱ ՀԱՅԵԼԻՆԵՐԸ

Եգիպտոսի առաջին մետաղյա հայելիներն ի հայտ են գալիս
Վաղ բազալտրոսյան շրջանում Մեմֆիսում, և առասպելաբանու-
թյան մեջ առաջին հայելու պատրաստումը վերագրվում էր Պտահ
աստծուն՝ Մեմֆիսի հովանավորին: Այս շրջանի հայելիները սրտածև
են, ինչը բնորոշ է միայն Եգիպտոսին⁴³: Հին բազալտրոսյան հայելի-
ներն արդեն կլոր են կամ օվալաձև, բռնակները պատրաստված են
փայտից և պապիրոսի տեսք ունեն⁴⁴: Մոտավորապես մ.թ.ա. XXIX
դարից եգիպտական հայելիները ուռուցիկություն են ձեռք բերում.
հայելին ճիշտ պահելու դեպքում պատկերն արտացոլվում էր առավել
փոքր հայելային մակերեսի վրա, ինչի հետևանքով ավելի քիչ բրոնզ
էր պահանջվում⁴⁵: Հին եգիպտական հայելիների ևս մի տեսակ, որն ի
հայտ է գալիս Միջին բազալտրոսյան վերջին փուլում, բազեների
արձանիկներով զարդարված «աստվածային հայելիներն» էին,
որոնց սկավառակը խորհրդանշում էր Ռա աստծուն⁴⁶:

Միջին բազալտրոսյան շրջանում, երբ հայտնագործվեց ապա-
կին, եգիպտացիները պատրաստել են նաև ապակյա հայելիներ,
բայց դրանք խիստ փխրուն էին, այդ իսկ պատճառով առաջնային
նշանակություն ունեին մետաղյա, հիմնականում բրոնզե հայելիներ-

⁴² Սվետոնիոս, գիրք VII, 14-4: Մերյու Դենիսոնն ավելացնում է, որ լուսնաքարից քա-
ցի՝ պատերը սալիկապատված են եղել նաև օրսիդիանով
(<https://litresp.com/chitat/ru/%D0%94/dennison-metjyu/dvenadcatj-cezarej/13>): Լուսնա-
քարի կամ ֆենոկսի մասին գրել է Պլինիոս Ավագը (XLVI.163.), կիրառման մասին
տես http://annales.info/ant_lv/plinius/36.htm#paragraf163:

⁴³ Nemet-Nejat 1993: 164.

⁴⁴ Ibid.

⁴⁵ Enoch 2006: 776.

⁴⁶ O'Neill 2011: 8.

րը⁴⁷: Միջին Բագավորության շրջանում ձևավորվեցին եգիպտական հայելիներին բնորոշ կառուցվածքային տարրերը՝ պոչուկով սկավառակը, որը պատրաստված էր պղնձի կամ բրոնզի ձուլվածքներից (Միջին Բագավորության շրջանում՝ մաս արծաթից), սկավառակի տակ գտնվող «ծաղկարույլը» (փայտ, փղոսկր կամ մետաղ) և բռնակը (սկավառակը բռնակին միացնում էին փայտե զամբրով և սոսնձով, ավելի ուշ շրջանում՝ մետաղյա զամբրով⁴⁸): Բռնակն ու «ծաղկարույլը» սովորաբար նույն նյութից էին պատրաստում: Այդպիսին է հայելին, որը պատկերված է XI հարստության փարավոններից մեկի՝ Մնմտուիտեպ II-ի (մ.թ.ա. XX դարի առաջին կես) կնոջ՝ Կավիթի քարադամբարանի վրա:

ՆՎԱԲ 4. Կավիթ փարավոնուհու քարադամբարանի մի դրվագ, հայելին ստորին ձախ անկյունում է: XII հարստություն (մոտ մ.թ.ա. 2000-ական թթ.), Կահիրեի քանդադան⁴⁹:



Աստիճանաբար հայելին դառնում է հիմնականում Հափոր աստվածուհու խորհրդանիշը: Հանդիպում են մաս Բատ աստվածուհու (երկնային կովի) գլխով հայելիներ (սակայն վերջինիս պաշտա-

⁴⁷ Schweig 1941: 260.

⁴⁸ O'Neill 2011: 3.

⁴⁹ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3cpRJ4g>:

մունքը Միջին բազավորության շրջանում ձուլվեց Հաթուրի պաշտամունքին), Սեմնեաի (կիզիչ արևի աստվածուհու) և Մուտի⁵⁰ գլխով հայելիներ: Սեմնեաի դեպքում արևային սիմվոլիկան նույնպես ակնհայտ է, իսկ Մուտը բնության խորհրդանիշն էր, «երկնքի բազուկին և գիշերվա տիրուհին», «ծագող արևի մայրը»⁵¹: Հազվադեպ հանդիպում են Հոնսուի (լուսնի աստվածը) կամ Բիսու-Բեսի (օջախի պահապան գաճաճ աստվածություն) գլուխներով հայելիներ, քայց պետք է ասել, որ երկուսի դեպքում էլ կապը Հաթուրի հետ ակնհայտ է. Հոնսուն Հաթուրի որդին էր, իսկ գաճաճ աստվածությունները հաճախ ուղեկցում էին Հաթուրին⁵², ինչպես նաև Բիսու-Բեսի դեպքում չի կարելի բացառել տվյալ հայելիների հմայական նշանակությունը:

Նկար 5. Բիսուի արձանիկով հայելին Թրիտանական բանգարանից⁵³:




Հաթուրը երկնքի, սիրո, գեղեցկության, կամացիության աստվածուհին էր, արեգակը ծնած երկնային կովը: Հաթուրի գերագույն քրոնոտու դերում հաճախ հանդես էր գալիս փարավոնի կինը: Հաթուրը նաև փարավոնի պահապանն էր ու պողաքերության աստվածու-

⁵⁰ O'Neill 2011: 3.

⁵¹ Posse 2010: 100.

⁵² Копронов 2000: 91 (<https://bit.ly/3DBStPK>).

⁵³ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3x1WGd2>:



հին: Հենց Հաթիորն էր դիմավորում մահացածների հոգիները անդրշիրիմյան աշխարհում, ուստի և հին եգիպտական դամբարաններում հայտնաբերված բրոնզե հայելիների զգալի մասը զարդարված է հենց Հաթիորի սիմվոլիկայով և արձանիկներով.

Նկար 6. Հաթիորի խորհրդանիշներով հայելի, մ.թ.ա. XV դար, Նյու-Յորքի Մետրոպոլիտան թանգարան⁵⁴:



Այս և հաջորդ՝ XII հարստության ժամանակաշրջանին բնորոշ հայելիներից մեկը Սենուսերթ III (մ.թ.ա. XIX դար) փարավոնի դստեր՝ Սիթ Հաթիոր Յունիթի արձաթե հայելին է: Բռնակը օբսիդիանից է, ստորին հատվածում լոտոսի թերթիկներ են պատկերված, բռնակը դրվագազարդված է ոսկու և արծաթի շերտերով, սարդիոնով և փղոսկրով:

⁵⁴ Աղբյուրը՝ <https://www.metmuseum.org/art/collection/search/545165>:

Նկար 7. Սեմուսերի III (մ.թ.ա. XIX դար) վարավորնի դստեր՝ Սիբ Հաբոր Յունիքի արձարն հայելին, Կահիրեի քանդարան⁵⁵:



Սիջին քազավորության հայելիները սովորաբար ասոցացվում են քաղման գույքի հետ, քայց, ըստ ամենայնի, նրանք օգտագործվել են մակ կենցաղում. հայտնաբերվել են մեծ քանակությամբ վերանորոգված կամ ծոված պոչուկով հայելիներ⁵⁶:

Եգիպտական հայելիներն իրենց կատարելության հասնում են Նոր քազավորության շրջանում (մոտավորապես մ.թ.ա. 1550-1069 թթ.): Պահպանելով մախկինում գոյություն ունեցող ձևերը (կլոր, օվալաձև և սրտաձև) և սկավառակի կոդությունն ու կատարելագործելով պոչուկի՝ բոնակին միացման տեխնոլոգիան⁵⁷ եգիպտացի վարպետները թևակոխում են հայելիների արտաքին տեսքի ձևավորման նոր փուլ. մասնավորապես, XVIII-XIX դինաստիաների շրջանում մեծ տարածում են ստանում հայելիները, որոնց բոնակը իրենից ներկայացնում է փոքրիկ նրբազեղ քանդակ⁵⁸:

⁵⁵ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3kQzVUI>:

⁵⁶ Nemet-Nejat 1993: 165.

⁵⁷ Nemet-Nejat 1993: 165.

⁵⁸ Lüquist 2007: 96.

Նկար 8. Նոր քաղաքորոյան շրջանի հայելի (մ.թ.ա. 1550–1295 թթ.),
Մետրոպոլիտան թանգարան⁵⁹:



Նման քանդակների մեջ նշմարվում է Հափորին կամ իգական աստվածության գաղափարին շատ մոտ մի երևույթ, ինչը հայելիներին պիտի հաղորդեր կենարարության, երիտասարդացման և պտղաբերության իմաստ, ինչպես նաև կին-աստվածուհու հետ սերտ կապի հնարավորություն ընձեռներ⁶⁰: Իսկ Թուրանահամոնի դամբարանում գտնված ոսկյա հայելու սկավառակի վրա պատկերված է Հեհ անվերջության աստվածը, որն ասոցացվում էր հավերժության և անժայռածիր տարածության հետ: Սկավառակի եզրաշերտը կազմված է Թուրանահամոնի անունների հիերոգլիֆիկ նշաններից:

⁵⁹ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3HBLpEU>:

⁶⁰ *Ibid.*: 99.

Նկար 9. Թուրանահամոնի դամբարանի ոսկյա հայելին⁶¹:



Մ.թ.ա. I հազարամյակում հայելիների բոնակների ամրացման նոր ձև է ի հայտ գալիս՝ տոնակալով բոնակը: Բոնակները միացման հատվածներում հարուստ զարդարված են, վախտից բացի օգտագործվում են նաև քար և փղոսկր⁶²:

Չնայած հայելիները հիմնականում ասոցացվում էին կանանց հետ, Եգիպտոսում նրանք հայտնաբերվել են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց դամբարաններում, ընդ որում՝ բոլոր տարիքների և խավերի ներկայացուցիչների մոտ: Հայելին սովորաբար դրված էր լինում դեմքի մոտ կամ գլխի տակ, ձեռքում, տղամարդկանց դեպքում՝ զենքի հետ, ուսի տակ, կրծքավանդակին: Սարկոֆագի վրա հայելին սովորաբար պատկերվում էր գլխավերևում կամ ոտքերի մոտ՝ սանդալների հետ, որպես ճանապարհորդության պատրաստ լինելու նշան⁶³:

⁶¹ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3CGnGA1>:

⁶² Nemet-Nejat 1993: 164.

⁶³ Ibid: 165.

«Եզիպտերենում հայելին արտահայտվել է «ankh» գաղափարագրով, որը սովորաբար քարգմանվում է «կյանք»։ Հավանաբար այս քառախաղում արտահայտվել է հայելու՝ անդադար գոյությունը պահող առարկայի գործառույթը: «Կենդանի մմանության» պահպանումը եզիպտական բարդ գաղափարախոսության մի մասն է, և այս հայեցակարգում անդրշիրիմյան աշխարհն իդիալականացված էր, և գերակա էին անդրաշխարհում գոյություն ունեցող հավերժական կենսական ուժի, վերածնունդի և պրոդաքսիայի կապերգործանքը: Առավել հաճախ հանդիպում է «ank mAA Hr» արտահայտությունը, որը քառացի քարգմանվում է «հայելի է, որը տեսնում է դեմքը» և հաճախ գաղափարագիրն էլ ուղեկցվում է հայելու նկարով»⁶⁴:

Եզիպտական հայելիները հետագայում տարածվում են Առաջավոր Ասիայով մեկ՝ իրենց ազդեցությունը քողնելով մաս անտիկ մշակույթի՝ հունա-հռոմեական հայելիների վրա⁶⁵:

ՄԻՋԱԳԵՏՔՅԱՆ ՀԱՅԵԼՆԵՐԸ

Միջագետքյան ամենավաղ մետաղյա հայելիները թվագրվում են մ.թ.ա. IV-III հազարամյակներով: Պղնձե սկավառակներ, որոնք կարող էին հայելիներ լինել, պատրաստվել են Ուրուկում (մ.թ.ա. IV հազարամյակի վերջ), Ջենդեր-Նասրում (մ.թ.ա. IV հազարամյակի վերջ), Թելլոյում և Զիչում, ընդ որում՝ դամբարաններում, որտեղ եղել են հայելիներ, հայտնաբերվել են մաս կարգեր և հավանգներ, ինչը զենքի բացակայության պարագայում հուշում է, որ դրանք կանանց դամբարաններ են եղել⁶⁶:

Շուներերեն *հայելին* հնչում էր ^{URUDU} NĪG.ŠU.ZABAR (քառացի՝ ձնոքի քրոնգե [պղնձե] գործիք)⁶⁷: Արքադերեն *հայելի* բառը երկու իմաստ ունի, որոնցից առաջինը՝ *namarn*-ը (գործիք, որի միջոցով մարդ կարող է տեսնել ինքն իրեն), սերում է *amarn* (“տեսնել”) բառից,

⁶⁴ O’Neill 2011: 10.

⁶⁵ Pon 2004: 62.

⁶⁶ Albenda 1985: 2; Enoch 2006: 776; Rova 2008: 561; Nemet-Nejat 1993: 163.

⁶⁷ Nemet-Nejat 1993: 164.

իսկ երկրորդը՝ *mulalu*-ն (գործիք, որը մարդուն նույն կերպ է ցույց տալիս), սերում է *masa/U* «հավասար, նման լինել» բայից⁶⁸:

Հիմնվելով միջագետքյան տեքստերի վրա՝ կարելի է ենթադրել, որ հայելին ասոցացվում էր կին-աստվածությունների՝ Լամաշտուտի կամ Իշտարի (Ուրուկի Տիկնոջ) հետ⁶⁹: Որպես Իշտարի ատրիբուտ՝ հայելին իր մեջ պետք է ամփոփեր հատկությունների բարդ մի համալիր. որպես գեղեցկության աստվածուհի՝ Իշտարը կանացիության խտացած մարմնացումն էր, իսկ եթե հայելին նվիրաբերված էր Իշտարի տաճարին, նա՝ որպես ռազմիկ աստվածուհի, կարող էր հաղթանակ շնորհել իր սիրելի զորավարին կամ արքային: Դրան ավելանում էր Իշտարի և Վեներա (Արուսյակ) մոլորակի նույնականացումը, ինչի շնորհիվ միջագետքյան հայելին եգիպտականի նման կարող էր իր մեջ ամփոփել նաև արևային, լուսնային, երկիրը լուսավորող և մութը վերացնող երկնային մարմինների խորհրդանշանները⁷⁰:

Բացի Իշտարից, որի տաճարում ոսկյա հայելի է եղել, հայելին նաև կարող էր լինել այլ աստվածուհիների ատրիբուտ, ինչպես, օրինակ, Ամուրրու աստծո կին Աշրատումի, որը պատկերվում էր սանրով և հայելիով⁷¹:

Ջուզահեռաբար հայելին հանդես է գալիս նաև որպես մահկանացու կանանց ատրիբուտ: Որոշ միջին ատրեստանյան կնիքներ ենթադրել են տալիս, որ հայելին Ատրեստանի արքայական ընտանիքի տիկնանց ատրիբուտն էր արդեն մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսին⁷²: Նուզիից նույնպես կան կնիքներ, որոնց վրա պատկերված է կին՝ ամեն ձեռքում մեկական հայելիով⁷³:

Հայելին այնքան հեղինակություն վայելող առարկա էր, որ տեղ էր գտել նաև հին բաբելոնական օժիտների ցանկերում⁷⁴: Նշենք նաև, որ Միտաննիի արքա Տուշրատտայի դուստր Տարոխեսպայի օժիտում

⁶⁸ Ibid: 164.

⁶⁹ Rova 2008: 561, n. 25.

⁷⁰ Nemet-Nejat 1993: 168.

⁷¹ Stol 2016: 33.

⁷² Rova 2008: 561.

⁷³ Stol 2016: 33.

⁷⁴ Nemet-Nejat 1993: 164.

նույնպես նշված են երկու արծաթյա հայելիներ, որոնց բնականորդ քանկարծեր փայտից արձանիկներ էին⁷⁵: Եվ, վերջապես, հայելին ձեռքին է պատկերված Ասորեստանի թագուհի Նարիա Չակուտուն (Մինարեթիք արքայի կինը և Ասարհադդոնի մայրը) Բաբելոնի վերականգնմանը նվիրված բրոնզե քիթեղի վրա դրվագված բարձրաքանդակում (մ.թ.ա. VII դար):

Նկար 10. Բաբելոնի վերականգնմանը նվիրված բրոնզե քիթեղի վրա դրվագված բարձրաքանդակը (մ.թ.ա. VII դար) Ասորեստանի թագուհի Նարիա Չակուտուտի պատկերով, Լուսի⁷⁶:



ՀԱՅԵԼԻՆԵՐԸ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Մ.թ.ա. III-II հազարամյակների փոքրասիական մշակույթում հայելիները ներկայացված են հիմնականում վերոհիշյալ երեք սեմանտիկ դաշտերով՝ հայելին որպես անդրշիրիմյան աշխարհի՝ հետ կապի միջոց, հայելին որպես արևային աստուծո ատրիբուտ և հայելին որպես իզական սեռի ատրիբուտ:

⁷⁵ Albenda 1985: 3, Nemet-Nejat 1993: 164.

⁷⁶ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3ewg80c>:

Խերական առասպելաբանության մեջ հայտնի են «անդրշիրիմ-յան նախաստվածուհիները» (հմտ. հուն. պարկաների հետ): Մի ծեսի նկարագրությունում նրանցից մեկի ձեռքում իլիկ է, մյուսի ձեռքում՝ «լցված հայելիներ»․ խոսքն ըստ երևույթին ջրով լցված քասերի մասին է, որոնցում ամեն ինչ արտացոլվում է⁷⁷: Դրանց նշանակությունը ծիսական էր, հմայական, անդրաշխարհի հետ կապի շեշտադրմամբ, քացի այդ էլ՝ առհասարակ ծեսերի մի մասը պահանջում էր որևէ արտացոլող մակերևույթ (հայելի, հեղուկ, փայլուն մակերեսով անոթներ)⁷⁸:

Նման «հեղուկ հայելիներ» հայտնաբերվել են Հորոզբեհում և Ալաջահյոյություն. դրանք թվագրվում են մ.թ.ա. XXVI-XXIV դարերով: Հորոզբեհի միաձույլ բրոնզե հայելին 20 սմ տրամագիծ ունի, 2.6 սմ քարծրությամբ եզրաշերտ և երկու ժապավենաձև բռնակներ՝ անցքերով: Ենթադրաբար այս «հայելիները» կախել են հորիզոնական դիրքով, լցրել որևէ հեղուկով՝ ցանկալի արտացոլումը ստանալու համար⁷⁹:

Հետաքրքիր գուգահեռներ ջրով լցված անոթների հետ հայտնաբերվել են Էգեյան ծովի ավազանում՝ Կիկլադյան կղզիներում, Կրետեում և մայրցամաքային Հունաստանի տարածքում: Հայտնաբերված կալի անոթները թվագրվում են վաղ բրոնզի դարաշրջանով. դրանք նման են թավաների, ունեն 12-30 սմ տրամագիծ և մի քանի սանտիմետր խորություն⁸⁰: Գիտնականները հետաքրքիր հաշվարկներ են կատարել և ներկայացրել, թե ինչ արտացոլանք կարող էին տալ «հեղուկ հայելիները» այս կամ այն հեղուկով լցնելու դեպքում⁸¹:

⁷⁷ Γεωργևοκ 1977: 168.

⁷⁸ Հակոբյան 2018: 247.

⁷⁹ Yakar 2011: 782.

⁸⁰ Papathanassoglou, Georgouli 2009.

⁸¹ Ibid: 668.

ՆՎԱՐ 11. Տարբեր հեղուկներով ա) ջրով, բ) ծխրապտղի յուղով, գ) «սև» ջրով, դ) ծխրապտղի «սև» յուղով լցված «հեղուկ հայելիների» արտացոլանքը, ժամանակակից վերակազմությամբ⁸²:



(a)



(b)



(c)



(d)

Գիտնականներն այս «հեղուկ հայելիները» համեմատում են Ալաջահյույսի և Հորոզբփիի բրոնզե հայելիների հետ՝ ենթադրելով, որ, հնարավոր է, մետաղյա այդ հայելի-թավաները կիլադյան կավե հայելիների մնամությամբ են պատրաստված և փոքրասիական մետաղյա հայելիների առաջին փուլն են հանդիսանում⁸³:

⁸² Լուսանկարի արդյուրը՝ Papathanassoglou, Georgouli 2009: 668.

⁸³ Ibid: 669.

Հնարավոր է, որ իր հանելուկային և խտացած սիմվոլիզմի պատճառով բրոնզե հայելին կարող էր սրբազան առարկա լինել, որն օգտագործեին որոշակի մոգական ծեսեր կատարելու համար: Ենթադրելով կապը որևէ արևային աստվածության հետ՝ ուսումնասիրողները կարծում են, որ Ալաջահյույուքի և Հորոզքեփեի բրոնզե հայելիներն ու մետաղյա իլիկները գուշակությունների ժամանակ օգտագործել են քրմուհիները, որոնք ծառայել են ճակատագրի տեղական աստվածուհուն⁸⁴: Կանանց դամբարաններում և թաղումներում հայտնաբերված հայելիները, ըստ մեկ այլ տեսակետի, կարող են վկայել հայելու՝ վերականգնման և անմահության խորհրդանիշ լինելու մասին⁸⁵:

Հայելիների մյուս խումբը եգիպտական մշակույթից արդեն քաջ հայտնի ուղղահայաց բռնակով պղնձե և բրոնզե հայելիներն են: Արդեն խեթական շրջանի հայելիների պարագայում պետք է նշել տեքստային և պատկերագրական մի խմբի մասին: Երե եգիպտական պատկերագրության մեջ հայելին մեծ մասամբ հստակ նույնականացվում է, ապա խեթական և ուշ խեթական պատկերագրության մեջ նկարները, որտեղ կնոջ ձեռքին հայելանման առարկա է, վիճահարույց են. մասնավորապես նշվում է, որ բռնակով կրոր առարկան կարող է փայտե իլիկ լինել, ոչ թե հայելի: Սկզբնական շրջանում խեթական ^{G16}հաիձա-, հաեձա- բառը բարգմանվել է *իլիկ*, 1924 թ. «Խեթական գինվորի երդումը»⁸⁶ հոդվածում Յ.Ֆրիդրիխսն առաջարկել էր ^{G16}հաեձա-ն բարգմանել *հայելի*⁸⁷, սակայն ցայսօր միասնական մոտեցում այս հարցին չկա: «Լեռոհիլչյալ ծեսի» մեջ համար կարևոր հատվածում (nu-ձոաձ-kan ^{G16}իսլալի ^{G16}իսլալի-ann-a QATI-SUNU tijandu) ^{G16}իսլալի-ն Ա.Գյոթցեն բարգմանում է *հայելի*⁸⁸, Հ.Գ.Գյոտեբրոկն այն ներկայացնում է որպես հայելի՝ ջրի անդրադարձնող հատկության

⁸⁴ Yakar 2011: 786.

⁸⁵ Rova 2008: 561, հղում № 26.

⁸⁶ Մույն տեքստը տե՛ս Friedrich 1924.

⁸⁷ Friedrich 1924: 183.

⁸⁸ Goetze 1950: 357.

շեշտադրությամբ⁸⁹, Վ.Արծիւնբան բառը քարգնամում է իլիկ⁹⁰, Յ. Տիշ-
լերի բառարանում հայկիլի իմաստն առհասարակ բացակայում է⁹¹:

Իլիկի և հայելու պատկերագրական տարբերությունն է շեշտում
Ե.Ռովան. «Սկավառակի վերևի հատվածը մեծ մասամբ պարզ էր,
ինչպես և բռնակի ստորին հատվածը (որն ավելի ուշ արդեն փարթեր
չեն ուներ և փարթեր կերպ էր զարդարված): Հենց այս առանձնա-
հատկություններն են բույլ փայխ հայելիները փարթերիլ իլիկնե-
րից»⁹²: Գարսիա-Վենտուրան շեշտադրում է GİŞ դետերմինատիվը՝
եզրահանգելով, որ ավելի հավանական է, որ խոսքը փայտյա իլիկի
մասին է⁹³: «Խեթերենի ստուգաբանական բառարանում» «huesā»
բառահոդվածում ներկայացված է տեսակետ huesā բառի և եզիպտա-
կան nḥ՝ «կյանք» և «հայելի» բառերի միջև հնարավոր կապի մասին,
սակայն հեղինակների կարծիքով՝ ձևավորված այս տեսակետը սխալ
մեկնաբանության հետևանք է⁹⁴: Մյուս կողմից՝ ժամանակակից այս
տարընթերցումները ևս մեկ անգամ վկայում են, որ որոշ առումներով
այս երկու տարբերը իրենց սեմանտիկ նշանակությամբ փոխարի-
նում են միմյանց⁹⁵: Ինչևէ, այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի
առնել Pax hethitica-ի հայելիների պարագայում:

Հայելու մյուս սեմանտիկ հարթությունը՝ իզական սեռի ատրի-
բուտ լինելը, արտացոլված է թև՝ խեթական և ուշ խեթական արվես-

⁸⁹ Гютербок 1977: 169, 170. «Это прежде всего богини, предшущие нить жизни, подобно Паркам. Приведенную аналогию не следует, однако, принимать за свидетельство индоевропейского происхождения, так как богини здесь хеттские. Между прочим, «наполненные зеркала» пытались объяснить как плоские миски, наполненные водой и дающие отражение».

⁹⁰ «...Приди! Я посылаю тебя к морю. Когда же ты поплывешь, взгляни в зеленую рощу и (посмотри), кто находится там!» И он (Орёл) отвечает: «Я взглянул. Испустая и Патаия, древние богини Ниснего (мира)... стоят на коленях». (Трон) же спрашивает: «И что они делают?» (Орёл) отвечает ему: «(Одна дерогит прыжку, (и обе) держат полные веретёна. И они придут годы царя. И годам (царя) нет ни конца, ни счёта» (Аразинба 1982: 88).

⁹¹ Tischler 2001: 52.

⁹² Rova 2008: 560.

⁹³ Garcia-Ventura 2014: 171.

⁹⁴ Puhvel 1991: 343.

⁹⁵ Rova 2008: 561.

տում, քե՛ տեքստերում, մասնավորապես՝ Պաշկուպատիի ծեսում և վերոհիշյալ «Ջինգվորի երդման» մեջ:

Նախ՝ «կանացի հագ ու կապ»՝ TUG.NIG.MUNUS⁹⁶ արտահայտությունը որոշ խեթական տեքստերում նշանակում էր մի քանի քաղաքիչնեթից քաղկացած համալիր, որի մեջ մտնում էին քողը, որը ծածկում էր մարմինը ոտքից գլուխ, հայելին և իլիկը: Այս կանացի հագ ու կապի ուշ արտացոլումը Մարաշի տապանաքարի վրա սլատկերված կանայք են⁹⁷:

Նկար 12. Մարաշի տապանաքարը, մ.թ.ա. IX-VIII դդ.⁹⁸:



⁹⁶ Բայց կազմված է չունդերին TUG (հագուտ), NIG (լիք), MUNUS (լին) բառերի համադրությամբ:

⁹⁷ Yakar 2011:784, Hoffner 1966:333.

⁹⁸ Source: Bonatz, Das syro-hethitische Grabdenkmal, Mainz am Rhein 2000, pl.XIV, C 33. Հղումը՝ Rova 2008: 568, տե՛ս նաև Barnett 1982: 178.

Հայելին կարող էր նաև իր մեջ րացասական երանգ պարունակել, ինչպես, օրինակ, «Ջինվորի երդումը» կոչվող տեքստում (մ.թ.ա. II հազ. կեսեր)։ այստեղ նկարագրվում է մի ծես, որը ցույց է տալիս, թե ինչ կլինի երդումը դրժած գինվորի հետ։ Մտնը հալեցնելուց, աղը շաղ տալուց և գարին աղալուց հետո տղամարդու առջև դնում էին կանացի հագուստ, իլիկ և հայելի, ինչը նշանակում էր, որ երդումը դրժած գինվորը վերածվելու է կնոջ⁹⁹։

Հինարևելյան տեքստերում հաճախ է հանդիպում իզականություն և առնականության հակադրումը րացասական երանգավորումով՝ գինվորին անհարիր խոնարհության, ենթակայության և մմանատիպ երևույթների նկարագրության դեպքում¹⁰⁰։ Սա, իհարկե, զուտ խեթական երևույթ չէ և առիասարակ հատուկ է հինարևելյան աշխարհատեսությանը։ Կ. Բերգմանն իր աշխատությունում առանձնացնում է տղամարդկանց՝ կանանց հետ համեմատելու երկու հարթություն։ առաջին հարթությունում կովող տղամարդու և ծննդաբերող կնոջ մմանությունն է, որն իր մեջ դրական շեշտադրում ունի, երկրորդ հարթությունում առիասարակ կնոջ՝ որպես թույլ, ենթակա և պարտվող էակի հետ համեմատությունն է¹⁰¹։ Եվ մման ծեսերում հայելին մույնպես իր վրա վերցնում է րացասական այս սիմվոլիկան։

Մեջբերենք ևս մեկ ծես հայելու մման գործառույթով¹⁰²։ Պաշլուվատի անունով խեթական մոզոտին անույ տղամարդուն հագցնում է կանացի հագուստ, ձեռքը տալիս է իլիկ և հայելի, այնուհետև հագուստը համում է, իսկ իլիկն ու հայելին փոխարինում առնականությունը խորհրդանշող նետ ու աղեղով¹⁰³։

Պատկերագրության մեջ էլ հայելին, ինչպես նաև նուրը և իլիկը հանդես են գալիս ոչ միայն որպես աստվածուհիների ատրիբուտներ, այլ նաև սովորական մահկանացու (միզուցե ազնվական, աղեղեիկ)

⁹⁹ Մանրամասն տես՝ Oettinger 1976.

¹⁰⁰ Տես՝ Bergmann 2007: 665-666.

¹⁰¹ Bergmann 2007: 672.

¹⁰² Hoffner 1987.

¹⁰³ Yakar 2011: 4. Նշենք, որ Հ. Հոֆներն այստեղ թարգմանում է *Իլիկ*, ոչ թե *հայելի* տեսնա՝ Hoffner 1966: 329.

կանանց հատուկ առարկաներ¹⁰⁴: Հայելին՝ որպես կին աստվածուհու ատրիբուտ, շատ ակնհայտ կերպով ի հայտ է գալիս ուշ խերական պետությունների (մ.թ.ա. XII-VIII դդ.) գոյության շրջանում:

«Միրիա-խերական հուշարձաններում, ինչպես մենք տեսանք, հայելիներ կարող էին բռնել թե՛ մահկանացու կանայք, թե՛ աստվածուհի Կուրաբան (Կուրաբա-հայելի պատկերագրական կապը լայնորեն վկայված է մ.թ.ա. I հազարամյակում և գալիս է դեռ Միջին բրոնզի դարաշրջանից¹⁰⁵)»:

Կուրաբան՝ Կարքեմիշի քագոտին¹⁰⁶ և, ըստ է. Լարոշի՝ Կիրելայի մախատիպը¹⁰⁷, նոր խերական հայտնի աստվածուհին, դարձավ Փոքր Ասիայի հայտնի աստվածուհիներից մեկը խերական տեքուսյան տրոհումից և անկումից հետո, երբ Կարքեմիշը վերածվեց նոր խերական շրջանի կարևոր քագավորության կենտրոնի: Կուրաբայի պաշտամունքը տարածվեց Կարքեմիշից շատ ավելի հեռու¹⁰⁸: Նրա և Կարխուխաս աստծո (սկզբում՝ հովանավոր աստված, հետո փոխարինել է լուսնական Կուրունտաս աստծուն) միասնական պատկերագրությունը նույնպես ձևավորվում է մ.թ.ա. I հազարամյակում: Մալաթիայի հուշակոթողում Կուրաբան մտած է դեմքով դեպի ձախ, երկար տունիկայով, բարձր գլխարկով և քողով, իսկ աջ ձեռքում պահում է հայելին: Կարխուխասը պատկերված է աջ ձեռքում նիզակով և ձախ ձեռքում եռատան առարկայով¹⁰⁹: Կարքեմիշում հայտնաբերվել է Կուրաբայի պատկերով գեղեցիկ քագալտե բարձրաբանդակ. Կուրաբան պատկերված է կանգնած, բարձր գլխարկով, երկար զգեստով, մի ձեռքում՝ նուռ, մյուսում՝ հայելի¹¹⁰:

¹⁰⁴ Orthman 1971: 276.

¹⁰⁵ Rova 2008: 561, n. 22. Nemet-Nejat 1993: 163.

¹⁰⁶ Hawkins 1981: 147.

¹⁰⁷ Ibid: 147.

¹⁰⁸ Ibid: 147.

¹⁰⁹ Bonatz 2007: 13.

¹¹⁰ Հայելիով Կուրաբայի պատկերագրության օրինակները տես՝ Bonatz 2007: 13, 2015 թ. պեղված հուշակոթողի մասին տես՝ Marchetti-Peker: 2018.

ՆԿԱՐ 12. Կուրաբան հայելիով, քազալտե բարձրաքանդակ 82 սմ բարձրությամբ, մ.թ.ա. IX դար, Կարքեմիշ, այժմ՝ Անկարայի Անատոլիական քաղաքակրթությունների թանգարան¹¹¹:



Ուշ խեթական պատկերագրությունը պահպանվել է մինչև սկյութական շրջան՝ ուրարտականի¹¹² հետ մեկտեղ ազդելով նաև սկյութական մշակույթի վրա¹¹³: Իսկ Կուրաբայի պատկերագրությանը բնորոշ մոտիվները (հայելին, առյուծները, իլիկը ևն) հետագայում իրենց ազդեցությունն են բողմում ավելի ուշ շրջանի Կիթեայի և Ատարգատիս-Դերկետոյի պատկերագրության վրա:

¹¹¹ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bit.ly/3wWid6M>:

¹¹² Пиготровский 1954.

¹¹³ Sh'a Knezel 1993: 125.

ՀԱՅԵԼԻՆԵՐԸ ՎԱՂՆՁԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ տարածքում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված հայելիների մեծ մասը հելլենիստական և անտիկ շրջաններից է, ինչպես, օրինակ, Արտաշատի¹¹⁴, Սողի¹¹⁵ և Եղվարդի¹¹⁶ դամբարանների հայելիները: Անտիկ հայելիները մանրամասն ներկայացված են Լ. Եզանյանի հոդվածում¹¹⁷, Եղվարդի դամբարաններին վերաբերող ուսումնասիրության մեջ¹¹⁸ և այլ աշխատանքներում:

Ինչ վերաբերում է մ.թ.ա. III-II հազարամյակներին, նշենք, որ Հայկական լեռնաշխարհի ոսկերչական արվեստը (հայելիները, շղթաները, մատանիները, կախիկները և այլն) ազդվել է թե՛ հարավային՝ միջագետքյան, թե՛ հյուսիսային՝ մայկոսյան մշակույթներից¹¹⁹:

Առաջավորասիական պոչուկով հայելիներին նման քրոնզե հայելիներ (մ.թ.ա. II հազարամյակի սկիզբ) հայտնաբերվել են Սյունիքի հնավայրերում, ինչը հազվադեպ է՝ ի տարբերություն Թռեղքվանաձորյան մշակութային գոտու: Դրանք հայտնաբերվել են Սիսիան-1 հնավայրի դամբարաններից մեկում¹²⁰ և Շաղատի մի դամբարանում:

¹¹⁴ Խաչատրյան, 1977:

¹¹⁵ Խաչատրյան, 2013: 69, 80: «Սկավառակաձև հարթ մակերևույթ, եզերը առանձնաձև հարդարված արծաթյա իրը, հավանաբար հայելի է, որը հաճախ էր դրվում մահացածների հետ (աղ. XI, 3)»:

¹¹⁶ Քաղապյան, Կարամուկյան, Ալեքսանյան 2014: 152:

¹¹⁷ Էզանյան, 2003:

¹¹⁸ Քաղապյան, Կարամուկյան, Ալեքսանյան, 2014: 152.

¹¹⁹ Bobokhyan 2008: 61.

¹²⁰ Avetisyan 2000: 167.

ՆՎԱՐ 15. Շաղատի հայելին:



*(Շաղատի հայելու լուսանկարների համար մեր շնորհակալությունն
ենք հայտնում Սիսիանի Ն. Այոնցի անվան պալեոնտոլոգիական թանգարանի
գնորեն Թ. Սյունունյ):*

Հայտնաբերված հայելիներից նշենք մաս Լճաշենի դամբարաններից մեկում պեղված հայելին (թվագրվում է մ.թ.ա. XVI-XV դդ.): Այն քրոնզե թիթեղավոր հայելի է՝ փորակավոր բոնակով¹²¹, որը մնան է դաշույնների բոնակներին¹²²: Լճաշենի դամբարանների հայելամնան առարկաներին իր զեկույցում անդրադարձել է հնագետ Բ. Վարդանյանը: Ըստ նրա ուսումնասիրությունների՝ Լճաշենի դամբարանների քրոնզե հայելամնան առարկաներից միայն մեկն է հայելի¹²³, մնացածը երիթակներ են, որոնք հայտնաբերվել են անվավոր փոխադրամիջոցներ պարունակող դամբարանխցերում՝ յուրա-


¹²¹ Мусаханов 1957: 148.

¹²² Магнуссон 1964: 86.

¹²³ Լուսանկարը տե՛ս <https://bit.ly/3mnOoUY>:

քանչյուրում մեկ-երկու հատ¹²⁴: Հավանաբար, հայելի է մաս Ներքին Նավեր հնավայրում հայտնաբերված քրոնզե առարկան¹²⁵:

Ն.ԿԱՐ 14. Լճաշենի հայելին:



(Լուսանկարը տրամադրել է հնագետ Թենիկ Վարդանյանը, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Հայելու ինվենտարային համարը՝ 2007/13:)

Հայաստանյան քրոնզեդարյան հայելիների «իրանց բոլորածն է, պատրաստված են քարակ, միաչափ, հարթ թիթեղից (Լճաշեն, Սիսիան, Վերին Նավեր), ունեն փոքր, զամերի 1-2 անցքով պոչուկ՝ փայտե փողի մեջ ամրացնելու համար»¹²⁶:

Հայելիների՝ դամբարաններից հայտնաբերվելը նույնպես հուշում է այն մասին, որ լեռնաշխարհում տարածված է եղել հայելու՝ անդրաշխարհի հետ կապի սեմանտիկան, ինչպես մաս, ըստ

¹²⁴ Վարդանյան 2019: 18-19:


¹²⁵ Симонов 2019: 288, рисунок № 7:6 штандарт, курган №4.

¹²⁶ Բ. Վարդանյանի համակարգման համաձայն:

Բ. Վարդանյանի՝ անկախ այն հանգամանքից, թե ընճվող առարկաներից որն է հայելի, որը շտամդարտ, որը երկրակ, մի քան պարզ է և ընդհանուր. բոլորն ունեն արևային խորհրդաբանություն, բոլորն էլ եղել են արևի խորհրդանիշ:

Ուրարտական շրջանի հայելիները, որքան կարողացանք պատկերացում կազմել առկա ուսումնասիրություններից, առաջավորասիական բոնակով հայելիներից են, ինչպես, օրինակ, Բրիտանական թանգարանում պահվող փորակավոր հայելին¹²⁷ (նկար 15) և ենթադրաբար ուրարտական շրջանի սոնակավոր բոնակով հայելին Բոստոնի թանգարանից (նկար 16):

ՆԿԱՐ 15 ՆԿԱՐ 16



ԵԶՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջավորասիական հայելիներն անցել են զարգացման երկարատև փուլ՝ սկսելով իրենց պատմությունը մ.թ.ա. VII-VI հազարամյակներից՝ Չաքալ-Նյոյոքի օբսիդիանե հայելիներից: Արխայիկ մտածողության մեջ հայելիներն իրենց մեջ են ամփոփել սեմանտիկ մի քանի դաշտեր՝ ջրի՝ որպես անդրաշխարհի հետ կապի, մոզոլոյան

¹²⁷ «Արքիմիս Եկարապոսյանը տե՛ս Barnett 1963, սվեյի ուշ գիտնականները կապածի տակ առան այս հայելու ուրարտական լինելը: Այժմ առավել հավելած են փորձախական ծագման տեսակետին, տե՛ս Albenda 1985: 7:

և գուշակությունների, մետաղի՝ որպես արևի և պտղաբերության հետ շաղկապված սիմվոլիկայի և կանացիության խորհրդանշի՝ թե՛ քաղաքական, թե՛ դրական շեշտադրմամբ: Հայելին լայնորեն ներկայացված է թե՛ առաջավորասիական պատկերագրության (մանավանդ եգիպտական և ուշ խեթական), թե՛ գրավոր աղբյուրներում, ինչն այդ շրջանի մշակութային միջավայրի վերակազմության համատեքստում բույլ է տալիս քիչ թե շատ հստակ պատկերացնել հայելու դերն ու նշանակությունը արիսայիկ հասարակություններում, այդ թվում և Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան մշակույթում: Հայելիները բաղման ծեսի մաս են կազմում մաս հետագա դարերում, և արդեն հայկական մշակույթում նույնպես արտացոլվում են հայելուն բնորոշ վերոհիշյալ սեմանտիկ հարթությունները¹²⁸:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Բաղդադյան Հ., Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., 2014.** Նորահայտ դամբարանադաշտ եղվարդում, Բանքեր հայագիտության, 2014, N 2-3, էջ 144-169, առցանց տարբերակը՝ <http://armstudies.asj-oa.am/47/1/144.pdf>:
- Եգանյան Լ., 2003.** Հայելին Հայաստանի անտիկ բաղման ծեսում. ՀՀ ԳԱԱ Երևանի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, № 6, էջ 82-87:
- Խաչատրյան Փ., 1977.** Ուշ հելլենիստական շրջանի եգիպտական դամբարան, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, էջ.55-63:
- Խաչատրյան Փ., 2013.** Հայաստանի Սողոմ գավառի անտիկ դամբարանը, Բանքեր հայագիտության, 2013, № 1 (1), էջ 61-82:
- Հակոբյան Հ., 2018.** Միսական սպանության դրսևորումները անտիկ դաշտաշրջանի Երևանի հնավայրերում, Արագածի փկույնում, Հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, 239-253:
- Վարդանյան Բ., 2019.** Անվավոր վոխադրամիջոցին սխալկամող մի առարկայի՝ բրոնզե երիթակի շուրջ, «Հնագիտություն, Ազգաբանություն, Բանագիտություն. Միջգիտակարգային մտածելակերպ» ՀԱԻ երիտասարդ գիտնականների XVI միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 18-20:

¹²⁸ Տե՛ս Եգանյան, 2003: 85:

- Берни Ч. Лэнг Д. 2016.** Древний Кавказ. От доисторических поселений Анатолии до христианских царств раннего Средневековья, Москва.
- Гютербок Г.Г. 1977.** Хеттская мифология в Мифологии древнего мира (Пер. с англ., Предисл. И. М. Дьяконова), Москва, 161-198.
- Ермоленко Л.Н. 2001.** Зеркало для героя, Археология, этнография и антропология Евразии, 1(5) 2001, 84-90.
- Кисель В.А. 1993.** Стилистическая и технологическая атрибуция серебряного зеркала из Келермеса, ВДИ 1993 (№1), 111-125.
- Клейн Л.С. 2012.** Коллектив Ходдера о религии в раннем неолите, Российский археологический ежегодник (№ 2, 2012), 723-728, <http://www.archeo.ru/izdaniya-1/rossiiskii-arheologicheskii-ezhegodnik/vypuski-ezhegodnika/pdf/43aRAE2Klein.pdf/view>
- Клюева Л.Б. 2011.** К семиотике зеркала и зеркальности, Вестник ВГИК 2011, №8, 6-16.
- Коростовцев М. 2000.** Религия Древнего Египта, СПб.
- Мартirosян А.А. 1964.** Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван.
- Меллард Дж. 1982.** Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва.
- Минацхакяни А.О. 1957.** Раскопки курганов на побережье оз. Селан в 1956 г. (предварительное сообщение), Советская археология, 1957, № 2, 146-153.
- Пиотровский Б. 1954.** Скифы и древний Восток, Советская археология, 1954, № 11, 141-158.
- Ромах О.В., Стерликова М.С. 2010.** Семнозис женских культов космогонического цикла в культуре Древнего Египта в сб. Аналитика культурологии, 2010, № 18, 98-105.
- Светозный 1993.** Жизнь двенадцати цезарей. Москва.
- Симоныч А. 2019.** Неркин Навер – Комплекс памятников от эпохи средней бронзы до раннего средневековья, Горы Кавказа и Месопотамская степь на заре бронзового века. Сборник к 90-летию Р.М. Музичаева (отв. ред. Х.А. Амирханов), Москва, 273-294.
- Эко У. 2020.** О зеркалах и другие истории, Кн. 1: Реалистическая иллюзия (перевод с итальянского: А. Голубцова, Л. Кац), Москва.
- Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O. 2000.** The 1998 excavations campaign at the Middle Bronze Age necropolis of Sisian, Armenia, SMEA 42/2, 161-173.
- Baysal A., Wright K.I. 2006.** Cooking, Crafts and Curation: Ground-stone Artefacts from Çatalhöyük in Changing Materialities at Çatalhöyük: Reports from the 1995-99 Seasons (ed. by Ian Hodders), Published by

- McDonald Institute for Archaeological Research, Series: McDonald Institute Monographs.
- Barnett R.D. 1963.** A Review of Acquisitions 1955-1962 of Western Asiatic Antiquities (I), *The British Museum Quarterly*, Vol. 26, No.3, 92-101.
- Barnett R.D. 1982.** A Winged Goddess of Wine on an Electrum Plaque, *Anatolian Studies* 30, 169-178.
- Bergmann C. 2007.** We Have Seen the Enemy, and He Is Only a "She": The Portrayal of Warriors as Women in *The Catholic Biblical Quarterly* Vol. 69, No. 4 (October 2007), 651-672. Online https://www.jstor.org/stable/43726109?read-now=1&refreqid=excelsior%3A76c6c4f373c1bab39ffca96923-d37bc1&seq=1#page_scan_tab_contents
- Bobokhyan A. 2008.** Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr., Band 1-2 (BAR International Series 1853).
- Bonatz D. 2007.** The Iconography of Religion in the Hittite, Luwian and Aramean kingdoms, in *Iconography of Deities and Demons in the Ancient Near East, An Iconographic Dictionary*, 29 p., online <http://www.religionswissenschaft.uzh.ch/idd/prepublication.php>
- Brunton Guy O.B.E. 1928, Gertrude Caton Thompson 1928.** The Badarian Civilisation and predynastic remains near Badari, Lonof archaeology in Egypt University College and Bernard Quaritch, online <http://www.etana.org/sites/default/files/coretexts/15271.pdf>
- Carter T., Poupeau G., Bressy C., Pearce N.J.G. 2006.** From Chemistry to Consumption: Towards a History of Obsidian Use at Çatalhöyük through a Programme of Inter-laboratory Trace-elemental Characterization in Changing Materialities at Çatalhöyük: Reports from the 1995-99 Seasons (ed. by Ian Hodders), Published by McDonald Institute for Archaeological Research, Series: McDonald Institute Monographs.
- Cirlot J.E. 2001.** *A Dictionary of Symbols*, London.
- Enoch J.M. 2007.** Archeological optics: the very first known mirrors and lenses, *Journal of Modern Optics*, Vol. 54, № 9, 1221-1239.
- Friedrich J. 1924.** Der hethitische Soldatencid, *Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie*, 161-192.
- Garcia-Ventura A. 2014.** Constructing Masculinities through Textile Production in the Ancient Near East, in *Prehistoric, Ancient Near Eastern and Aegean Textiles and Dress. An Interdisciplinary Anthology*, M. Harlow, C. Michel and M.-L. Nosch (eds.), *Ancient Textiles Series 18*, Oxbow Books, Oxford, 167-183.
- Hodder I. 2004.** Women and Men at Çatalhöyük, *Scientific American*, 290 (1), 76-83.

- Hoffner H.A.** 1966. Symbols for Masculinity and Femininity: Their Use in Ancient Near Eastern Sympathetic Magic Rituals, *Journal of Biblical Literature*, Vol. 85, No.3. (September 1966), 326-334.
- Hoffner H.A.** 1987. Paskuwatti's ritual against sexual impotence (CTH 406), *Aula Orientalis* 5, 1987, 271-287.
- Lilyquist K.** 2007. Reflections on Mirrors, *The Archaeology and Art of Ancient Egypt, Essays in Honor of David B. O'Connor*, *Annales du service des Antiquités de l'Égypte, Cahier No 36, Volume II*, 95-109.
- Marchetti N., Peker H.** 2018. The Stele of Kubaba by Kamani and the Kings of Karkemish in the 9th Century BC, *Zeitschrift für Assyriologie* 108(1), 81-99.
- Nemet-Nejat K.R.** 1993. A Mirror Belonging to the Lady-of-Uruk, in *The Tablet and the Scroll: Near Eastern Studies in Honor of William W. Hallo*, Bethesda, 163-169.
- Oettinger N.** 1976. Die Militärischen Eide der Hethiter. Studien zu den Bogazköy-Texten, Heft 22. Wiesbaden.
- O'Neill B.** 2011. Reflections of Eternity, An Overview on Egyptian Mirrors from Prehistory to the New Kingdom, online https://www.academia.edu/Documents/in/The_Mirror_in_Ancient_Egypt
- Orthman W.** 1971. Untersuchungen zur spätethitischen Kunst, Bonn.
- Papathanassoglou D.A., Georgouli Ch.A.** 2009. The «frying pans» of the Early Bronze age Aegean: an experimental approach to their possible use as liquid mirrors, in *Archaeometry* 51, 4 (2009) 658-671.
- Puhvel J.** 1991. Hittite Etymological Dictionary. Volume 3. Words beginning with H, Berlin and New York.
- Rova E.** 2008. Mirror, Distaff, Pomegranate and Poppy Capsule: On the Ambiguity of Some Attributes of Women and Goddesses, In *Proceedings of the 4th International Congress of the Archaeology of the Ancient Near East*, Vol. 1. The Reconstruction of Environment, Berlin, 557-570.
- Saunders N.** 2010. A dark light: Reflections on obsidian in Mesoamerica, *World Archaeology*, Vol. 33(2), 220-236.
- Schweig B.** 1941. Mirrors, in *Antiquity* 15(59), 257-268.
- Stol M.** 2016. Women in the ancient Near East, Boston/Berlin.
- Török L.** 2009. Between two Worlds. The Frontier Region between Ancient Nubia and Egypt 3700 BC-AD 500, *Probleme der Ägyptologie*, Volume 29.
- Yakar J., Taffet A.** 2007. The spiritual connotations of the spindle and spinning: selected cases from ancient Anatolia and neighboring lands, *Belkıs Dinçol ve Ali Dinçol'a Armağan, VITA, Festschrift in Honor of Belkıs Dinçol and Ali Dinçol*, 782-788.

- Vit J., Rappenglück M.A. 2016. Looking through a telescope with an obsidian mirror. Could specialists of ancient cultures have been able to view the night sky using such an instrument?, *Mediterranean Archaeology and Archaeometry*, Vol. 16, № 4, 7-15.
- Vorster L. 2016. The Badarian Culture of ancient Egypt in context: critical evaluation, PhD dissertation, University of South Africa online <https://pdfs.semanticscholar.org/bbb2/5fc381a5937629fb9e02c945abe15b91809c.pdf>
- Wason P.K. 2010. The Neolithic cosmos of Çatalhöyük, in *Religion in the Emergence of Civilization: Çatalhöyük as a Case Study* (edited by Ian Hodder), Cambridge, 268-299.

FROM THE HISTORY OF NEAR EASTERN MIRRORS

Keywords: mythology, mirror, women, Ancient Egypt, Ancient Mesopotamia, Pax Hethitica

Abstract

Emerging from the VII-VI millennia BC - the obsidian mirrors of Chatal-Höyük – and continuing their history in Ancient Egypt, Mesopotamia, the cultures of the Armenian Highlands of Asia Minor; the East Asian mirrors have come a long way towards development.

In archaic thinking, mirrors encapsulate several semantic areas: water as a connection with the (1) underworld, magic and divination, (2) metal as a symbol of art and fertility and (3) femininity, the latter displayed both negatively and positively. The mirror is widely represented in both early Near Eastern (especially Egyptian and Neo-Hittitian) iconography and written sources, which in the context of the reorganization of the cultural environment of the period allows a more or less clear idea of the role and significance of the mirror in archaic societies, including the Bronze Age culture of the Armenian Highlands.

Mirrors will become part of burial rite in the following centuries, and the above-mentioned semantic dimensions typical of a mirror will also be reflected in Armenian culture.

*Mariam Khanzadyan
Institute of Oriental Studies, Researcher
Department of Ancient Orient
mar.khanzadyan@gmail.com*

ԽԵԼԱՅԻ ԿՐՈՋ ԹԵՄԱՆ ՀԱՅ ԲԱՆԱԿՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՔԱՍՅԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ բանահյուսություն, շահարսայան սյուժե, կանացի կերպար, ծաղված շրջագայություն, խելացի կին, հավատալիք, փորձություն, պատում, հասարակություն, ընտանիք:

Համատարացիք

Դարավոր շփումների ընթացքում մերչավորարևելյան փարսածաշրջանի բանահյուսական ավանդույթից հայ վիպական բանահյուսություն են ներթափանցել մի շարք պայմանավիպական կերպարներ (Ալեքսանդր Մակեդոնացի, Խիկար Իսմապուր, Դանանդա Բահլուլ, Մոզոուն Իսմապուր, Հարուն ալ-Ռաշիդ, Լոխման Հերիմ և այլք): Նրանց շարքում իր ընդգրկումն թեմաներով ու կենցաղավարման փարսավածությանը առանձնանում է Իրանի Մեջյան հայրությունյան փրակալներից մեկը՝ Շահ Արաս Մեծը: Դեռևս իր կենդանության օրոք Շահ Արաս Իրանում և շրջակա երկրներում դարձել է բափառիկ զրույցների հերոս: Ինչպես վկայում է Համբարձում Առաքելյանը. «արևելքում, մահմեդական ազգերի մեջ երկու քաջավորներ այնքան հերոսացած են, որ նրանց հիշատակը մինչև այսօր ևս թնդում է և բոլոր հեքիաթների ու զրույցների մեջ շարունակ լսվում է նրանց անունը և զրեքի առապելական քաջագործությունները»¹: Այս փողիքը գրվել են ավելի քան հարյուր փարի առաջ: Խոսքը Շահ Արասի և Հարուն ալ Ռաշիդի մասին է, որոնց անվան շուրջ կուսված սյուժեները մինչ օրս շրջանառվում են ժողովրդական բանավոր ավանդության մեջ²:

Պատմական Շահ Արասի իդեալականացումն ու ժողովրդականությունը նպաստել է նրա վիպական կերպավորմանը: Եթե պատմական Շահ Արասը որպես պետական, քաղաքական գործիչ հանրահայտ էր, ապա նրա վիպական կերպավորումն իր ժողովրդականու-

¹ Առաքելյան 1911: 67-68:

² Խեմչյան 2008: 126:

թյամբ և սյուժեների տարածման լայն ընդգրկումով քնավ չի զիջում իր նախատիպին: Վիպական Շահ Աբասի պատումների առատությունը Հայաստանում ոչ միայն արևելյան բանահյուսական ավանդույթի ներթափանցման արդյունք է, այլև խարսխված է պատմական Շահ Աբասի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության և այն դժնդակ արհավիրքների հետ, որոնց ենթարկվեց մի ողջ ազգ: Հայ բանահյուսության շահարասյան սյուժեները բեմատիկ առումով քազմաքնույթ են, ժանրային պատկերը նույնպես ընդգրկում է: Բանահյուսական Շահ Աբասը հանդես է գալիս հրաշապատում և իրավատում հեքիաթներում, զրույցներում, ավանդություններում, զվարճախոսություններում: Պատումների մի զգալի քանակ ձևավորվել է իրական պատմական հիմքի վրա և արձագանքն է որոշակի պատմական իրադարձությունների, որոնք ավանդվել են նաև պատմիչների կողմից:

Հայ բանահյուսության որոշակի բեմաներ ու մոտիվներ աղերսվում են Շահ Աբասի անվան հետ: Ի քիվս այդ քազմազան բեմաների՝ կանանց ներկայացնող մի շարք մոտիվներ հանդես են գալիս որպես Շահ Աբասի՝ ծպտված շրջագայության անմիջական հետևանքներ: Տարածված մոտիվների խմբին են պատկանում՝

ա) անհավատարիմ և հավատարիմ կանանց մոտիվը.

բ) շահի ամուսնությունը հասարակ ծագումով մարդու (նախընտանիքի, գյուղացի, ջրաղացպան) խելացի աղջկա հետ (ATU 875)³.

գ) Շահ Աբասի կանանց և աղջկա վերադաստիարակության մոտիվը.

դ) Շահ Աբասի կողմից երեք քույրերի ցանկությունների գաղտնալսման մոտիվը.

ե) կինը՝ որպես տղամարդուն ոգևորող ու զորացնող անփոխարինելի անձ.

զ) Շահ Աբասն օգնում է աղքատ կնոջը: Վերջինիս մեղադրում են գողության մեջ և ձեռքը կտրում, ինչին հետևում է շահի արդարադատությունը.

³ Uther 2011: 494.

ե) Շահ Աբասը պայքարում է կանացի քամբասկոտության դեմ և այլն:

Որպես վիպական բանահյուսության կերպար՝ կինը հանդես է գալիս իր բնավորության բոլոր լավ ու վատ կողմերով: Կանացի կերպարների զարգացումն ու բազմազանությունը պայմանավորված է կնոջ՝ որպես հասարակության և ընտանիքի անդամի դերով: Վաղ շրջանի առասպելներում, հավատալիքներում և բանահյուսական սյուժեների հնագույն շերտերում կինը ներկայացվել է նստակյացության, հողագործության, մայր աստվածուհու և ընտանեկան օջախի հովանավորի գործառույթներով: Պլատոնը, առաջնորդվելով սարմատների օրինակով, պահանջում էր, որ իդեալական պետության մեջ աղջիկները նույնպես սովորեին ձիավարություն և տիրապետեին զենքին⁴, այսինքն՝ հասարակության երկու կեսերը պետք է հանդես գային հավասար իրավունքներով: Սակայն, ժամանակի ընթացքում տղամարդու դերի քարձրացմանը զուգահեռ, կնոջ դերը՝ որպես հասարակության անդամ, հետընթաց է ապրել: Պատմական զարգացումը, հասարակական ֆորմացիաները, կրոնական պատկանելությունը, աստիճանաբար նվազեցրել են կնոջ իրավունքները, սահմանափակել նրա գործունեության ոլորտը ընտանիքի մոր և կենցաղային պարտականությունների միջակայքում:

Մեր կողմից քննության առնված շահաբասյան սյուժեներում կանացի կերպարների դրսևորումները բազմազան են: Մուսուլմանական հասարակության մեջ կնոջ գործառույթները սահմանափակվել են ընտանիքի մոր և կենցաղային պարտականությունների սահմանում: Հայ իրականության մեջ կինն ավելի ազատ էր և հնարավորություն ուներ հանդես գալու որպես հասարակության անդամ: Պետք է նկատել, որ մուսուլմանական ժողովուրդների հարևանությունը, պատերազմներն ու ավարառությունները զգալի հետք են թողել հայ կնոջ կարգավիճակի վրա: Հենվելով տարբեր ազգերի բանահյուսական նյութի և մասնավորապես հայ վիպական բանահյուսության վրա՝ կարելի է տարբերակել կանացի կերպարների ազգային դիմագիծը:

⁴ Баранман 1990: 35.

Շահաբասյան տարածված հեքիաթային տիպերից մեկը՝ հավատարիմ և դավաճան կնոջ մոտիվով պատմամաշարը քննության առնելիս մենք առնչվեցինք մի հետաքրքիր փաստի, որն արձանագրվել է 1895 թ.՝ Լեմբորանում Թեյմուրբեկ Բայրամ Ալիբեկովի կողմից գրառված մի պատմում։ Բանահավաքը հավաստում է, որ սույն սյուժեն տարածված է բուրքերի ու բալիշների միջավայրում։ Հակադրությունների վրա կառուցված այս հանրահայտ սյուժեն տարածված է նաև ողջ մերձավորարևելյան տարածաշրջանում, ինչպես նաև հայերի մեջ⁵։

Վերոնշյալ տարբերակի առանձնահատկությունն այն է, որ բանասացը մասնավորեցնում է դավաճան կնոջ ով լինելը և բոլոր նրանց, ում վերաբերում էր Շահ Արասի հրամանը. «Շահ Արասը, յրավարարվելով Լեյլայի մահապատժով, իր գլխավոր վեզիր Ալահվերդի խանին պատվիրում է մահապատժի ենթարկել մայրաքաղաքում ապրող բոլոր մուսուլման կանանց, ներառյալ փոքրահասակ աղջիկներին՝ ցանկանալով նրանց փոխարինել հիանալի, բարի և գեղեցիկ վրացուհիներով»⁶։

Շահ Արասի դաժան հրամանը պայմանավորված էր այն փաստով, որ խորամանկ ու մեծ գարսկուհիները, խախտելով իրենց փակ կյանքի և շարիաթի օրենքները, դավաճանում էին ամուսիններից⁷։ Այս պատմումում Շահ Արասի նվաճողական արշավանքը Վրաստան արդարացվում է, և նրա վարած քաղաքականությունը դիտվում է որպես բարեգործություն. «... Շահ Արասն ազատում է պետական տուրքերի ու հարկերի վճարումից՝ անկախ ազգային պատկանելությունից ու դավանանքից, նյութական օգնություն է ցույց տալիս, մի խոսքով՝ թեթևացնում է յուրաքանչյուր հպատակի բեռը»⁸։

Շահ Արասի ծավոլված շրջագայությունները նրան հնարավորություն են տալիս շփվելու հասարակության բոլոր շերտերի հետ, տեղե-

⁵ Այս սյուժեն քննության է առնվել է. Խեմչյանի «Վանաճի հավատարմության և անհավատարմության հակադրությունը նայ բանահյուսության շահաբասյան սյուժեններում» հոդվածում (հանձնված է տպագրության)։

⁶ Բարսի Ա.Բ. (coct.) 1930: 250.

⁷ Ibid.: 252.

⁸ Ibid.: 251.

կանալու նվաճված ազգերի վիճակի ու կենսակերպի, երկրի անցու-
դարձի ու խնդրվող տրամադրությունների, անարդարությունների ու
խնդրահարույց իրադարձությունների մասին: Ի բիվս բվարկված
խնդիրների՝ Շահ Արասն ուշադրություն է դարձնում նաև կանանց և
հատկապես գեղեցիկ կանանց ու առիթը բաց չէր բողոնում իր ցանկու-
րյուններին հազուրդ տալու: Չաքարիա Սարկավազը նույնպես
անդրադարձել է այս հարցին. «Լուարուք և զայս, զի ազգն Պարսից
վասն վավաշուտ և բորբորիտ ցանկութեան իրեանց՝ շնան ընդ որս որ
կարողանան անխտիր. բայց եթե որ ընդ կանայս նոցա հայի, մեղք է՝
ասեմ, և ամօք և նախատիմք ևս: Թէ որ մեծաց զի նոցանէ գնաց
ուրեք կնա իրով, և հրամայէ պնդապահս առնել ՚ի ճանապարհին,
այսինքն՝ գատաղայ, զի մի որ երևեցի՝ մինչև անցանի կին իր: Այս-
պես առնէր և բազատրն Շահ-Արաս. զի յորժամ կամէր շրջել կա-
նամք և հարճի, յառաջագոյն գատաղայ առնէր՝ ոչ երևիլ որ
արանց...»⁹: Չաքարիա Սարկավազն ընդգծել է այն հանգամանքը,
որ Շահ Արասը ոչ միայն ոչնչով չէր տարբերվում իր ազգակիցներից,
այլև իբրև միապետ՝ ավելի հանդուգն պահվածք էր հանդես բերում:
Բանահյուսական սկզբնաղբյուրներում շահի վարքագիծը մեկնա-
բանվում էր հետևյալ կերպ. «Բայց Շահ Արասը շատ շոռայք էր, որ-
տեղ մի սիրուն կին ու աղջիկ էր տեսնում, տանում էր իր հարեմը»¹⁰:
Ծպտված լինելու հանգամանքը և վեզիրի զգուշացումները չեն կա-
սեցնում նրան. «Վեզիրը ասում է. «Արքա՛, ախր մենք դերվիշ ենք,
եթե էղպես բան ասեմ քեկին, քեկը մեզ կմորթի: Իսկ եթե հայտնեմ
մեր ով լինելը, մեր այստեղ գալու նպատակը չենք կարող կատա-
րել»¹¹: Եթե կինը քարձր դասի ներկայացուցիչ էր, ապա շահը ստիպ-
ված էր լինում հաշվի գատել ազդեցիկ ծնողների ու հարազատների
հետ, եթե կինը ցածր դասի, ենթակա մարդու կին կամ աղջիկ էր կամ
էլ որբևայրի, ապա շահը բացահայտում էր իր անձը, որ հեշտությամբ
իր ցանկությունն ի կատար ածի:

⁹ Չաքարիայ Սարկավազ 1870, I: 37.

¹⁰ «Շահ Արասի որդին», ՀԱԽՐԱ, FFX: 8373,01-8406,00, Բանահավաք՝ Ան. Հովակի-
մյան, բանաստեղծ պաշկեբուցի Վ. Սամոյան, զրատվել է 1973 թ.՝ Երևանում:

¹¹ Ibid.

Ահա այսպիսի ծայրահեղ հանգամանքներում ի հայտ է գալիս կնոջ խելացիությունը: Բանահյուսական սկզբնաղբյուրներում խելացի կնոջ վարքագիծը դրսևորվում է մի քանի տարրերակներով:

ա) Բացահայտված Շահ Արասի ներկայությունը չի վախեցնում կնոջը, նա փորձում է ներբանկատորեն շահին հասկացնել, որ նրա պահվածքը սխալ է, քայց արդյունքի չի հասնում և ի վերջո տուն մտած ամուսնուն ուղղված հարցադրումով սրավեցնում է շահին. «- Մարթ ջան,- ասըմ ա,- միսը ֆոտի, աղը չի տեղը, քա որ աղը ֆոտի՝ ի՞նչը չի տեղը»¹²: Մի այլ տարրերակում նույն արտահայտությամբ որբևայրի հայ կինը հասկացնում է քազավորին, որ եթե հանցանքը քազավորն է կատարում, ո՞ւմ արդարադատության վրա պետք է հույս դնեն նրա հպատակները. «- Իմ քազավոր, անճար իմ, քեչար իմ, ի՞նչ ճար, միս հոտի, ճարը աղն ի, ապա որ աղ խոտի, ի՞նչ ի ճարը»: Շահ Արաս կնգա իսա խելացի խարքի վերեն պաց կը թոնի կնգան»¹³:

Շահ Արասը հասկանում և գնահատում է կնոջ խելացի խոսքը և հրաժարվում իր մտադրությունից: Որոշ սյուժեներում կինը ոչ միայն խոսքով, այլև կոնկրետ գործողություններով ու համեմատություններով է զինաթափում Շահ Արասին: Ազուլիսյան մի տարրերակում¹⁴ ծպտված շահը փորձում է գայթակղել հայ դարբնի զեղեցկուհի կնոջը: Կինը հյուրասիրության համար շահին հրամցնում է տարրեր գույններով ներկված ձվեր, ստիպում է թղլոր ձվերն ուտել և հարցնում է, քե համային ինչ տարրերություններ ունեն դրանք և ստանալով «բղլորն էլ նույն համն ունեն» պատասխանը, հյուրին հասկացնում է, որ տարրեր հագուստներով և տարրեր դասի կանայք նույնպես տղամարդուն միևնույն հաճույքն են պատճառում:

Շահ Արասի վիպական կերպարի այս նրբերանգները ոչ միայն ժողովրդական պատումներով են ավանդվել, այլև քազմաքիվ օրի-

¹² «Շահն ու նամուսով հարսը», ՀԱԻՔԱ, Մուշեղ Հակոբյանի ֆոնդ, «Լուսա քանահյուսություն», № 5 քոչապանակ, քանասաց՝ Մանդրո թրամազյան, Ալավերդու շրջանի Ռզումբար գյուղ, 1978 թ.:

¹³ ՀԱԻՔԱ, ԲԲԻ: 5863,02-5867,00, Գրառել է Սենեքերիմ Շալքյանը 1937 թ.: երևանում, Վանի քարառով, քանասացն անհայտ է:

¹⁴ Լամալանյան 1969: 292-293 (№ 760 Ա, «Շահ Արաս»):

նակներով մուտք են գործել պատմագրության մեջ, քեւ պետք է նկատել, որ պատմագիրներն էլ հաճախ օգտագործել են ժողովրդի մեջ շրջանառվող պատումներ: Խելացի կնոջ պահվածքի, խոսքի, դատողությունների գնահատման յուրօրինակ դրսևորումն է ներկայացված Ջաքարիա Սարկավազի «Պատմագրության» «Արայի տուն շահի այցելելը» գլխում. «Եւ լուա Դ նոցանէ քան իմաստութեան և հաճելի և հաւանելի: Խօսէր երբեմն ընդ առն, և երբեմն ընդ կնոջն. և ուրոյն ուրոյն լսէր պատասխանի պատշաճաւոր և կարի խելացի»¹⁵: Հովիվ Աբան իր կնոջ ճիշտ պահվածքի, խելացի դատողությունների, անծանոթին և օտարին պատշաճ հարգանքով ու հյուրընկալության սրբազան օրենքներով ընդունելու միջոցով վաստակում է Շահ Աբասի վստահությունը և մելիքություն ստանում: Միննույն ժամանակ այս պատումը ցայտուն օրինակ է հայ կնոջ ազատ ու անկաշկանդ գործելակերպի, յուրայինների և օտարների հետ շփվելու ուրոյն ճշակույթի անկայության, որը բացահայտում է կնոջ վարքագծի հասարակական դրսևորումների տարատեսակներից մեկը:

բ) Շահաբասայան պլուծներում մեծ տեղ են գրավում խնդիր-հանձնարարականները, որոնց միջոցով Շահ Աբասը փորձության է ենթարկում իր ստորադրյալներին և գնահատում նրանց մտավոր կարողությունները: Նա համոզված էր, որ խնդիր-հանձնարարական ստացողն ի գորու չէ այն վճռել: Պատումների մի խմբում խնդիր-հանձնարարականը հետևյալն է՝ առաջին տարբերակում Շահ Աբասն իր վեզիրին ասում է. «... առ էս իրեք մանեք փողը, կտանես ինձ հմա մի հատ դոշ կառնես, փողն էլ ետ կբերես, դոշն էլ սաղ ետ կբերես, դոշից էլ էրկու շամփուր միս կբերես»¹⁶: Երկրորդ տարբերակում շահը հանձնարարությունը տալիս է ռանչպարին. «Վերցնես տանես իմ դոշին, մի շամփուր խրոված կպիրես, մի հատ ծիի գյարթա, մի հատ խուրջին ու իմ դոշն էլ սաղ կպիրես»¹⁷:

¹⁵ Ջաքարիայ Սարկավազ 1870, I: 25:

¹⁶ «Շահողի Շահաբասի», № 35, ՀԱԲ 1999, 106:

¹⁷ ՀԱԲԱԱ, FEI: 8987-9001, քանակավոր՝ Է. Խեմչյան, քանակաց՝ Ավետ Մկրտչյան, Շամշադինի շրջանի Ներքին Կարմիրաբյուր գյուղ, 1985թ.:

Հանձնարարություն ստացողները դեզերումների ընթացքում հանդիպում են նախընտրյալ, սյուժեի հետագա ընթացքը կառուցված է այլաբանական հարց-հանելուկների վրա, որոնց բարձրված իմաստը նախընտրյալ չի հասկանում և իր աղջկան պատմում է, որ ճանապարհին հանդիպել է «սարսաղ, գիծ» մարդու: Աղջիկը հորը բացատրում է այլաբանական հարցերի իմաստը: Թե՛ վեզիրը և թե՛ ոսնչալարը հասկանում են, որ իրենց խնդրի լուծումը նախընտրյալ աղջիկը կարող է տալ, որովհետև նա հեշտությամբ գլուխ է հանում այլաբանական հարցերից: Եվ իսկապես, աղջկա օգնությամբ լուծված խնդրով նրանք վերադառնում են բազավորի մոտ, սակայն բազավորը հասկանում է, որ նրանք չեն լուծել խնդիրը ու պահանջում է ներկայացնել խնդիրը լուծողին: Պարզվում է, որ խնդիրը նախընտրյալ աղջիկն է լուծել: Ո՛չ աղջկա շնորհիվ և ո՛չ էլ սոցիալական ցածր դիրքը չեն խանգարում շահին, և նա առաջարկում է աղջկան քերել իր համար, սակայն աղջիկը պահանջում է, որ շահն անձամբ գա իր հետևից: Շահն աղջկան բերում է պալատ և ըստ պատմի՝ «... ոչ մի քնել, ոչ մի էլնել», նրան փորձության ենթարկելու համար խնդիր-հանձնարարական է տալիս. «Ես ֆրոնտ եմ գնում, կյան տանամ ինձանի մի տղա, էս ծիուցն էլ մի քուռակ իմ համան ծիխ, մի քիսա ոսկի իմ փեշատը վրեն»¹⁸, մյուս տարբերակում՝ «- Աղջի, ես քեզ կտամ մի դադր շուն, մի մաղեան ձի, քեզանե կուզեն ազափ աղջիկ ըլիս, բայց մի տղա, շանիցը՝ մի ջուխտ քուլա, ձիուցը՝ մի քուռակ: Ես գընըմ եմ խրիտ՝ տասը տարով»¹⁹ (ATU 875): Անիրագործելի խնդիր-հանձնարարականը տալով՝ բազավորը հեռանում է՝ իր հետ տանելով շանը և ձիուն: Այս հանձնարարությանը նա ցանկանում է ընդգծել տղամարդու առավելությունը կնոջ նկատմամբ, որևէ քան անելու կնոջ սահմանափակ իրավունքները: Կինը կարող է գործել իր տան սահմաններում, բացառիկ դեպքերում քնակավայրի սահմաններում: Ժամանակը, հեռավորությունը և շփման անհնարինությունը խնդիրը դարձնում են անլուծելի: Երկար խորհելուց հետո աղջիկը գտնում է խնդիրը լուծելու ձևը: Նա տղամարդու հազուստով ծալոված հետևում է շահին, հանդիպում է նրան

¹⁸ ՀԱԻՌԱ, FEI: 8987-9001:

¹⁹ ՀԱԻՐ 2000: 108:

և առաջարկում ժամանակ անցկացնելու համար խաղալ (մի տարբերակում՝ նարդի, մյուսում՝ բրթախաղ): Խաղացողները պայմանավորվում են հաղթանակի և պարտության պայմանները: Աղջիկը հաղթում է և ամեն հաղթանակից հետո, ըստ նրա պահանջների, թագավորի ձին, շունը մեկ գիշեր մնում են աղջկա մոտ, թագավորը մի քիսա ոսկի է պարտվում: Վերջին խաղի պայմանով՝ հաղորդը քեֆ է կազմակերպում, և աղջիկը գիշերն անց է կացնում թագավորի հետ: Տարիներ անց թագավորը վերադառնում է և տեսնում, որ իր համձնարարությունները կատարված են, նա կասկած է հայտնում, քայց կինը ներկայացնում է համապատասխան ապացույցներ: Շահ Աբասը համոզվում է, որ կին արարածն իր խելացիությանը կարող է առավել լինել տղամարդուց:

Նախքոյու խելացի աղջկա մասին պատումների շարքում մի ինքնատիպ սյուժե ևս կա: Շահ Աբասն իր պետական գործերն ու դատերը վարելիս միշտ խորհրդակցում է նախքոյու աղջկա հետ, քայց պալատական սաղրանքներին անսալով՝ վեզիրին կարգադրում է նախքոյու աղջկան հետ տանել հոր տուն: Շահ Աբասն անարդար դատ է վարում և էգ ձիու գիշերը ծնած քուտակը հատկացնում է որձ ձիու տիրոջը, որովհետև քուտակը կանգնած է լինում որձ ձիու մոտ: Նախքոյու աղջկա խորհրդով տուժած ձիատերը Շահ Աբասի ճանապարհի վրա, չոր տեղում ուռկան է գցում՝ իբր ձուկ է որսում (ATU 875 III): Շահը հետաքրքրվում է, թե նա ինչ է անում և ծիծաղում է ու քացատրում, որ ձուկը ձուլում է լինում, որին ի պատասխան կեղծ ձկնորսն ասում է. «... պա վըերձ ձիանը քոռոակ ա՞ ինիս»²⁰: Շահը գլխի է ընկնում, որ այդպիսի խելացի խորհուրդ միայն նախքոյու աղջիկը կարող է տալ և հասկանում է, որ. «... նախքոյուն ըղջիկյան կարիքը ալլա ին պալատը օնի: Էն հալա մըզ շատ պետքի կգյո»²¹:

Շահաբասյան սյուժեներում որպես օրինաչափություն խելացի աղջիկը կամ կինը նախքոյու, ռանչաբարի, գյուղացու աղջիկ կամ կին է, ըստ որում՝ աղջկա աչքերը պարտադիր շիլ են: Կամացի խելացիության քեման անշուշտ ծագումնաբանորեն ավելի վաղ շերտերից է

²⁰ «Տրվարածեն աղջիկը».- Հովսեփյան 2009: 252:

²¹ Ibid.

փոխանցվել: Կնոջ անմիջական կապը քնության հետ, օջախի պահպանության խնդիրները, հողագործական մշակույթի ակունքներում կանգնած լինելը մրագնված կերպով պահպանվել է հետագա դարերի քանահյուսական ստեղծագործությունների մեջ: Կարծում ենք, որ կնոջ շլության հարցը ևս խորքային արմատներ ունի, որը հետագայում պարզ քացատրություն է ստացել. «Ասեց.- Էս բուխարին ծուռ ա: Այսինքն՝ աչկերը շիլդիկ ա էլի՝ տենըմ չի: Ասեց.- Տու բուխարում ի՞նչ էս մտիկ անըմ, տու ծուխ քաշիլին մայի»²²: Շլությունն առանձնահատկություն է, որով խելացի կինը տարբերվում է միօրինակ և, կարելի է ասել, սահմանափակ մտահորիզոնով կանանցից: Նա, քես շիլ, նկատում է ամեն ինչ, այսինքն՝ շլությունը նրան հնարավորություն է տալիս մայել բոլոր ուղղություններով և ավելի շատ տեղեկություն ստանալ շրջապատող աշխարհից, որը վերլուծելով՝ նա հանգում է ամենաճիշտ և կատարյալ տարբերակին: Փաստորեն, հասարակ մահկանացուի կերպարանքի տակ թաքնված է հզոր մտավոր կարողությամբ օժտված մեկը, որի համար գոյություն չունեն բարդ և անլուծելի խնդիրներ, որը մտավոր մրցամարտում կարող է պարտության մատնել նաև խելացիության անառարկելի տիպար համարվող տղամարդուն:

Ակնհայտ է, որ կնոջ դերն ընտանիքում և տղամարդու կյանքում անփոխարինելի է, նրա այդ առանձնահատկության շուրջ վիպական քանահյուսության մեջ ստեղծվել են բազմաթիվ սյուժեներ: Հայ ժողովրդական ասացվածքն ասում է. «Կնիկը որ կա՝ մարդու կյանքն ա»²³:

Առօրյա կյանքում կնոջ վարքագծով էր պայմանավորված ընտանիքի ու ամուսնու քարեկեցությունն ու տղամարդու աշխատունակությանը գորավիզ լինելու կանացի կարողությունը: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ ռազմադաշտում կամ օտարության մեջ գտնվող տղամարդուն սատարելու համար կանայք պահպանում էին

²² ՀԱՍՈՒ, FEI: 8987-9001:

²³ Կանալանյան 1960, LXVIII:

մի շարք հմայական արգելքներ²⁴, որոնք հեռավորության վրա օգնում էին տղամարդուն իր գործունեության մեջ: Այս հնագույն սովորույթներին ու հավատալիքների արձագանքը պահպանվել է շահաբասյան սյուժեներում: Ծպտված Շահ Աբասն ականատես է լինում, քե ինչպես է հողագործի կինը կտուրին արևի ու անձրևի տակ ճախարակ մանում ու ցանկանում է հասկանալ նման վարմունքի պատճառը: Հողագործի կինը բացատրում է. «-Դուվրիչ քարա, մենք որ օրին որ իրար հանդիպել ենք՝ տա դաշտընն և արևըն, անձրևըն տուժվըն, ես էլ վիրևը պետք ատուժվեմ, որ մենք գիղենանք, մենք իսկապես հնգեր ենք և իրար հետ էլ ապրիլ դենք, տնտեսության տեղ տառնալ»²⁵: Շահ Աբասը հիանում է կնոջ խելացի ու անճնուրաց պահվածքով և իր երեք անպետք կանանց փոխանակում է հողագործի կնոջ հետ՝ նպատակ ունենալով փորձի միջոցով հասկանալ կնոջ վարքագծի տվյալ դրսևորման արժատներն ու պատճառները: Փորձառության մեկ այլ տարբերակ էլ ներկայացված է կինը որպես տղամարդուն զորություն ու ոգևորություն հաղորդող ուժ մոտիվի շուրջ վիպված հեքիաթաշարում:

Շրջագայությունների ընթացքում Շահ Աբասն ականատես է լինում շինարարության վրա աշխատող մի մեծահասակ մարդու եռանդուն աշխատանքին և զարմանում, քե նա ինչպես է աղյուսները վարպետորեն նետում երկրորդ հարկում աշխատող պատշարին (տաքք՝ հինգերորդ հարկ) և ցանկանում է հասկանալ այդ զարմանահրաշ ուժի գաղտնիքը²⁶: Պարզվում է, որ գաղտնիքը շինարարի կնոջ մեջ է, մյուս տարբերակում՝ Շահ Աբասն ինքն է հասկանում, որ կնոջ սիրտ ուժն է շարժման մեջ դնում շինարարին: Իր կարծիքը հաստատելու համար Շահ Աբասը գրագ է գալիս վեզիրի հետ և հրամայում է, որ շինարարն իր կնոջը տանի պալատ և հանձնի թագավորին:

²⁴ Ֆրեզեր 1989: 35-36:

²⁵ «Շահ Աբասն ու շուրջին», № 90(90), ՀԱԹ 2008, 227:

²⁶ «Կնգա հունարք», ՀԱԽՐԱ, FFV: 0239,01-0241,00, քանահատկար՝ Ա. Կարապետյան, քանատես՝ Ս. Օրդյան, Իջևանի շրջան, Թալա գյուղ, 1961 թ.: «Կնգա Էլիք», № 38(38), ՀԱԹ 2000, 133-134:

Շահաբայան սյուժեներում Շահ Աբասի կերպարի առանձնահատկություններից մեկը տարբեր առիթներով փորձատուրյուն կատարելն է, որի նպատակն է տվյալ երևույթի էությունը բացահայտելը: Այս պարագայում ևս Շահ Աբասը ցանկանում է փորձի միջոցով ստուգել կնոջ խելքի ու պահվածքի ազդեցությունը տղամարդու վրա: Միաժամանակից հետո շահն ու վեզիրը կրկին ծալոված գնում են շինարարության տեղը, աղետալի պատկեր տեսնում և մարդուն հարցնում պատճառը. «- Տղեք ջան, ի՞նչ ասեմ, թաքավորի տունը աստոծ բանդի, մի կնիկ ունի,- ասըմ ա,- ևս նրա էշխովը ապրի, պան անի, էն էլ էկավ տարավ, վըենչ ուտիլըս եմ գիղըմ, վըենչ քնիս եմ գիղըմ, վըենչ աշխատիլս եմ գիղըմ, ինձ կորցրած մարթ եմ, ասըմ ա,- մթամ ևս գիղըմ ե՞մ էտ քյարվիչը դվորն եմ քցըմ»²⁷:

Առանց կանացի սիրո ու հոգատարության մնացած տղամարդը նմանվում է «անջուր ջրաղացի», որը զրկված է հիմնական շարժիչ ուժից:

Քննության ենթարկված սյուժեներում կանացի խելացիության նկատմամբ Շահ Աբասի թերահավատությանը զուգահեռ առկա է նաև զգուշավորությունը, այսինքն՝ նա առանց դիմացիներն փորձության ենթարկելու վերջնական կարծիք չի կազմում: Ուստի շահաբայան պատումներից մեկն ավարտվում է հետևյալ եզրահանգմամբ. «Ա՛յ, էդպիսի, վըենց վըեր ասած բարեխիղճ թաքավոր ա եղել, վըեր նա իրան աչկովը տեսել ա, անգաճովը լսել ա, նոր արել»²⁸:

Շահ Աբասը մեկ անգամ ևս փորձով համոզվում է, որ կինն ի քնն խելացի արարած է և նրա դիտողականությունից, հետևություններ անելու կարողությունից, կյանքում ամեն ինչը հավասարակշռելու, տղամարդուն ոգևորելու և աջակցելու պահվածքից շատ բան է կախված:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Շահ Աբասը մեղավոր կանանց պատժում է, իսկ խելացի կանանց փորձության է ենթարկում՝ համոզվելու համար, որ իրոք նրանք կարող են խելացի լինել: Հայ բանահյուսական մի շարք սյուժեներում բացահայտ ընդգծվում է

²⁷ «Կյնգա էշխը», № 38(38), ՀԱԲ 2000, 133-134:

²⁸ Ibid.

կնոջ առավելությունը շահի նկատմամբ, և մտավոր մեծամարտում շահը պարտություն է կրում:

Կնոջ խելացիությունը, անբասիր վարքը, խնդրահարույց իրավիճակներում կողմնորոշվելը, թվացյալ անլուծելի հարցերին հավասարակշռված ու ինքնատիպ լուծումներ տալը, անձնուրաց նվիրումն ընտանիքին ու ամուսնուն նրան դարձնում են անխոցելի պատվար ու աներեր հիմք ընտանեկան կառույցի համար: Այս առանձնահատկություններով կինը առողջ հասարակության ոչ միայն կարևորագույն օղակն է, այլև համակարգողն ու որոշակի ծանրություն կրողը:

Կանացի թեմայի առկայությունը հայ բանահյուսության շահարասյան սյուժեներում լրացնում է այն առանձնահատկությունների շարքը, որոնց միջոցով բացահայտվում է վիպական Շահ Արասի կերպարը: Ինչպես ծպտված աշխարհատեսությունը, ի վերուստ կանխորոշված ճակատագրին ընդդիմանալը, այնպես էլ կանացի թեմայի բազմազան դրսևորումները դարձել են շահարասյան սյուժեների անբալկտելի մասը և ամբողջացնում են Շահ Արասի կերպարը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Առաքելյան Հ. 1911.** Պարսկաստանի հայերը, Վիեննա:
- Չաքարեայ Մարկազ 1870.** Պատմագրություն, հ. I Վաղարշապատ, Ի սուլթանի Սրբոյ Կարողիկէ Էջմիածնի:
- Խեմչյան Է. 2008.** Շահ Արասի կերպարը հայ վիպական բանահյուսության մեջ, Հայագիտական և իրանագիտական առաջին միջազգային գիտաժողովի նյութեր, Սպահանի համալսարան, Սպահան, էջ 125-143:
- ՀԱՔ 1999.** Հայ ազգագրություն և բանահյուսություն, կազմող՝ Գևորգյան Թ., Լոռի, հ. 20, Երևան:
- ՀԱՔ 2000.** Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Տավուշ, կազմող՝ Խեմչյան Է., Երևան:
- ՀԱՔ 2008.** Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, Իջևան (Չորրփոր), կազմող՝ Խեմչյան Է., Երևան:
- Հովսեփյան Հ. 2009.** Ղարաղաղի հայերը, Բանահյուսություն, հ. II, կազմողներ՝ Վարդանյան Ս., Խեմչյան Է., Երևան:

Ղանադանյան Ա. 1960. Առածանի, Երևան:

Ղանադանյան Ա. 1969. Ավանդապատում, Երևան:

Չրիզեր Ջ. 1989. Ոսկե ճյուղը, Մոզուրյան և կրոնի ուսումնասիրություն,
Երևան:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱԻԲԱ, FEI: 8987-9001- Էսթեր Խենյանի ֆոնդ

ՀԱԻԲԱ, FFI: 5863,02-5867,00 - Խաղը ֆոնդ

ՀԱԻԲԱ, FFV: 0239,01-0241,00 - Խաղը ֆոնդ

ՀԱԻԲԱ, FFX: 8373,01-8406,00 - Խաղը ֆոնդ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԱԲ – Հայ ազգագրություն և քանահյուսություն:

ՀԱԻԲԱ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի քանահյուսական
արխիվ:

ATU – Aarne-Thompson-Uther.

THE THEME OF A SMART WOMAN IN SHAH ABBAS PLOTS OF ARMENIAN FOLKLORE

Keywords: folklore, Shah Abbas stories, female image, disguised journey,
smart woman, belief, test, story, society, family.

Abstract

A significant part of the Shah Abbas stories of Armenian folklore is based on motifs regarding women. The article examines those plots in which the woman's mind, observation, ingenuity, her ability to cleverly understand hopeless situations and unsolvable tasks-recommendations are revealed. As a regularity - smart women represent the rural community (the daughter of a shepherd, wife of a farmer, wife of a builder, etc.) and as a mandatory and distinguishing feature - they are also cross-eyed. In one group of stories Shah Abbas, evaluating the intellect of the shepherd's daughter and not taking into account her lower social background marries her and puts her to a test, setting an almost impossible task for which the woman gives a unique solution.

In one group of options, a smart woman indirectly corrects Shah Abbas's rash and erroneous decisions, in another group, with a clever word she keeps him from immoral actions, while at the same time affirming the smart woman's unconditional place in society, and sometimes also her advantage over a man.

Observations show that if Shah Abbas punishes guilty women, then he tests smart ones to make sure that they can really be smart. A variety of identifications of the female theme became an indissoluble part and made the epic image of Shah Abbas integral.

Ester Khemchyan
Institute of Archaeology and Ethnography NAS RA
Department of Theory and History of Folklore
ekhemchyan@yandex.ru

ՀԱՄՄԿ ՀՄՅԱԿՅԱՆ
պ.գ.թ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Էլ. փոստ՝ hhmayakyan@yahoo.com

**ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԵԹԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Բանալի բառեր՝ կին, հարսանիք, ամուսնություն, ամուսնալուծություն, խեթեր, Ինամդըք, անասնապղծություն, դավաճանություն, մեքճամուսնություն, խեթական օրենքներ:

Համատոգագիր

Հողվածուս ներկայացված են խեթական հասարակությունում ամուսնության, հարսանիքի հեղի կապված ավանդույթները և իրողությունները, ամուսնալուծության հարաբերություններում կանանց ունեցած դերն ու իրավունքները, ջնջման կան դավաճանության, անասնապղծության դեպքում կիրառվող պատիժները կանանց և տղամարդկանց համար: Չուզահեռարար ներկայացվում են հայկական ազգագրական նյութերը, միջնադարյան հայաստանյան օրենքներն ու պատկերացումները ամուսնալուծության հարաբերությունների մասին, որոնք համախառնաբար զուգահեռներ են հանդես բերում խեթական իրողությունների ու պատկերացումների հեղի: Սա հավանաբար պայմանավորված է նաև հայ-խեթական հնարավոր վաղելի փոխազդեցություններով, որոնց արչագանքը, ամենայն հավանականությամբ, ենթաշերտային կերպով պահպանվել է հայ ժողովրդի ծխակենցաղային ավանդույթներում ու սովորույթներում:

Խեթական հասարակությունում կինը շատ կարևոր դերակատարում ուներ սոցիալ-քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում: Տարբեր տարիքներում կինը տարբեր գործառույթներ էր իրականացնում և տարբեր անվանումներով էր հանդես գալիս խեթական տեքստերում: Խեթերն առանձնացնում էին կանանց տարիքը և դիրքը, կինը խեթական տեքստերում մշվում էր հետևյալ գաղափարագրերով՝ MUNUS, աղջիկը՝ DUMU.MUNUS, աղջիկ երե-

խան՝ DUMU.MUNUS.GABA, ծեր կամ տարեց կինը՝ MUNUS.ŠU.GI, իսկ ստրկուհին՝ GÊME¹:

Իհարկե, կնոջ ամենակարևոր դերակատարումներից մեկն էլ ամուսնանալն ու ընտանիք կազմելն էր, երիտաներ ունենալը: Խեթական ամուսնությունները մի քանի տիպի են՝

ա) ամուսնություններ հասարակության միևնույն սոցիալական խմբերի՝ արքայական, միջդինաստիական և հասարակ ժողովրդի ներկայացուցիչների միջև.

բ) քրմական և սրբազան ամուսնություններ:

Հասարակ ժողովրդի անդամների միջև կայացող և միջդինաստիական ամուսնությունները տեղի էին ունենում գրավոր և քանավոր պայմանագրերի միջոցով, սրբազան ամուսնությունները կրում էին ծիսական բնույթ, միտված էին երկրի բարօրության վերահաստատմանն ու ամրապնդմանը, պտղաբերության հաստատմանը²:

Պահպանվել են թագավորական ընտանիքների և միջդինաստիական ամուսնությունների մասին որոշ պայմանագրեր, իսկ ստորին խավերի միջև տեղի ունեցող ամուսնությունների հարսանեկան պայմանագրեր գրեթե չեն պահպանվել կամ պահպանվել են պատտիկներ³:

Հասարակ ժողովրդի անդամների միջև կայացող ամուսնությունների մասին պատկերացում է տալիս խեթական օրենքների ուսումնասիրությունը: Դրանք ընթանում էին մի քանի փուլերով: Սկզբում ծնողները նախնական պայմանավորվածություն էին ձեռք բերում, ընդ որում՝ չնայած աղջկան ամուսնացնելու հարցը որոշում էր հայրը, սակայն որոշ դեպքերում մայրը ևս իրավունք ուներ ամուսին ընտրելու դատեր համար, ինչը բացառիկ իրավունք էր այդ ժամանակաշրջանի իրողությունների համար⁴: Առաջին փուլը քանավոր խոսք առնելն էր, երկրորդ փուլում փեսայի կողմը հարսի համար վճարում է «կուսաստ»՝ վարձագին, իսկ երրորդ փուլում բուն ամուսնությունն

¹ Wilhelm 2009: 227.

² Pringle 1993: 356-359.

³ Ibid.: 297.

⁴ Roth 1997: 220-21.

եր⁵, որից հետո տղամարդը կնոջը «վերցնում էր» իր տուն՝ քառիս բուն իմաստով, և կինն արդեն պատկանում էր այդ տղամարդուն և չէր կարող ինքնակամ հեռանալ⁶: Հեռանալիս հայրական տանից աղջկան տալիս էին օժիտ՝ *iwaru*⁷: Այնուհետև տեղի էր ունենում բուն հարսանիքը, որի նկարագրությունը չի պահպանվել որևէ տեքստում:

Հարկ է նշել, որ եթե համեմատություն անցկացնենք, օրինակ, հայկական իրականության հետ, ապա ամուսնության փուլերը ընթացում էին նույն տրամաբանությամբ և հերթականությամբ, և այդ երևույթները կենդանի են եղել հայկական գյուղերում մինչև 20-րդ դարակիզը: Հետաքրքրական է, որ մանկահասակ աղջկան խոստանալու երևույթը, որ առկա էր հայկական սովորույթներում⁸, եղել է մահ խեթական հասարակության մեջ, երբ շատ վաղ տարիքից աղջկան կարող էին խոստանալ, սակայն, այս հարցն առանձին ուսումնասիրության խնդիր է, և այստեղ չենք մանրամասնի:

Հայկական սովորույթներում, որը գրեթե նույնական է խեթականին, վերականգնվում է հետևյալ հերթականությունը.

1 Խոսք առնելը, երբ տղայի կողմից քահանայի հետ երկու-երեք ազգականներ գալիս են աղջկա տուն և խնդրում ձեռքը:

2 Եթե աղջկա կողմի համաձայնությունը կա, ապա այս անգամ տղայի հայրը ազգականների հետ գալիս է աղջկա տուն և այս փուլում վճարում առաջին խալանը՝ 5-7 օսմանյան ոսկի:

3 Հաջորդ փուլը նշանդրերն է:

4 Մյուս անգամ հանդիպում են և վերջնական խալանն են տալիս հորը, այնքան, որքան մա պահանջում է: Իր հերթին աղջիկն էլ տանում է օժիտ, որ հաճախ գնվում է հենց վճարված խալանով:

5 Հաջորդը բուն հարսանիքն է, որի քոլոր փուլերը մանրամասն պահպանվել են մեր ազգագրական նյութերում⁹:

⁵ Hoffner 2003: 95-118.

⁶ Imparati 1995: 572.

⁷ Hoffner 2003: 108.

⁸ Այս մասին աստիճան մանրամասն տե՛ս **Շազգյան** 2011: 27-28:

⁹ Տե՛ս, օրինակ, **Քենսեթ** 1901: 88-100: Այս գործընթացի առավել մանրամասն նկարագրությունները տե՛ս **Շազգյան** 2011: 43-135:

Խեթական տեքստերում, ինչպես նշեցինք, չեն պահպանվել բուն հարսանեկան արարողության նկարագրություններ, սակայն, օրինակ, միջդինաստիական ամուսնություններից պահպանվել են դրվագներ, որոնք կարող են պատկերացում տալ, թե ինչպիսի շքեղությամբ են ընթացել այդ ամուսնությունները, որոնք դիվանագիտական նպատակներով տեղի ունենում: Ռբպես օրինակ վերցրել ենք խեթական արքա Խաթթուսիլիս III-ի և Պուդուխեսպայի դստեր ու Ռամզես II-ի ամուսնությունը: Արքայադուստրը, ի դեպ, դառնում է ոչ թե փարավոնի երկրորդական կինը (հարճը), ինչպես սովորաբար լինում էր օտարերկրյա արքայադուստրերի դեպքում, այլ Ռամզեսի սիրելի և «մեծ տիկինը»: Հարսանիքը նկարագրված չէ, սակայն ներկայացված է, թե ինչպես են նրան դիմավորել մեծ շուքով, ներկայացված է արքայադստեր օժիտը՝ ոսկի, արծաթ, բրոնզ, անասուններ, ստրուկներ և այլն, իսկ սահմանին նրանց դիմավորում են փարավոնի մարդիկ, որոնք պետք է արքայադստերը Քանաանից ուղեկցեին Եգիպտոս՝ Պեր Ռամզես մայրաքաղաք¹⁰:

Խեթական հարսանիքի ընթացքը որոշ առումներով կարելի է վերականգնել մաս խեթական ծիսական հարսանիք ներկայացնող մի սափորից՝ հարուստ պատկերագրությամբ: Այն պեղվել է Իմանդըք բեֆեից և թվագրվում է Ք.Ա. XVII դարի կեսով, պահպանվում է Անկարայի Անատոլիական քաղաքակրթությունների բանգարանում: Այն քառականք և լայն կավե մի սափոր է՝ սրբազան ամուսնության ծես ներկայացնող բարձրաքանդակային պատկերներով¹¹ (նկ. 1, 2): Այստեղ պատկերված են հետևյալ բեմաները՝

1. ուտելիքների պատրաստում,
2. աստվածուհու առջև խմիչքի հեղում,
3. քնար, սազ, ծնծղա և այլ երաժշտական գործիքներ նվագող երաժիշտներ, մարմնամարզիկների և ծեսի այլ մասնակիցների երկար երթ,
4. էրոտիկ տեսարան,

¹⁰ Wilkinson 2011: 340-341.

¹¹ Իմանդըք բեֆեից գտնված սափորի նկարը տես նկ. 1:

5. ցլի զոհաբերություն Ամպրոպի աստծո պատվին, որի առջև դրված է ցլի արծաճը (ճկ.3),

6. մասնակիցների կողմից զոհարանի բերումը,

7. տաճարի տանիքի վրա սև հագուստով աստվածուհու կամ քրմուհու պատկեր, որի երկու կողմերում կանգնած են երաժիշտներ,

8. հարսանեկան տեսարան՝ աստվածուհի, որ ծածկված է սև քողով (kariulli), որը փեսան քարձրացնում է նրա դեմքի վրայից,

9. հարսնացուն և փեսացուն երկուսով նստած են ցլի ոտքերով մահճակալի վրա, որի առջևում դրված է հենց Ինանդըքից գտնված սափորի նման մի սափոր¹² (ճկ. 4):

Մահճակալը, ինչպես նշում են ուսումնասիրողները, նման է միջազնեոքյան սրբազան ամուսնությունների մահճակալին: Ի դեպ, դրա համարժեք զուգահեռը կարելի է տեսնել նաև հայկական առասպելաբանական նյութերում: Ինչպես գիտենք, «սենեակ Վահագնին» իրենից ներկայացնում էր ցտ լուրջան մի վայր, որտեղ սիրային հանդիպումներ էին ունենում Վահագնը և Աստղիկ աստվածուհին, և այդ հանդիպման վայրը կարելի է նույնական համարել վերոնշյալ խեթական կամ միջազնեոքյան նմանատիպ աստվածային կամ ծիսական սիրային հանդիպումների համար նախատեսված մահիճներին: Խեթական սափորի պատկերազրույթյան մեջ ևս հիմնական արական աստվածության դերում Ամպրոպի աստվածն է, իսկ աստվածուհու դերում մի քանիսն են, ներառյալ նաև հարսը¹³. կանայք, կարելի է ենթադրել, պետք է կրեին սիրո, զեղեցկության և պողաբերության աստվածուհու ասպեկտները, ինչպես, օրինակ, հայկականում՝ Աստղիկը, ասուրաբարելականում՝ Իշտարը, խեթախուտիականում՝ Նինվիի Իշտար-Շավուշկան և այլն, քանզի Ամպրոպի աստծո կնոջ դերում ողջ հին Առաջավոր Ասիայում սովորաբար հանդես է եկել այդ տիպի աստվածուհին:

Այս սափորը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու նաև աշխարհիկ ամուսնության հետ կապված մի շարք դրվագներ-

¹² Pringle 1993: 362-363, տե՛ս նաև նկարը:

¹³ Ibid.: 363.

րի մասին, քանի որ հայտնի է, որ ցանկացած դեպքում սրբազան ամուսնությունները կրկնում էին աշխարհիկ ամուսնությունների ավանդույթները, ինչպես հին բարեխոնյան ամուսնական ծեսն էր և այլն: Կարելի է ենթադրել, որ հարսանիքներն ընթանում էին առատ ուտեստներով, խմիչքներով, աստվածներին զոհաբերություններով, երաժիշտների ու մարմնամարզիկների, պարուհիների առկայությամբ:

Մեկ այլ՝ Բիտիկ կոչվող վայրից գտնված սափորի վրա ևս ներկայացված է մի հարսանեկան դրվագ, որտեղ կինը և տղամարդը պատկերված են երկուսով, տղամարդը ձեռքը մեկնել է կնոջ գլխաշորը հանելու համար (նկ. 5):

Ամուսնությանը քնականաբար հաջորդում էր հղիությունը, ինչը շատ ցանկալի էր (հատկապես տղա առաջնեկի ծնունդը): Հաջող ընթացքի դեպքում հղիության յոթերորդ ամսում խեթական ընտանիքում կինը առանձնացվում էր ամուսնուց, դադարեցվում էին հարաբերությունները նրանց միջև, և կնոջ համար իրականացնում էին մաքրագործող մի քանի ծեսեր¹⁴, այդ թվում նաև նրա քերամի խոտոչն էին մաքրում հատուկ քույսերից պատրաստված թուրմերով¹⁵, այս ծեսերն ուղեկցվում էին *hurili-ներով*՝ խուտիերեն կատարվող ծիսական երգեցողությամբ¹⁶: Խեթերը կարծում էին, որ հղիությունը տևում է տասը ամիս, քանի որ հաշվում էին նաև հղիանալու և ծննդաբերելու ամիսները: Կինը ծննդաբերում էր արոտին նստած՝ սեփական մոր կամ տատնոր օգնությամբ¹⁷: Ի դեպ, եթե դարձյալ զուգահեռ անցկացնենք հայկական միջավայրի հետ, ապա այս պրոցեսները ևս ընթացել են նույնաման: Հայ կինը, ըստ հավատալիքների, ծննդաբերել է ինը ամիս, ինը օր, ինը ժամ անց,¹⁸ նրան օգնել է տատները, ծննդաբերել է ծնկած և ոչ թե պառկած¹⁹: Հետաքրքրական է, որ

¹⁴ Beckman 1983: 133-147.

¹⁵ Bachvarova 2013: 292.

¹⁶ Beckman 1983: 133-147.

¹⁷ Hoffner 2003: 112.

¹⁸ Քեթեր 1901: 117:

¹⁹ *Ibid.*, 121:

ծնվելուց հետո երեխայի պորտը և ընկերքը բաղել են հողում կամ չորացրել ու գցել որևէ մանրավաճառի տուպրակի մեջ, որ փողասեր լինի, կամ բաղել տան գլխին, որի պատճառը պարզ չէ²⁰. տատները երեխային լողացրել է առաջին օրերին և որպես պատգամավոր գնացել քավորի տուն՝ նրան նվերներ տանելով ու հայտնելով, որ իրեն քավոր են ընտրել, և դրա դիմաց նվերներ է ստացել քավորից²¹:

Սա ամուսնության գեղեցիկ մասն էր, այժմ անդրադառնանք որոշ ամուսնական արգելքների, ինչպես նաև ապահարզանի և դավաճանության հարցերին:

Խեթական օրենքները դատապարտում են մերձավորների միջև ամուսնությունները. տղամարդուն արգելված էր հարաբերություններ ունենալ մոր, քրոջ կամ իր կնոջ՝ նախկին ամուսնությունից ծնված դստեր հետ, իր հոր կամ եղբոր կնոջ հետ, եթե հայրը կամ եղբայրը ողջ են: Արգելվում էր նաև կնոջ քրոջ հետ հարաբերությունները, եթե կինը ողջ է²². այս առումով ուշագրավ վկայություն է պահպանված խեթական տեքստերում՝ խեթա-հայաստանյան մի պայմանագրում, որտեղ խեթական արքան նշում է, որ հայաստան արքան իր խեթ կնոջ քույրերին պետք է որպես քույր վերաբերվի (խոսքը խեթական արքա Սուպլիլուլումաս I-ի և Հայաստանի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրի մասին է. ըստ պայմանագրի՝ խեթական արքայի քույրը ամուսնանում է հայաստանյան թագավորի հետ), նշելով նաև, որ Խաթթիում եղբայրը իր քրոջը կամ ազգականուհուն չի վերցնում, դրա համար մահապատիժ է սահմանված: Միաժամանակ հետաքրքիր փաստ է նշում, որ Հայաստան, որը նրա քնորոշմամբ բարբարոսական երկիր է, եղբայրը իր քրոջը կամ ազգականուհուն վերցնում է²³:

Ծնյաձ մերձավորների միջև ամուսնության արգելքներին՝ նման փաստեր հաճախակի հանդիպում են ողջ հին Առաջավոր Ասիայում, հատկապես ազնվականության շրջանում: Օրինակ՝ խեթական արքա

²⁰ *Ibid.*, 122:

²¹ *Ibid.*, 124-125:

²² Hoffner 1997: 154, N.195.

²³ *Քոսյան* 2016: 35-37: Տե՛ս նաև սույն ժողովածուում Ա.Քոսյանի հոդվածը:

Առնովանդաս I-ը ամուսնացած է եղել հոր կողմից իր քրոջ՝ Ասմունի-կայի հետ²⁴: Խեթական օրենքների NN. 192-193 հոդվածներում նշվում է, որ եթե տղամարդը մահանում է, նրա այրին կարող է ամուսնանալ հանգուցյալ ամուսնու եղբոր հետ, եթե եղբայրն էլ է մահանում, ապա հոր հետ և այլն, և սա արդեն դատապարտելի արարք, չէ²⁵: Ուշագրավ մի դրվագ է պահպանվել «Սասնա Շոեր» էպոսի պատումներից մեկում, երբ Դավիթը սպանվում է, Յոան Վերզոն՝ Դավթի հորեղբայրը, առաջարկում է Խանդութին՝ Դավթի կնոջը, իր հետ ամուսնանալ.

«Դավիթ մեռավ առանց կոիվ.

Են մեռավ, յես քեզի ամուշ.

Կը պակսի քե կտրին Դավիթ,

Չի պակսի պարոն երիկ»²⁶:

Այս դրվագը վկայում է հնագույն ավանդույթի մասին, որ տարածված էր հայերի մեջ: Այս տիպի արգելքներ գործում էին նաև հրեաների շրջանում, և հայկական իրականության մեջ եկեղեցին պահանջում էր խստորեն հետևել Մովսեսի օրենքներին՝ չամուսնանալ մուտիկ ազգականների, քրոջ, դստեր, հորաքրոջ, մորաքրոջ, հոր կնոջ, որդու կնոջ, քեռու հետ և մինչև չորրորդ զարնը ամուսնական արգելքը պահպանել, սակայն եղբոր մահից հետո, օրինակ, չորրորդ դարում, կարելի էր ամուսնանալ եղբոր կնոջ հետ²⁷: Չնայած արգելքներին՝ մերժամուսնությունները տեղ էին գտնում նաև վաղ միջնադարյան Հայաստանում: Աշտիշատում գումարված ժողովը իր սահմանած կանոնում դատապարտում է այն նախարարներին, ովքեր իրենց տոհմական հարստությունը ամբողջական պահելու նպատակով ամուսնանում են մերժավոր ազգականների հետ, սակայն այդ

²⁴ Bryce 2005: 128, սակայն մասնագետները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մերժամուսնությունների համար մահապատիժ է սահմանված խեթական օրենքներով, ենթադրում են, որ նրանց միջև արյունակցական կապ հնարավոր է եղած չլինի, և թուղխալիյասը Առնովանդասին ավելի վաղ ուղղակի որդեգրած կարող էր լինել. տե՛ս Bryce 2005: 128-129, սակայն սա միայն դեռևս չստացուցված ենթադրություն է:

²⁵ Hoffner 1997: 151-152, N.192-193.

²⁶ Մասունցի Դավիթ 1939: 336:

²⁷ Ազոյան 1965: 50:

երևույթը դատապարտող որևէ պատիժ չի սահմանվում: Եվ պատմիչների մոտ կան վկայություններ, որ հայոց մեծամեծների արհամարհում էին այդ հարցում Ներսես կարողիկոսի արգելքները²⁸:

Հաջորդը ամուսյան կամ չրերության վերաբերյալ պատկերացումներն են կամ տղամարդկային անկարողության: Շատ կարևորվում էր տղամարդկային կարողությունը, և սրան ուղղված մի շարք ծեսեր էին իրականացվում, որոնք պետք է նպաստեին տղամարդու կարողությունների վերականգնմանը: Այս թեման առավել ցայտուն կերպով ներկայացված է խեթական մի հեքիաբում Ապպուի մասին, որը հարուստ և ապահովված մարդ էր, ուներ կին, բայց չունեի զավակներ, քանի որ կնոջը չէր մոտենում: Եվ երբ մի անգամ կինը նրան ասում է այդ մասին, նա ասատում է կնոջը՝ ասելով, որ նա կին է և այդ հարցերից ոչինչ չի հասկանում: Այնուհետև Ապպուն գոհեր է մատուցում Արևի աստվածությանը, և վերջինս, ներկայանալով պատանու տեսքով, խորհուրդ է տալիս նրան լավ խմել և գնալ իր կնոջ մոտ: Եվ տասը ամիս անց կինը արու զավակ է ծնում, այնուհետև՝ նաև երկրորդը: Փաստորեն, ըստ առասպելի, տղամարդու կարողությունները վերականգնվում են Արևի աստծո շնորհիվ, և նա կարողանում է հղիացնել կնոջն ու երեխաներ ունենալ²⁹: Հետաքրքրական մի փաստ կա հայկական հարսանեկան սովորույթների մեջ, երբ հարսանիքի համար մորթված անասունի արյան մեջ քարախում են դրան փականդ ու տալիս տղայի մորը՝ զգուշությամբ պահպանելու, որ հանկարծ չարքերը տղայի առնական զորությանը չվճասեն:

Խեթական օրենքներում պահպանվել են նաև կնոջ չրերությանը վերաբերող հողվածներ: Եթե կինը չրեր էր, և ամուսինը ուզում էր նրանից բաժանվել, ապա պարտավոր էր նրան այնքան արժաք տալ, որքան կազմել էր նրա վարձագինը և պետք է վերադարձներ նաև կնոջ օժիտը, որը նա բերել էր իր հետ և միայն այդ դեպքում կարող էր արձակել նրան³⁰: Սա իսկապես քաղաքակրթական քաղաքակրթ մոտե-

²⁸ Ադոյան 1965: 51:

²⁹ Խեթական հեքիաբը Ապպուի և նրա որդիների մասին տես *Hoffner* 1998: 82-84; *Hanson* 1977: 160-163:

³⁰ *Bryce* 2002: 130.

ցում էր կնոջ նկատմամբ: Բացի այդ, խեթական իրականության մեջ կինը իր նախածեռնությանը կարող էր քաժանվել ամուսնուց, ինչպես ամուսինը կնոջից, օրենքով սահմանված պատճառներով³¹: Օրինակ՝ խեթական օրենքներում նշվում է, որ եթե նրանք ամուսնանում են, տուն են ունենում, երեխաներ, իսկ հետո որոշում են քաժանվել, ապա կինը և ամուսինը պետք է կիսեն ունեցվածքը³²: Հարկ է արձանագրել, որ նույնիսկ Եվրոպայում կինը մնան իրավունքներ չունեն, ասենք 18-րդ դարում: Սակայն նշենք, որ այս օրենքները գործում էին ազատ, ոչ ստրուկ կնոջ և տղամարդու դեպքում:

Ի դեպ, ըստ հայկական միջնադարյան օրենքների՝ եթե տղամարդը կնոջն արձակում էր չբերության պատճառով, ապա կինն իրավունք ուներ վերցնել իր հետ քերած կահկարասին, համդերձանքը, արծաքը, աղախնուն, անասունը և այլն³³: Խեթական հասարակության մեջ հավասար հասարակական դիրք ունեցող գույգերի քաժանման դեպքում նրանց ունեցվածքը սուլորաբար հավասար էր կիսվում, և բոլոր երեխաները, բացի մեկից, մնում էին մոր խնամքի ներքո, իսկ եթե կինը ցածր հասարակական դիրք էր զբաղեցնում, օրինակ՝ ստրուկ էր, տղամարդը վերցնում էր բոլոր երեխաներին, բացի մեկից³⁴: Հայկական իրականության մեջ էլ, եթե ամուսինը իր բարոյական և որևէ արատ չունեցող կնոջն ու ընտանիքը ուզում էր քել և գնալ այլ կնոջ մոտ, ապա պարտավոր էր իր ողջ ունեցվածքը կիսել կնոջ հետ հավասար, այդ թվում և երեխաներին³⁵:

Մեծ հանցանք էր համարվում կնոջ դավաճանությունը, որի համար մահապատիժ էր սահմանված: Խեթական N.197 օրենքում ասվում է, որ եթե տղամարդը կնոջը բռնաբարում է լեռներում, որտեղ վերջինս չէր կարող օգնության կանչել, ապա մեղավոր է տղամարդը և պետք է դատապարտվի մահվան³⁶, բայց եթե տղամարդը կնոջ

³¹ Bryce 2002: 119.

³² Hoffner 1997: 41.

³³ Աղոյան 1965: 52.

³⁴ Collins 2007: 24.

³⁵ Աղոյան 1965: 52.

³⁶ Imparati 1995: 572.

տանն է լինում, ապա մեղավոր է կինը, և մա պետք է մահանա³⁷։ Իսկ եթե ամուսինը կնոջն ու տղամարդուն բռնում է դավաճանության պահին և այդ պահին սպանում նրանց, մա համարվում է անմեղ։ Ըստ խեթական N.198 օրենքի՝ ամուսինը կարող էր իրեն դավաճանած կնոջ կյանքը խնայել՝ քերելով նրան քազավորական պալատ և ասելով՝ «Իմ կինը չպետք է մեռնի», ապա պետք է խնայի մահ կնոջ սիրելի կյանքը։ Կամ եթե քերի երկուսին էլ և ասի, որ երկուսն էլ պետք է մեռնեն, քազավորը կարող է ինքը որոշել՝ խնայել, թե սպանել նրանց³⁸։

Հայկական օրենքներում ևս կարևորվում էր դավաճանության վայրը. օրինակ՝ այն դեպքում, եթե տղամարդը կնոջը տանում է ուրիշի տուն և բռնաբարում, ապա ենթակա է մահապատժի տղամարդը, եթե կինն է տղամարդուն կանչում իր տուն, ապա ենթակա է մարմնական պատժի՝ քիթը կտրելու միջոցով (ամուսնու համաձայնությանը) և տուգանքի³⁹։

Ի դեպ, հրեական օրենքներով ևս կարևորվում էր դավաճանության վայրը։ Տղամարդկային դավաճանությունը ընդհանրապես խիստ դատապարտելի չէր հին Առաջավոր Ասիայում, եթե այն տեղի էր ունեցել ազատ կնոջ հետ։ Հայկական իրականության մեջ հաճախադեպ չէին ամուսնական դավաճանությունները, այսուհանդերձ, եթե նրանք տեղ էին գտնում, հաճախ պատժվում էին մահով, ինչը, սակայն, օրենքով չէր նախատեսված⁴⁰։ Եթե անհավատարիմ կնոջ եղբայրը կամ ամուսինը սպանում էր կնոջը, հասարակական կարծիքը միշտ արդարացնում էր նրանց, եթե ամուսինը համակերպվում էր կնոջ դավաճանության հետ, ապա հասարակական կարծիքը պարտավորում էր նրանց՝ կոչելով կնոջ անուճով, ասենք՝ «Մոռնեց տները»⁴¹։

Սակայն Միսիբար Գոշի դատաստանագրքում առավել մարդասիրական մոտեցում է դրսևորվում կնոջ դավաճանության նկատմամբ։

³⁷ Hoffner 1997: 155-156, N.197.

³⁸ Hoffner 1997: 156-157, N.198, խեթական վերոնշյալ NN. 197-198 օրենքների ստավել մամբրաման քմնարկումը տե՛ս Tsevat 1975: 235-240:

³⁹ Մամյան 1967: 262:

⁴⁰ Ibid.

⁴¹ Նահապետյան 2009: 80:

Երև նախորդ օրենսգրքերում և կանոններում կինն անատակության դեպքում անմիջապես ապահարզան էր ստանում առանց որևէ պատճառաբանության, ապա Գոշի դատատանագրքում, երև կինը վատ վարքի տեր չէր եղել մինչ այդ և զոջում է, ապա ամուսինը կարող է նրան հետ ընդունել⁴²:

Այժմ անդրադառնանք մի թեմայի ևս, որ վերաբերում է անասնապղծությանը. այն դատապարտվում էր խեթական օրենքներով (դրանք ամփոփված են NN. 199-200 խեթական օրենքներում), և պատիժները տարբեր կենդանիների դեպքում տարբեր էին: Օրինակ՝ խոզի և շան հետ կենակցելու պարագայում մահապատիժ էր սահմանված, իսկ ձիու և ջորու դեպքում պատիժ չէր սահմանվում⁴³:

Անասնապղծությունը դատապարտող օրենքներ հին աշխարհում առկա են, օրինակ, հրեաների շրջանում, որ կարող ենք տեսնել Աստվածաշնչի Ելից 22, 23, 19-ում, որտեղ անասնապղծության դեպքում ենթադրվում է մահապատիժ⁴⁴: Այգեկցին նշում է, որ անասնապղծությունը տարածված էր փյունիկեցիների մեջ, Հրեաստանում, Գալիլեայում և Երուսաղեմի շրջակա այլ գավառներում⁴⁵: Այս երևույթը տեղ է գտել նաև հայկական իրականության մեջ, և առկա են օրենքներ, որոնք դատապարտում են այն և պատիժներ են սահմանում՝ անդամահատում և ցմահ ապաշխարանք եկեղեցում⁴⁶:

Ամփոփելով նշենք, որ խեթական ամուսնական հարաբերությունները և տարբեր օրենքները, որոնք վերաբերում են այդ հարաբերություններին, բավական տրամաբանված էին, իրենց ժամանակաշրջանի համար առաջադեմ՝ կնոջ իրավունքների առումով և մի շարք դեպքերում արդարացի: Նրանց որոշ մասը կարող է արդիական լինել առ այսօր, և զարմանալի չէ, որ նմանատիպ սովորույթների արձագանք կարելի է տեսնել, օրինակ, հայկական միջամադարյան ավանդույթներում, երև հաշվի առնենք խեթա-հայկական հնա-

⁴² Ադրյան 1965: 56:

⁴³ Hoffner 1997: 157-159, N.199-200.

⁴⁴ Աստվածաշունչ, Ելից. 19, 22, 23:

⁴⁵ Այգեկցի 1999: 108:

⁴⁶ Մամյան 1967: 264:

րավոր վաղեմի առնչությունները, և նաև հնագույն միջդինաստիական ամուսնության հայտնի պատմական վկայությունը, որ վերաբերում է մեր տարածաշրջանին՝ խեթական Մուպալիլուլիումաս I-ի քրոջ և մի շարք գիտնականների կողմից հայոց հնագույն բնօրրանը համարվող Հայասա երկրի արքա Խուկկանայի միջև կնքված վերոնշյալ ամուսնությունը⁴⁷: Եվ որպես մի նմանատիպ հնարավոր արձագանքի վկայություն՝ կարող են բերել հարսանեկան արարողություններին առնչվող մի սովորույթ, որ պահպանվել է հատկապես վանեցիների մոտ:

Վանեցիները հարսանիքի հաջորդ առավտյան հարսին ու փեսային բարձրացնում էին տան տանիքին և արևին ուղղելով նրանց դեմքերը՝ զուռնայի ուղեկցությամբ արևին նվիրված երգ էին երգում բազավորի և բազուհու, այսինքն՝ հարս ու փեսայի համար՝ արևատություն խնդրելով վերջիններիս համար⁴⁸, ինչը ակնհայտ հնագույն ծիսական երևույթի արձագանք է⁴⁹:

Հետաքրքրական է, որ տան կամ տաճարի տանիքից Արևի աստծուն և աստվածությանը նվիրված նմանատիպ ծես էին իրականացնում խեթերը որոշակի արարողությունների հետ կապված, իսկ տան կամ տաճարի տանիքից իրականացվող ծեսերը խեթերի մոտ նվիրվում էին հիմնականում Արևի աստվածությանը⁵⁰: Այսպիսով, վերոնշյալ Ինանդըք թեփեից գտնված սափորի վրա տան կամ տաճարի տանիքին կանգնած սևահանդերձ աստվածուհին կամ քրմուհին՝ երկու երաժիշտների հետ, հավանաբար ինչ-որ ծես է իրականացնում, որ կատարվում էր սրբազան հարսանիքի ժամանակ (նկ. 6) և հնարավոր է՝ այն նվիրված լիներ Արևի աստծուն կամ աստվածուհուն:

⁴⁷ Խեթական Մուպալիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրի գիտական տատաղարձումը և թարգմանությունը տես **Քոչյան** 2016: 20-41:

⁴⁸ Երգի բովանդակությունը տես **Լալայան** 1911: 44, **Լևո** 1966: 269:

⁴⁹ Այս երևույթի ծիսական ենթատեքստը խեթա-հայկական առնչությունների համատեքստում առավել մանրամասն քննարկված է **Հմայակյան** 2008: 93-98, տես նաև **Հմայակյան** 2019: 93-94:

⁵⁰ **Արաշտունի** 1992: 65.

Այս ենթադրությունը, որ հարսանիքի ընթացքում Արևի աստծուն կարող էր ծես նվիրված լինել, միանգամայն հիմնավորելի է, քանզի Արևն է համարվում պտղաբերության ու կյանքի խորհրդանշաններից մեկը և հատկանշական է, որ վերոնշյալ Ապպոի մասին խեթական հեքիաթում վերջինիս անպտղությունից բուժում է հենց Արևի աստվածը: Բնականաբար, հարսանեկան ծեսերի ամենակարևոր ենթատեսակը նաև զույգի պտղաբերության ապահովումն էր, ինչին էլ հավանաբար միտված էին մի շարք ծեսեր, այդ թվում, հավանաբար, խեթական սափորի պատկերագրության մեջ առկա տան կամ տաճարի տանիքին իրականացվող ծեսը հարսանիքների ժամանակ, և այն, ինչպես վանեցիների մոտ, կարող էր նույն իմաստաբանությունը ունենալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աստուածաշունչ 1981.** զիրք Հին և Նոր Կտակարաններու, Երրայական եւ յունական քարգմանութեամ, Պէրոս:
- Արդյան Ա. 1965.** Հայկական ամուսնա-ընտանեկան հարաբերությունները միջնադարյան օրենքներում, ՊՐՀ, 1965/3, 49-66:
- Այգեկցի Վարդան 2008.** Խրատներ, Երևան:
- Բենտ 1901.** Բուլանըխ կամ Հարք Գաատ, հավաքեց և հրատարակեց Ե. Լալայան, Թիֆլիս:
- Հնայակայան Հ. 2008.** Արևստաշտությունը Վանա լճի ավազանում, Մերձավոր Արևելք, Երևան, 93-98:
- Հնայակայան Հ. 2019.** Վանա լճի ավազանին առնչվող հիմնական առասպելները (առասպելական սյուժեների դասակարգման ու տիպաբաժանման նախնական փորձ), ՄՄԱԵԺ, XXXII (2), 87-103:
- Լալայան Ե. 1966.** Վասպուրական, Թիֆլիս:
- Լևո 1966.** Երկերի ժողովածու, հ. 1, Երևան:
- Մամյան Ս. 1967.** Կնոջ իրավական սլաշտպանության հարցը միջնադարյան հայ իրավունքում, ՊՐՀ 1967/4, 258-264:
- Նահապետյան Ռ. 2009.** Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ աստուծոցիների ազգագրական սովորույթների), ՊՐՀ, 2009/2, 71-87:
- Շաղոյան Գ. 2011.** Երևան, «Յոթ օր յոթ գիշեր». Հայոց հարսանիքի համայնապատկեր:
- Մասունցի Գավիթ 1939,** հայկական ժողովրդական եպոս, ընդհանուր խմբագրություն չեզ աստաջարան ակադեմիկ Ի. Ա. Որբելու, Յերեվան, 1939:

- Քոլլան Ա. 2016. Ար.ա. XIV դարի խրա-հայտնական միջինասլան պայ-
 անագրերը, Երևան:
- Ардонба В. 1992. Ритуалы и мифы Древней Анатолии, Москва.
- Иванов В. 1977. Луна, упавшая с неба, Москва.
- Bachvarova M. 2013. Hurro-Hittite Stories and Hittite Pregnancy and Birth
 Rituals, Woman in the Near East, edited by M. Chavalas, London, New
 York, 272-306.
- Beckman G. 1983. Hittite Birth Rituals, New York.
- Bryce T. 2002. Life and Society in the Hittite World, Oxford.
- Bryce T. 2005. The Kingdom of the Hittites, Oxford.
- Collins B.J. 2007. The Hittites and their World, Atlanta.
- Hoffner H. 1997. The Laws of the Hittites, A Critical Edition, London - New
 York - Köln.
- Hoffner H. 1998. Hittite Myths, Atlanta.
- Hoffner H. 2003. Daily Life Among The Hittites. Life and Culture in the
 Ancient Near East (Edited by Averbek, Chavalas and Weisberg), Bethesda,
 95-118.
- Imparati F. 1995. Private Life Among the Hittites, in Civilizations of the
 Ancient Near East, Edited by J.M. Sasson, K. Rubison, J. Baines, New
 York, 571-585.
- Pringle J. M. 1993. Hittite Kinship and Marriage. A Study based on The
 Cuneiform Texts from 2nd millennium Bogazkoy. A Thesis Submitted for
 The Degree of Doctor of Philosophy in the University of London, London.
- Roth M.T. 1997. Law Collections from Mesopotamia and Asia Minor, Atlanta.
- Tsevat M. 1975. The Husband Veils a Wife (Hittite Laws 197-98), Journal of
 Cuneiform Studies, Chicago, 235-240.
- Wilhelm G. 2009, Demographic Data from Hittite Land Donation Tablets, Studia
 Asiatica 5, Roma.
- Wilkinson T. 2011. The Rise and Fall of Ancient Egypt, Bloomsbury.

MARRIAGE AMONG THE HITTITES


Keywords: woman, wedding, marriage, divorce, Hittites, Inandik, bestiality,
 adultery, consanguineous marriages, Hittite laws

Abstract

The author discusses the traditions and realities related to the marriage
 procedure in the Hittite society, the rights and role of women in marriage and
 family, punishments applied to adultery and bestiality cases both for men and
 women. Armenian ethnographic materials and medieval Armenian laws and ideas
 related to the marriage and family relations display remarkable parallels with the
 Hittite Anatolia and concepts that probably can be explained by once possible

Armenian-Hittite interrelations, the reflections of which have been preserved as substratum layer in Armenian rituals and household traditions.

Hasmik Hmayakyan
PhD, Institute of Oriental Studies,
Department of Ancient Orient, Senior Researcher,
hmayakyan@yahoo.com



Նկար 1-2



Նկար 1-2 զմանկար



Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 5, հատված



Նկար 6

ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

*ԵՊՀ բյուրքագիտության ամբիոն,
դասախոս, ասպիրանտ
Էլ փոստ՝ mariam.melkonyan@ysu.am*

**ԿԱՆԱՆՅ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԿՈՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ
(XV-XVI ԴԱՐԵՐ)**

Քանալի քառեր. կնոջ կարգավիճակ, հասարակական կյանք, քաղաքակրթություն, իսլամական ընկալում, պալատական պոեզիա, դիվան, բանաստեղծուի:

Համատարագիր

Դարեր շարունակ պարբեր փեսակերների շրջանակներում փոքր է արվել բացառիկ «կին» հասկացությունը և կնոջ իրական փնդը հասարակության մեջ՝ կահված ժամանակի կենսապայմաններից և դրանից բխող ընկալումների փոփոխություններից¹: Սույն հոդվածում փոքր է արվում ուսումնասիրելու կնոջ կարգավիճակը Օսմանյան կայսրությունում 15-16-րդ դարերում՝ Արևմուտքի և իսլամական Արևելքի հասարակական ու մշակութային սինթեզի շրջանակներում: Մասնավորապես քննվում է այդ համափոքրում կին գրողների գործունեության միջավայրն ու դրա արդյունքում առաջ եկած յուրահատկությունները:

Օսմանյան պետությունում քաղաքակրթական և մշակութային փոփոխությունների, իսլամի ընդունման և այլ երևույթների ազդեցությամբ հասարակության մեջ կնոջ տեղն ու դերը ամբողջովին փոխվել է: Թուրք պատմաբան Ֆ. Մումերը գրում է, որ մինչ Օսմանյան պետությունը կդառնար մեծ կայսրություն, կինը տղամարդու աչքում ունեցած իր արժեքն ու հարգանքը կորցնելով՝ աստիճանաբար հասարակական կյանքից մեկուսացվեց, փակվեց տանն ու վանդակում: Հեղինակն այդ ամենը կապում է արևմտյան ազդեցության հետ. մասնավորապես՝ նրա պնդմամբ՝ Ստամբուլի նվաճումից և Բյուզան-

¹ Էլն 2016: 906.

դական կայսրությանը տիրելուց հետո (հեղինակն ամենայն հավանականությամբ նկատի ունի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում բյուզանդական քաղաքակրթական արժեքների և ավանդույթների յուրացումը օսմանցիների կողմից – Մ. Մ.) հասարակության մեջ կինն ամբողջությամբ կորցրեց իր ունեցած տեղը²: Մինչդեռ պետք է փաստել, որ բյուզանդական ազդեցությունն ընդամենը նպաստեց օսմանյան պետության մեջ նստակեցության կացութաձևի ամրապնդմանն ու դրանից բխող որոշակի փոփոխություններին, որն ամենևին մեկուսացում չէր ենթադրում: Վերջինս բնորոշ է միջնադարյան իսլամական հասարակությանը: Ասվածը մասնավորապես վերաբերում է այն հանգամանքին, որ եթե քոչվոր կյանքի շրջանում կանայք տղամարդկանց հետ միասին տեղից տեղ տեղափոխվելու ընթացքում մասնակցում էին նաև տարածքի համար նվիրված պատերազմներին, ապա օսմանյան քեյության և պետության ձևավորման շրջանում ու դրանից հետո նրանք արդեն մվիրվեցին կենցաղային և ընտանեկան խնդիրներին, իսկ իսլամի ընդունումից հետո լիովին մեկուսացվեցին հասարակությունից:

Որպես ասվածի հիմնավորում նշենք, որ թուրքական հասարակության մեջ կնոջ դերի փոփոխությունը ժամանակագրական առումով քաժամվում է 3 շրջափուլի.

✓ Իսլամի ընդունումից առաջ և քոչվորության շրջանում, երբ կնոջ կերպարը ներկայացվում էր տղամարդուն բնորոշ գծերով. կինը տղամարդու նման ձի էր հեծնում, նետ արձակում և սուր էր օգտագործում, անգամ պատերազմում էր թշնամու դեմ:

✓ Նստակեցության անցնելուց և իսլամական մշակույթն ընդունելուց հետո, երբ կինը, կորցնելով իր կերպարի հերոսական կողմը, դառնում է սիրո և կարոտի թեմատիկայի հիմնական խորհրդանիշը:

✓ Արևմտյան քաղաքակրթության ազդեցությունը կրելուց հետո այս շրջանում պաշտպանում են կնոջ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները³:

² Sümer 1955: 394; Çetinkaya 2008: 280.

³ Adı geçen eser: 280.

Իսլամի ընդունումից հետո արաբա-պարսկական մշակութային շրջանակից սերող արաբական, պարսկական և հնդկական յավան-դույթները էապես նպաստել են կնոջը վերագրվող բացասական հայացքների տարածմանը: Օրինակ՝ ըստ զրադաշտականության՝ կինը բոլոր տեսակի բացասական երևույթների, աղտեղությունների ու քե-րուրյունների խորհրդանիշն է⁴: Մինչդեռ իսլամը կնոջն ու տղամար-դուն նույն կերպ է արժևորում: Ղուրանում և հադիսներում չկա մի կետ, որ կանանց տղամարդկանցից ցածր դասի: Այնուհանդերձ, որոշ մուջրահիդների և իրավագետների կողմից Ղուրանի այաթների սխալ մեկնաբանության և դրանց սխալ կիրառման հետևանքով կինը կորցրել է իր տեղն ու դերը իսլամական հասարակության մեջ⁵:

Սոցիալական, քաղաքական, կրոնական գործունեների ազդեցու-րյամբ դարեր շարունակ փոփոխություններ կրած «կին» հասկացու-րյան ընկալումը կարելի է գտնել նաև գրականության մեջ, ինչը իրա-կանության արտացոլումն է: Թուրք հետազոտող Գ. Ումայի դի-տարկմամբ՝ ողջ աշխարհում արվեստի, գրականության մեջ առաջա-տար դիրքեր ունեցող և ստեղծագործությունների հեղինակ կանանց բիվը շատ փոքր է, որոշ ոլորտներում առհասարակ նրանք ներկա-յացված չեն: Օսմանյան հասարակության մեջ կանանց հանդեպ վե-րաբերմունքը գրական ստեղծագործություններում և պատմական աղբյուրներում ներկայացվում էր ըստ տղամարդու կողքին կնոջ ունեցած դերի կամ այն կերպ, ինչպես նրան վերաբերում էր տղա-մարդը⁶:

Այս համատեքստում ուշագրավ է, որ օսմանյան պոեզիայում մեծ թիվ են կազմում կանանց նկատմամբ տիրող բացասական կար-ծիքներ արտահայտող ստեղծագործությունները, որտեղ նրանց տրվում են հետևյալ բնորոշումները՝ Աստծո կողմից անիծված (*melune*), կարիճ (*akrep*), կարճ խելք ունեցող (*kısa aklı*), տխմար (*ahmak*), խորամանկ (*hilekâr*), վատ (*kötü*), վստահության անարժան (*itimada lâykolmayan*), ստախոս (*yalancı*), անհավատարիմ (*vefasız*),

⁴ Cundur 1967: 6; Çetinkaya 2008: 280.

⁵ Umay 2000: 4; Çetinkaya 2008: 282.

⁶ Umay 2000: 4.

տղամարդուն տանջող (*erkeğe cevr ve cefa eden*), սատամայի պա-
րան (*şeytanın ipi*) և այլն⁷:

Պոետները հաճախ են նշում, որ կանայք և տղամարդիկ չեն կա-
րող հավասար լինել: Նմանատիպ մի քեյթի ենք հանդիպում պոետ
Ֆազլլի մոտ.

Er olan bir ola mı kancak ile

Anıdır mu keçi kırıcak ile⁸

Արդյո՞ք արուն էգի հետ հավասար է,

Արդյո՞ք այծը նույնացվում է գանգուրների հետ:

Քննարկվող ժամանակաշրջանում՝ 15-16-րդ դարերում, ոչ այն-
քան հանդուրժողական վերաբերմունք ենք տեսնում նաև ստեղծա-
գործող կանանց նկատմամբ: Կիև գրողները կենսագիրների ու պատ-
մագիրների կողմից չեն համարվել գրականության հիմնական ան-
դամներ, որակվել են որպես ստորին խավ, անգամ քերությամբ է հա-
մարվել նրանց պատկանելությունը իզական սեռին, նշվել է, որ կա-
նայք կարճ խելք ունեն, այս պատճառով էլ թույլ չեն տվել, որ նրանք
տեղ գրադեցնեն գրականության մեջ: Այնուամենայնիվ, կենսագիր-
ների շնորհիվ մեզ հասել են որոշ ուշագրավ տեղեկություններ: Այս-
պես, կենսագրական հուշագրության հեղինակ Մեհի Բեյը ուր մասից
քաղկացած իր աշխատության 7-րդ գրքում, անդրադառնալով իր ժա-
մանակակից գրողներին, «Կիև գրողների մասին» փոքրիկ ենթավեր-
նագրի ներքո խոսում է երկու քանաստեղծուհիների՝ Չեյնեի և Միհրի
հարունների մասին: Հեղինակը նշում է, որ այդ դարում (15-րդ դար –
Մ. Մ.) երկու կին գրող է ապրել, այնուհետև զովաբանական խոսքեր
շռայլելով նրանց հասցեին՝ փորձում է հիմնավորել այս կանանց իր
աշխատանքի մեջ ներառելու հիմնական պատճառները: Նա մասնա-
վորապես նշում է, որ վերջիններիս քանաստեղծությունները գեղեցիկ
են, քեյթերն՝ ինքնատիպ, նրանց գազելներն ընդունված են ժողովրդի
կողմից, իսկ իրենք մեծ փառք են վայելում⁹:

⁷ Levend 1984: 581-584.

⁸ Adı geçen eser: 584.

⁹ Şehî Bey 1980: 210-211.

Թերևս այս վերաբերմունքով և տարածված կարծրատիպերով է պայմանավորված այն հանգամանքը, որ 13-րդ դարից մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը՝ մոտավորապես վեց հարյուրամյակ ընդգրկող դիվանի գրականության մեջ կին գրողների քիվն այնքան փոքր է, որ անզան հնարավոր չէ համեմատություն անցկացնել տղամարդ գրողների քվաքանակի հետ (3000 պոետներից ընդամենը 20-50-ն են կին): Այս փաստը մտածելու տեղիք է տալիս օսմանյան գրականության մեջ կանանց հատկացված քաժնի մասին¹⁰:

Թուրք գրականագետ Ն. Բեքիրօղլուն գրում է, որ առանց այդ էլ կանանց պոեզիան ավելի շատ արտահայտում է ոչ թե իրենց սրտում եղած զգացմունքները, այլ ժամանակի գրականության մեջ արժատացած հասկացությունների, տերմինների շրջանակներում գրված նրանց գործերը կարծես տղամարդկային ձայն են արտահայտում: Գրականագետը իրավացիորեն ուշադրություն է հրավիրում դիվանի պոեզիայի այն ժանրերի և ժանրային ձևերի վրա, որոնց շրջանակներում ստեղծագործել էին նաև կանայք, քանի որ դրանք, ըստ էության, դիվանի գրականության կարծրացած ձևերի ու կանոնների խտացումն էին, որոնց ծանրության տակ կանայք չեն կարողացել ցույց տալ իրենց առանձնահատկությունն ու գոյության իրավունքը¹¹: Բեքիրօղլուն այս երևույթը կապում է նաև ընդհանուր հասարակական հոգեբանության հետ, որտեղ կնոջ անենամեծ առավելությունը համարվում էր ոչ թե ինքնարտահայտվելու կարողությունը, այլ հենց հակառակը: Անզան պոեզիայում կինը պիտի զգուշանար իր սիրո, հույսի, ցավի կամ այլ զգացմունքների մասին խոսելուց¹², որպեսզի իր շրջապատում վատ ընդունելության կամ վերաբերմունքի չարժանանար: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ կին գրողները ձգտում էին ընդգրկվել պալատական պոետների շրջապատում կամ դառնալ որևէ գրական մեջլիսի անդամ¹³, ջանում էին վերնախավի և ժամա-

¹⁰ Çetinkaya 2008: 282.

¹¹ Bekiroğlu 1999: 803.

¹² Adı geçen eser: 803; Çetinkaya 2008: 283.

¹³ Մուլլանի, արքայազնի կամ քարծրատիճան սղաշտոնյաների հովանավորությանը և վերջիններիս մասնակցությանը գործող խորհուրդ, որտեղ հավաքվում էին

նակի ամենահայտնի ու հարգված պոետների կողմից իրենց ստեղծագործություններին և տաղանդին վերաբերող դրական գնահատականներ ու գովեստներ ստանալ, բնականաբար նրանց մեծ մասը կգերադասեր հետևել սահմանված կանոններին՝ անգամ սեփական մտքերն արտահայտելու հնարավորությունից զրկված լինելու գնով:

Տարբեր աղբյուրներից հայտնի է այս շրջանում ապրած հետևյալ քանաստեղծուհիների անունները՝ **Ջեյնեի Հարուն, Միրի Հարուն, Աֆիսարի, Այշե Հուրրի, Թուրրի Հանըմ, Նիսայի, Արիֆե**: Երբ առանձին առանձին ուսումնասիրում ենք դիվանի կին գրողներին, տեսնում ենք, որ նրանք քոլորը մեծացել են հասարակության վերնախավը ներկայացնող ընտանիքներում և հատուկ ձևով են կրթություն ստացել¹⁴:

Ջեյնեի (?-1474)¹⁵

Ջեյնեի Հարունը քուրք գրականության պատմության մեջ համարվում է առաջին քուրք կին գրողը: Ժամանակակիցները նրան անվանել են Ջեյնունմիսա, իսկ որոշ աղբյուրների համաձայն՝ նրա իրական անունը եղել է Ջուրեյդա¹⁶: Ըստ որոշ կենսագիրների՝ նա Քասթանուռից, ըստ ոմանց՝ Ամասիայից մի քաղիի դուստրն է եղել: Ապրել և ստեղծագործել է Սեհնեթ Ֆաթիի սուլթանի օրոք: Սկզբնաղբյուրների հավաստմամբ՝ Ջեյնեիը կազմել է սեփական ստեղծագործությունների ամբողջական ժողովածուն՝ դիվանը, և ներկայացրել է Փաղիշահին: Գրականագետ Թահա Այի պնդմամբ՝ դիվանն առկա է Այա Սոֆիա և Միլլեթ գրադարաններում¹⁷, սակայն մինչ օրս այս փաստը չի հաստատվել, և որևէ գրականագետ այն չի դրել գիտական շրջանառության մեջ¹⁸: Ջեյնեի Հարունը տիրապետել է արաբե-

ժամանակի հայտնի պոետները, ընթերցվում էին գրական ստեղծագործություններ, և դրանց շուրջ ծավալվում էր քննարկում: Առավել մանրամասն տե՛ս **Banarlı** 2004: 557:

¹⁴ **İspirli** 2007: 7.

¹⁵ **Adı geçen eser**: 19.

¹⁶ **Zihni** 1294 (1877): 285-286.

¹⁷ **Ay** 1934:81, ինչպես նաև **Bursalı** 2016: 645.

¹⁸ Թուրքիայի Հանրապետություն կատարված մեր գիտական գործողման շրջանակներում ուսումնասիրություններ ենք կատարել տարբեր գրադարաններում (այդ բովում

րենին, պարսկերենին, ունեցել է երաժշտական գիտելիքներ: Ունի որոշ պարսկերեն քանաստեղծություններ: Քանաստեղծուհի Միհրիի հետ ունեցել է քանաստեղծական մրցակցություն և այդ առիթով միմյանց ի պատասխան գրված քանաստեղծություններ: Մահացել է 1563թ. Ամասիայում¹⁹:

*Âb-ı hayât olmayacak kismet ey gönül
Bin yıl gerekse Hızr ile seyr-i Skender et
Zeyneb ko meylî zînet-i dînyâya zen gibi
Merdâne vâî sâde dil ol terk-i ziver et*²⁰

**Հեյ, սիրոյ, երև կենասարու ջուր չի լինելու, ուրեմն ճակատագիր է
Հազար տարի էլ պիտք լինի Մարգարեի ու Իսրենդերի ճանա-
պարհն անցի՛ր:**

**Չեյնն՛վ, դու մի կնոջ նման հակված ես դեպի այս աշխարհի
զարդերը,**

Քաջի նման մարտի սիրոյ եղի՛ր, զարդն ու զարդարանքը քո՛ղ:

Միհրի Հաբուն (?-1506²¹)

Առաջին բուրք կին գրողն է: Պալատական քանաստեղծներ Չեյ-նեփի և Նեջաբիի ժամանակակիցն է: Հայտնի է, որ Չեյնեփի ու Միհրիի միջև շատ անգամներ քանաստեղծական մրցակցություն է տեղի ունեցել: Որոշ պատմական աշխատություններում Միհրի Հաբունի վերաբերյալ հանդիպում են «արկածասեր», անգամ «խելագար» քնորոշումը, քանի որ նա էականորեն տարբերվել է իր ժամանակի այլ կանանցից: Մասնավորապես նշվում է, որ քանաստեղծուհին մշտապես իր տուն էր հրավիրում երիտասարդ քանաստեղծների և նրանց հետ զրույցի բռնվում: Միհրին, որը համարձակվել է խոսել իր զգացմունքների մասին, որպես քանաստեղծուհի ասպարեզ է մտել

Այս Մոֆիա և Մուլեյմանին իմն ձեռագրերի ձեռագրերի հավաքածու), ինչի արդյունքում մեզ ես չի հաջողվել գտնել քանաստեղծուհու ստեղծագործությունների ամբողջական ժողովածուն:

¹⁹ Ay 1934: 81.

²⁰ Tezkire-i Lâîfî 1314 (1896): 178-179, ինչպես նաև Koprûlî 1332 (1913): 214-215.

²¹ İspirîlî 2007:19.

քավական երիտասարդ տարիքում: Ժամանակի պատմագիր-կենսագիրները վկայում են, որ նա սիրահարված է եղել ժամանակի հայտնի պոետներից Մելանա Մյուեյեղեքքիմին և Մինան փաշայի որդի Իսքենդեր Չելեքիին: Վերջինիս անունը հանդիպում է նաև քանաստեղծուհու զագելներում: Միիրին ավելի հաջողակ է եղել նազիրներ գրելու մեջ²²:

Օսմանյան մշակույթը ունեցել է շատ քիչ թվով կին գրողներ, ովքեր համարձակվել են բողոքել նահապետական ավանդույթների և սովորույթների դեմ: Դրա վաղ ապացույցն են Միրիի Հաթունի ստեղծագործությունները: Օսմանյան մտավորական խավի ներկայացուցչուհին լավ կրթված էր, տիրապետում էր արաբերենին և պարսկերենին և սերունդներին բողել է քնարական քանաստեղծությունների մի ժողովածու, որում երգել է ոչ միայն աստվածային, այլև երկրային սիրո հիմնը: Բանաստեղծուհին համարձակորեն դուրս է եկել ընդհան հասարակական կարծիքի՝ իր դեմ հանելով անգամ հոգևորականությունը²³:

*Kadı müftî mûderris-i zâhid u pâ u civân
Kangisî cân vîrmedî mahbub oğlan üstüne*²⁴

*Քաղիներ, մուֆթիներ և իրավագետներ, ծերեր ու երիտասարդներ,
Նրանցից ո՞ր մեկը կյանքը չէր փա սիրնցյալ պարասնու համար:*

Մեկ այլ քեյթում նա այսպես է դիմում իրեն քննադատող մուսուլման իրավագետին.

*Bu gûn korkutma sen nasî-i cehimin ârta nârımdan
Kerm kıl bîşerî âğartma ku kıl u kâlfî bir*²⁵

*Օ՛, մի վախեցրու՝ այսօր վաղվա դժոխային կրակով,
Գորություն արա՛, մի՛ հոգնեցրու ինձ, զոհն մի պահ հանգիստ քող:*

Ի տարբերություն այն կին գրողների, ովքեր ստեղծագործելով նույն ժամանակաշրջանում, տուրք են տվել քարացած քանաստեղ-

²² Ay 1934: 52.

²³ Репенькова 2008: 69.

²⁴ Мухри-Хатун 1967: 34.

²⁵ Ibid.

ծական ձևերին՝ առանց արտահայտելու իրենց սեռի տարբերությունը, Միհրի Հարունի ստեղծագործություններում ինչ-որ չափով կարելի է հանդիպել որոշ անկեղծ արտահայտությունների, որոնք ցույց են տալիս են իր սեռին քնորոշ զգացմունքայնություն: Այս առումով ուշագրավ է, որ կենսագիրներ Աշըք Չելեքին և Լաթիֆին խոսում է նրա որոշ գործերի՝ կանացի ոգով գրված լինելու մասին²⁶: Միհրիի ստեղծագործություններում կինը համոզես է գալիս ոչ թե որպես սիրո օբյեկտ, այլ քանաստեղծուհին փորձում է նկարագրել սերը կնոջ աչքերով.

Mihri dîşînden heves-i â'şkına yâr

Oldâ rûsvay-i cihân gittî kamâ şayret â â'r²⁷

*Ընկե՛ր, այն պահից, ինչ Միհրիին համակեցին կիրքն ու սերը քո
համդես,*

Ողջ աշխարհով նա խայտառակված է, կորել են նրա ողջ արժանիքներն ու պարիվը:

Աֆիբաթի (16-րդ դար²⁸)

Այս քանաստեղծուհու անունը հանդիպում է միայն կենսագիր Գարիբիի հուշագրական աշխատության մեջ: Հեղինակը հայտնում է, որ քանաստեղծուհին եղել է շերիֆն, այսինքն՝ սերել է Մուհամմեդ մարզաբեի տոհմից: Այնուհետև Գարիբին գովաբանական խոսքեր է շռայլում Աֆիբաթիի հասցեին՝ նշելով, որ վերջինս եղել է բարեկազմ, գեղեցկադեմ, լուսերես և մաքրասիրտ, եղել է տաղանդավոր քանաստեղծություններ գրելու և գեղագրության մեջ: Գարիբիի շնորհիվ հայտնի է քանաստեղծուհու հետևյալ քեյթը.

Hakk-ı te'âlf kûlunû teccessûl ile dâim karâmâz²⁹.

*Հե՛յ, Աֆիբաթի՛, մի օր քեզ համար էլ է բախարի արևը ծագելու,
Ասրժոն ծառային մշտապես սև վշտի մեջ նա չի պահելու:*

²⁶ Şentürk 2012: 131.

²⁷ Muxpu-Xaryn 1967: 29.

²⁸ Tezkire-i Mecâlis-i Şu'arâ-yı Rûm Garîbî Tezkîresi 2010: 82.

²⁹ Adı geçen eser: 19.

Թուրքի (16-րդ դար³⁰)

16-րդ դարի կին գրողներից էր, Սուլթան Սուլեյման Քանունիի պալատական գրուցակիցներից մեկը: Բանաստեղծուհի Թուրքիից հայտնի է միայն հետևյալ քեյրը.

Bağteten olmuş iken Tâîl gurâba hem-nişân

Yine çekvâyi gurâb eyler garâbet bundadır³¹

**Հանկարծ քուրակը դարչավ ազոավին ընկերակից,
Նորից ազոավն է քոդորում, սա է փարփինակ³²:**

Նիսայի (16-րդ դար³³)

Նիսայիի մասին տեղեկությունները սակավ են և ներկայացված են միայն քուրք գրականագետներ Մ. Չավուշօղլուի և Ս. Իսփիլուլիի աշխատանքներում³⁴: Այս բանաստեղծուհին հայտնի է դարձել արքայազն Մուսրաֆայի մահապատժից հետո վերջինիս հիշատակին գրված երկու ողբերգերի՝ մերսիենների շնորհիվ: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ Նիսային ապրել է 16-րդ դարում՝ սուլթան Սուլեյման Քանունիի օրոք: Ամենայն հավանականությամբ եղել է սուլթանի կնոջ և Մուսրաֆայի ճոր՝ Մահիդեվրանի³⁵ գրուցակիցներից: Իր քեյրերից մեկում նա Քանունիի կնոջը՝ Հուրբեմին, ում արքայազնի մերձավորները մեղադրում էին վերջինիս մահվան մեջ, անվանում է «*Urus câdâsu*»³⁶ («ոռու կախարդ»): Նիսային զայրացած հաշիվ է պահանջում սուլթանից և կնոջից՝ դառնալով ժողովրդի տրամադրությունների արտահայտիչը, քանի որ հասարակ մարդկանց չբռնում արքայազնի մահապատժի խիստ բացասական արձագանք էր ստացել: Այս քեյրայով մերսիեններ գրած տասներեք տղամարդ պոետներից ոչ ոք այնքան խիստ խոսքերով չի դիմել սուլթանին, որքան այս բանաստեղծուհին: Խիստ ուշագրավ է այն, որ Նիսային,

³⁰ İspirli 2007:20.

³¹ Ceyhan 2014: 319.

³² Sb' u Ay 1934:76, ինչպես նաև İspirli 2007: 53-54:

³³ Adı geçen eser: 20.

³⁴ Cavuşoğlu 1978: 405-416; İspirli 2007: 55.

³⁵ Մահիդեվրան սուլթանի մասին անավել մանրամասն տե՛ս Sakaoğlu 2015: 249-252:

³⁶ Morkoç 2011: 228.

առանց բարցնելու իր կին պոեստ լինելու հանգամանքը, առանց վախի վստահաբար արտահայտում է իր զգացմունքները: Այդ է վկայում նրա մեքսիկեի հետևյալ հատվածը.

Zulm idüp nev-cevâna eyledün cevr-i fezâ

Boynma dakdun kemendi cânma kaldun ezâ

Şefkat ânândur bilürken kâlmadın havf-i hümdâ

Merhametsüz şâh-ı âlem n'îdi Sultan Mustafâ

Տանջելով երիտասարդի հանդեպ մեծ անարդարություն գործեցիր,

Վզին պարան դնելով կյանքը փանջանքի դատապարտեցիր:

Երև խնամայիր, որ գուրը հավատ է, սուրբ վախը չէիր խախտի,

Աշխարհի անգուր շահն ի՞նչ արեց, Մուրա՛ն Մուրաֆա:

Bir Urus câdâsunun sözin kulagma koyup

Mekr ü âcaldanubanolacüzeyeyuyup

Bag-ı ömrünhâsıl o serv-i ââdakyup

BI-terahhum şâh-ı âlem n'îdi Sultan Mustafâ¹⁷

Մի որս վհուկի խոսքին ականջ դնելով,

Խորամանկությանն ու խաբերայությանը հավատարյուր

Կյանքի այգի հասած այն ազատ նոճին կորելով,

Աշխարհի անխիղճ շահն ի՞նչ արեց, Մուրա՛ն Մուրաֆա:

Այշն Հուրրի (?-1589-90¹⁸)

Այշն Հարունը ամուսնացել է Ենմսի Չելեքի ամուսնով հայտնի անձի հետ, որը եղել սուլթան Սելիմ 2-րդի ուսուցիչը: Հենց այս հանգամանքի շնորհիվ էլ Այշն Հուրրին կարողանում է մուտք գործել պալատ և դառնալ սուլթանի գրուցակիցներից մեկը¹⁹:

Նա գազելի, քասիդի, մեսնելիի և մուսամայի ժանրում գրված օսմաներեն, արաբերեն և պարսկերեն չափածո ստեղծագործություն-

¹⁷ Adı geçen eser: 229.

¹⁸ İspirli 2007: 19.

¹⁹ Sakaoglu 2015: 270-271.

ների հեղինակ է: Բանաստեղծուհու ամենահայտնի գործը համարվում է «Խուրշուդ և Ջենշիդ» 3 հազար քեյթ ունեցող մեսնեվին⁴⁰:

Պատմագիրները գովաբանական խոսքերով են հիշատակում Այշե Հուրքիին: Մասնավորապես, Մեհմեթ Ջիհինն նրան համարում է «իր նմանը չունեցող բանաստեղծուհի»: Այս աղբյուրներում հաճախ նշվում է, որ նա բանաստեղծական տաղանդով գերազանցել է իր նախորդներին՝ Ջեյնեփին և Միհրիին: Կենսագիրների մի մասն անգամ գրում է, որ նա շատ տղամարդ բանաստեղծներից ավելի տաղանդավոր է եղել⁴¹: Գրականագետ Մուրաթ Ուրազը, հակադրվելով այս տեսակետին, կարծում է, որ ի տարբերություն Այշե Հուրքիի՝ Միհրիի ստեղծագործություններն ավելի քնարերգական են⁴²:

Արիֆե Հանըմ (? - ?)

Կին գրողներին նվիրված ուսումնասիրություն կատարելիս Արիֆե Հանըմի անունը հանդիպել ենք միայն քուրք գրականագետներ Հ. Սոյքուքի «Թուրքական պոեզիայում սուֆիզմի իմաստությունը և փիլիսոփայությամբ լի անմոռաց տողեր» ու Ս. Իսփիրլիի «Դիվանի բանաստեղծուհիները և ավանդույթի շարունակականությունը» աշխատություններում: Հետազոտողներից որևէ մեկը հստակ չի նշում Արիֆե Հանըմի ապրած ժամանակաշրջանը⁴³: Մեզ հասել է բանաստեղծուհու գրչին պատկանող ընդամենը մեկ քեյթ, որն ունի խրատական բնույթ:

Niyyet ü azm ü amel sabr ü sebât

Beğeri maksadına nâil eder⁴⁴.

**Վճռականությունը, աշխատանքն ու համբերապարտությունը
Մարդուն կհասցնեն իր նպատակին:**

⁴⁰ Ay 1934: 8-9.

⁴¹ İspirli 2007: 49.

⁴² Uraz 1941: 26.

⁴³ Soykut 1968: 996; İspirli 2007: 227.

⁴⁴ Soykut 1968: 996; İspirli 2007: 227.

Ամփոփելով նշենք, որ հնարավոր չէ առավել մեծ քանակ և որակ պահանջել այն կանանցից, ովքեր կարողացել են կյանքի երկար փանդակից իրենց գլուխը մի պահ դուրս հանել և արագ մի մեղեղի հմ-չեցնել: Նրանք ևս մյուս քանաստեղծների նման, ժամանակի կաղապարները վերցնելով՝ գլուխկոտրուկներ են ստեղծել և դրանց հաղորդել են ոչ թե հոգի կամ բովանդակություն, այլ ընդամենը ձև⁴⁵: Այնուհանդերձ, դիվանի գրականությունն ունեցել է նաև զաղափարական առումով ինչ-որ շափով անկախ կին գրողներ, ովքեր բողոքել են նահապետական ավանդույթների և հնացած սովորույթների դեմ, համարձակորեն պաշտպանել են տղամարդկանց հետ ունեցած իրենց իրավունքների հավասարությունը: Ասվածի վառ ասպացույցն են բանաստեղծուհի Միհրի Հաբունի ստեղծագործությունները: Ի տարբերություն այն քանաստեղծուհիների, ովքեր, ստեղծագործելով նույն ժամանակաշրջանում, տուրք են տվել քարացած ձևերին՝ առանց արտահայտելու իրենց սեռի տարբերությունը, Միհրի Հաբունի ստեղծագործություններում տեղ-տեղ կարելի է հանդիպել որոշ անկեղծ արտահայտությունների, որոնք արտահայտում են իր սեռին քնորոշ զգացմունքայնություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ay T. 1934. Türk Kadın Şairleri, İstanbul.
 Banarlı N. S. 2004. Resimli Türk Edebiyatı Tarihi, İstanbul.
 Bekiroğlu N. 1999. "Osmanlıda Kadın Şairler ", Osmanlı, C. 9, Yeni Türkiye Yayınları, Ankara, s. 803-811.
 Bursalı Mehmed Tahir 2016. Osmanlı Müellifleri, 2.Cilt, Ankara.
 Ceyhan A., 2014. Ahmed Muhtar Beyin «Şâirhanamlarımız» isimli eseri, s.s. 299-350,
[http://www.turkiyat.selcuk.edu.tr/pdfdergi/s8/11.pdf\(03.12.2014\)](http://www.turkiyat.selcuk.edu.tr/pdfdergi/s8/11.pdf(03.12.2014)).
 Cunbur M. 1967. Fuzuli'nin Eserlerinde Kadın, Türk Kadını, 2 (16) Eylül, s. 6-9.
 Çetinkaya Ü. 2008. Divan edebiyatında kadına genel bakış, Turkish Studies International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic Volume 3/4 Summer 279-334. <http://turkoloji.cu.edu.tr/>

⁴⁵ Ay 1934: 3.

ESKİ%20TURK%20%20EDEBIYATI/ulku_cetinkaya_divan_edebiyatinda_kadina_genel_bakis.pdf(28.02.2020).

- İçli A. 2016.** Klâsik Türk Edebiyatında Aşk Konulu Anlatılarda Savaşan Kadın Kahramanlar, Geçmişten Günümüze Şehir ve Kadın, Samsun, 899-908, https://www.researchgate.net/profile/Senem_Guerkan/publication/318960619_WOMEN'S_EDUCATION_IN_THE_OTTOMAN_EMPIRE_19th_CENTURY_and_THEREAFTER-OSMANLI_IMPARATORLUGUNDA_KADININ_EGITIMI_19_YUZYIL_VE_SONRASI/links/59883a21aca27266ada3ebb0/WOMENS-EDUCATION-IN-THE-OTTOMAN-EMPIRE-19th-CENTURY-and-THEREAFTER-OSMANLI-IMPATORLUGUNDA-KADININ-EGITIMI-19-YUeZYIL-VE-SONRASI.pdf (29.02.2020).
- İspirli S. A. 2007.** Kadın divan şairleri ve geleneğin uzantısı, 1. Basım, Ankara.
- Koprülü M. F. 1913.** Yeni Osmanlı tarih-i edebiyatı, İstanbul.
- Küçük S. 1994.** Baki Divanı, Ankara.
- Levend A. S. 1984.** Divan Edebiyatı: Kelimeler ve Remizler, Mazmunlar ve Meftumlar, 4. Basım, İstanbul.
- Çavuşoğlu M. 1978.** "16. Yüzyıl'da Yaşamış Bir Kadın Şair Nisâyi", Tarih Estitüsü Dergisi, s. 9, Sene 1978, Ayrı Basım, Edebiyat Fak. Matbaası İstanbul, 405-416.
- Morkoç Y. E. 2011.** Klasik Türk edebiyatında kadın şairlere bir bakış, Sosyal Bilimler Dergisi, Cilt: 9, Sayı: 2, Ekim, 223-235. file:///C:/Users/HP/Downloads/KLASIK_TURK_EDEBIYATINDA_KADIN_SAIRLERE.pdf (29.02.2020).
- Sakaoğlu N. 2015.** Bu mülkün kadın sultanları, valide sultanlar, hatunlar, hasekiler, kadınefendiler, sultanefendiler, 1. Basım, İstanbul.
- Sehi Bey 1980.** Tezkire (Hest Behişt), İstanbul.
- Soykut H. 1968.** Türk Şiirinde Tasavvuf Hikmet ve Felsefeyle Dolu Unutulmaz Mısralar, İstanbul.
- Sümer F. 1955.** "Osmanlılarda Kadın ve Aile Hayatı", Resimli Tarih Mecmuası, Sayı 67, Temmuz, 3934-3939.
- Şentürk A. A. 2012.** Osmanlı Şiiri Antolojisi, 8. Baskı, İstanbul.
- Tezkire-i Lâtîfî 1314 (1896),** İstanbul.
- Tezkire-i Mecâllîs-i Şu'arâ-yı Rûm Garîbî Tezkiresi 2010,** Dr. İsrâfil Babacan, 1. Baskı, Ankara.
- Umay G. 2000.** İslâmî Dönemde Türk Toplumunda Kadının Yeri ve Önemi, Millî Folklor, Yıl: 12 (Yaz 2000), Sayı: 46, 4-9; <http://www.millifolklor.com/PdfViewer.aspx?Sayi=46&Sayfa=2&fbclid=Iw>

AR34AqdzNHQu5GYhQ13k8AqF8c_H351XOJEdSuAm6cDDX4zH9gkT
LmbGqqY(29.02.2020).

Uraz M. 1941. Resimli Kadın Şair ve Muharrirlerimiz, İstanbul.

Zihni M. 1877. Meşâhîrû'n-Nisâ, İstanbul.

Михри-Хатун 1967. Диван, Критический текст и вступительная статья Е. И. Маштаковой, Москва.

Репенькова М.М. 2008. Женщины Турции в литературе и обществе, Вестник Московского Университета, сер. 13, Востоковедение, № 2, Москва, 69-84.

THE STATUS OF WOMEN ON THE OTTOMAN EMPIRE ON THE EXAMPLE OF THE LIFE AND WORKS OF FEMALE WRITERS (XV-XVII CENTURIES)

Keywords: status of woman, public life, civilization, Islamic perception, court poetry, divan, poetess.

Abstract

For centuries, different views have been expressed in order to explain the concept of «woman» and the real position of women in society, depending on the conditions of time and the transformations of perceptions resulting from it. This article attempts to examine the status of women in the frame of the social and cultural synthesis of the West and the Islamic East in the 15th and 16th centuries. In particular, there are examined the reality of the activities of the Ottoman women writers and the peculiarities that resulted from it in this context.

Mariam Melkonyan
Lecturer of Azerbaijani and Ottoman Languages
Yerevan State University, Faculty of Oriental Studies,
Department of Turkic Studies
mariam.melkonyan@ysu.am

**ՀԱՅ ԿՆՈՋ ԿԵՐՊԱԲԸ XIX ԴԱՐԻ ՔՐԻՏԱՆԱՅԻ
ՃԱՆԱԳԱՐՀՈՐԳ ՋԵՅՄՍ ՔՐԵԳԻ ՆԵՐԿԱՅԱՅՄԱՍ**

Քանայի բառեր՝ Օսմանյան կայսրություն, քրիտանացի ճանապարհորդ, հայ կնոջ կերպար, իսլամական աշխարհ, քրիստոնյա հասարակություն, հայկական բնակավայրեր, ավանդույթներ, սովորույթներ:

Համատարացիք

Հողվածում անդրազատում ենք 19-րդ դարի քրիստանացի ճանապարհորդ Ջեյմս Քրեգի «Հայերը, քրդերը և րուբերը» խորագրով երկհատորանոց աշխատությանը, որը հրատարակվել է 1880 թ.՝ Լոնդոնում: Այն ներկայացնում է Հայաստանի ու հայերի կենցաղը և սովորույթները, ինչպես նաև զգալի փեղկկություններ է պարունակում հայ կնոջ կերպարի մասին:

1828 թվականին Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացվելուց հետո Օսմանյան կայսրությունում քրիտանացի ճանապարհորդների թվի զգալի աճ է նկատվում. նրանցից մի քանիսը տարածաշրջանի մանրակրկիտ տեղագրական ուսումնասիրություններ են կատարում: Ըստ Գ. Բարդակյանի՝ «հետաքրքրության այս աճը հավանաբար Քրիտանիայի երկյուղների բարձրակետն էր վաղ դարասկզբին՝ պայմանավորված Արևելքում իրենց իմպերիալիստական տիրապետություն հնարավոր ֆրանսիական ներխուժմամբ»¹:

Ճանապարհորդների մեծ մասի վերաբերյալ կենսագրական տեղեկություններ չկան: Նույնը վերաբերում է Ջեյմս Քրեգին: Միայն գրքի տիտղոսաբերքի վրա արված գրությունից պարզ է դառնում, որ նա եղել է քրիտանական քաղաքական նավատորմի կապիտան:

¹ Բարդակյան 2018:

Պաշտոնաթղթությունից հետո՝ 1870-ական թթ. սկզբին, մի քանի տարի ապրել է Օսմանյան կայսրությունում²:

Մեր կողմից ընտրված աշխատությունը վեր է հանում Հայաստանի ու հայերի, ինչպես նաև հայ կնոջ կերպարի նկարագրի որոշ կողմեր: Ջեյմս Քրեյգն առաջին հատորում համառոտ ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը՝ անտիկ ժամանակներից մինչև իր ապրած ժամանակահատվածը: Սա վկայում է, որ հեղինակը՝ Օսմանյան կայսրություն էր ժամանել հայերի անցյալի մասին արդեն որոշակի պատկերացումն ունենալով: Մեր կողմից բովանդակային վերլուծության են ենթարկվել երկրորդ հատորի 3-րդ և 4-րդ մասերը, որոնց խորագրերն են «Հայկական կյանք» և «Հայերի բնութագիրը»: Աշխատության այս բաժիններում Քրեյգը բավական մանրակրկիտ նկարագրում է էրզրումում (Կարին) բնակվող հայերի կենսապայմանները, սոցիալական կարգավիճակը, հոգևոր-կրոնական կյանքը, ավանդույթներն ու սովորույթները և այլն:

Մույն վերլուծության նպատակն է ներկայացնել հայ կնոջ կերպարը ըստ բրիտանացի ճանապարհորդ Ջեյմս Քրեյգի աշխատության, որտեղ հեղինակը հայերին բնութագրում է որպես քաղաքակիրթ, մշակույթ կերտած, հանգիստ, աշխատասեր և հյուրասեր ժողովրդի. նա հայերին համարվում էր տեղի բնիկներ, որոնք ստիպված էին կողք կողքի ապրել մուսուլմանների հետ: Միաժամանակ իր աշխատության մեջ նա մեծ տեղ է հատկացնում հայ կնոջը՝ դիտարկելով նրա արտաքին տեսքը, ներքին էությունը, սոցիալական դիրքը և դերը ընտանիքում: Աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է տարբեր տարիքային խմբերի և սոցիալական կարգավիճակ ունեցող հայ կանանց՝ երիտասարդ, ամուսնացած, տարեց, հարուստ, աղքատ, քեթևաբարո և այլն:

Ջ. Քրեյգը շատ հաճախ հայ կնոջը ներկայացնում է տարբեր իրավիճակներում՝ բավական հետաքրքիր գնահատականներ տալով: Ավելին, աշխատանքը կարդալուց այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հեղինակն ապրել է հայ ընտանիքում, քանի որ շատ

² Creagh 1880: 2.

հաճախ մամրակրկիտ նկարագրում է հայկական կենցաղը, ավանդույթները՝ քավական ճիշտ և հետաքրքիր դիտարկումներ անելով:

Աշխատանքի վերաբերյալ մեկ այլ նկատառում ևս հեղինակը ծանոթ էր հայերի վերաբերյալ օտարերկրյա ճանապարհորդների աշխատություններին և քազմիցս իր տեսակետը հիմնավորում է՝ հիշատակելով նրանց: Սակայն ինչ վերաբերում էր հայ կնոջ կերպարին, ապա աշխատությունից սարգ է դառնում, որ այստեղ ապրելով է ձևավորվել նրա կարծիքը, քանի որ նկարագրում է իրադարձություններ, որոնց ականատես է եղել:

Ձ. Քրեզը հայ կնոջ նկարագիրը սկսում է հետևյալ ձևակերպմամբ. «*Հայերը գեղեցիկ ուսաս են*»³: Նման գնահատականը իր հերթին վերլուծության կարիք ունի: Նախ նկատենք, որ հեղինակի կողմից աշխատանքում քավականին հաճախ օգտագործվող «ուսաս» տերմինը, այս դեպքում, երբ տրվում է մարդաբանական նկարագիրը, հետապնդում է մեկ նպատակ՝ շեշտել հայերի ծագումնաբանությունը և հայերին վեր դասել տեղի մուսուլման հասարակությունից: Բնորոշելով որպես «գեղեցիկ ուսաս»՝ նա մեկ անգամ ևս հայերին առանձնացնում է կայսրությունում ապրող ժողովուրդներից՝ մատնանշելով նրանց յուրահատկությունը: Ու քանի որ գեղեցկությունը հարաբերական իմաստ ունի և քացի այդ՝ մարդուն՝ «գեղեցիկ»-ի վերագրումը հիմնված է ներքին և արտաքին գեղեցկությունների համադրության վրա, դրա համար հեղինակը հիմնավորում է հայերի վերաբերյալ իր կարծիքը՝ մեջբերում անելով 17-18-րդ դդ. սկզբի ֆրանսիացի բուսաբան Ժոզեֆ Պիթոն դը Տուրնեֆորի «Ճանապարհորդություն դեպի Լևանտի երկրներ» աշխատությունից, որտեղ հեղինակը հայերին անվանում է «*աշխարհի ամենալավ և ազնիվ մարդիկ*»⁴:

Այնուհետև, անդրադառնալով հայ կնոջ արտաքին տեսքին, հեղինակը նկարագրում է նրա գրավչությունը, վարվելաձևը ու հագուստը:

Գրավչությունը նա ներկայացնում է հետևյալ կերպ. «*Կանանց արքայահայրիչ և լողացող սև աչքերը, որոնք միշտ սրվորված էին*

³ Creagh 1880: 95.

⁴ Ibid.

անսովոր երկարության խիտ քարքիչներով, փայխ են յուրահարուկ հմայք նրանց քաց չիրապրողի գույն ունեցող դեմքին: (...) Չնայած հակում ունեն ճարպակալման, նույնիսկ երիտասարդ տարիներին, սակայն նրանց մեջքը քարակ է, ուսիրը՝ փխրուն, չայնը՝ քարչր»⁵: Ինչը, ըստ հեղինակի, հայերի առողջ ապրելակերպի և լեռնային միջավայրի հետևանք է: Մեկ այլ հատվածում հեղինակը նշում է, որ «Նրանց մազերը սովորաբար մեղրաքս են, խիտ և քավականին երկար, քափվում են մեջքին մեծ հյուսքով, որը վերջում կապվում է ժայավենների փունջով»⁶:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ էրզրումի հայ կանանց բնորոշ էր սև աչքերը, գեղեցիկ քարքիչները, բուխ մաշկը, առողջ ու մետաքսե երկար մազերը, գեր լինելը, քարակ մեջքը, փխրուն ուսերը և քարծր ձայնը: Նկատենք, որ որոշ դեպքերում խոսելով հայ կնոջ գեր լինելու մասին, այն ոչ թե որպես բերություն է ներկայացնում, այլ ընդհակառակը, դրա մեջ հմայք է տեսնում: Մի դեպքում այն պայմանավորված էր քարակ մեջք ունենալու հատկանիշով, մյուս դեպքում՝ շարժումների թեթևությամբ, մեկ այլ դեպքում՝ մեկ այլ հատկանիշով և ի վերջո քացահայտ գրում է, որ «տղամարդը գայրակղվիլու մեծ վրանգի առջև է կանգնած»⁷:

Ձ. Բրեզը դիտարկում է նաև հայ կնոջ պահվածքը: Նա նշում է, որ «Զայելով փողոցներում՝ հայ մեծագույն գեղեցկուհիները նման են լսրե կտորների մի ամբողջության, և ուլքեր չեն տեսել այդ կանանց այլ հանգամանքներում, կարող են սխալ տպավորություն ունենալ, թե նրանք ոչ գեղեցիկ կառուցվածքով, քառակուսի մարմնով և քավականին անփույթ էակներ են»⁸: «Սակայն նրանց տեսնելով տրան պայմաններում՝ այլ կարծիքի ես հանգում»⁹: Բացի այդ, հեղինակը մատնանշում էր, որ երբ հայ կինը խոսում է, նրա հայացքը ներքև է հառած՝ այդ կերպ փորձելով տղամարդուն ցույց տալ իր հե-

⁵ Ibid.

⁶ Ibid: 97.

⁷ Ibid: 98.

⁸ Ibid: 97.

⁹ Ibid.

զուրյունը, անվտանգ լինելը կամ համեստությունը¹⁰: «Եթե կինը ստիպված է հանդիպել անծանոթի հետ, ապա նա հազում է ֆրանսիական կոշիկներ՝ քառակուսի կրունկներով, որոնք նրա համար անհարմար են, քայլվածքն էլ անհույս», - գրում է նա¹¹:

Այսպիսով, հեղինակը ակնարկում է, որ միջավայրում հայ կնոջ պահվածքը շատ է տարբերվում ընտանիքում նրա պահվածքից: Այստեղից մենք կարող ենք եզրակացնել, որ հայ կինը դրսում իր հագուստով և պահվածքով փորձել է ամեն կերպ քողարկել իր գեղեցկությունը, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա ապրում էր մուսուլմանական միջավայրում և հասարակական վայրերում իրեն պաշտպանված չէր զգում, մինչդեռ տանը պաշտպանված էր: Այսինքն՝ քողարկվելու հանգամանքը քրիստոնյա կանանց համար ինչ-որ չափով անվտանգության երաշխիք էր: Նույնը վերաբերում է էրզրումի շրջակայքի գյուղերում ապրող կանանց: Հեղինակը համեմատական է տանում այն բնակավայրերի միջև, որտեղ հայերը ապրում էին հայկական և մուսուլմանական միջավայրերում¹²: Նա գալիս է այն եզրահանգման, որ հայկական գյուղերում հայ կինը ազատ էր, նա չէր Թաքցնում իր գեղեցկությունը, այլ ընդհակառակը, ի ցույց էր դնում: Հատկապես դա բացահայտ արտահայտվում էր հագուստի հարցում: Ինչը մեկ անգամ ևս վկայում էր, որ գյուղերում դրա կարիքը չէր զգացվում, քանի որ այնտեղ նրանք հայերի միջավայրում էին: Նկատենք, որ այդ մասին խոսել է նաև Գ. Սրվանձտյանը՝ օրինակ բերելով Տիգրանակերտի և շրջակա գյուղերի հայ կանանց¹³:

Իր աշխատության մեջ Ջ. Քրեզը մեծ տեղ է հատկացնում հայ կնոջ հագուստին՝ մանրակրկիտ ներկայացնելով բոլոր տարրերը: Նա նկատում է, որ հայ կնոջ դրսի հագուստը տարբերվում էր տմայինից: Տան հագուստն էլ իր հերթին տարբերվում էր՝ ամենօրյա և տոնակատարությունների նախատեսված: Հեղինակը տեղեկացնում է, որ ամենօրյա հագուստը կազմված է 3 տարրերից՝ ազատ և վառ գույ-

¹⁰ Ibid: 98.

¹¹ Ibid: 97.

¹² Ibid: 100.

¹³ Սրվանձտյան 1982: 430:

նի տարատ, որի ստորին մասն ամրանում է ոտքի կոճի հատվածում, բաց վզով երկար շապիկ, որը ամրանում է իրանի շուրջ՝ ոսկե, արծաթե կամ բավշյա գոտիով: Վերջինս՝ բավշյա գոտին, կնոջ ամենօրյա հագուկապի մի մասն էր կազմում և հասնում էր մինչև ծունկը: Երրորդը ասեղնագործած բաճկոնն էր, որն իջնում էր գոտկատեղից ներքև¹⁴:

Դրսի հագուստը նկարագրելիս հեղինակը այս երեք տարրերին ավելացնում է ևս երկուսը, նշելով, որ «*տարապից, շապիկից և բաճկոնից բացի՝ պարտադիր հագնում են վառ կանաչ, կարմիր և դեղին մեկուսյան զգեստ, և այս ամենը առանց համադրելու այնքան անփույթ են հագնում, որ հիշեցնում են ծեր հավաքարարի՝ կիրակնօրյա հագուստով*»¹⁵: Փողոցում հայ կինը գլուխը և ուսերը ծածկում է բարակ սպիտակ գլխաշորով: Քրեզը նկատում է, որ ի տարբերություն մուսուլման կանանց՝ հայ կանայք դեմքը չեն ծածկում, սակայն տղամարդկանց կողքով անցնելիս պարտադիր դեմքի մի հատվածը՝ քիթը և բերանը փակում են¹⁶: Եվ ի վերջո գալիս է այն եզրակացության, որ Էրզրումի հայ կանայք փողոցում իրենց բարեմասնությունները բացցնում են այնքանով, որքանով իրենց հարևան մուսուլման կանայք¹⁷:

Սակայն պետք է նշել, որ գոյություն ունեցող արզեպներն ու սահմանափակումները այնքան էլ խորք չէին մասնավորապես հայ կանանց համար: Զպետք է մոռանալ, որ գլխաշոր կրելու, բաշկինակով (կամ քողով) դեմքը ծածկելու կամ հագուստի վրայից գցվող, ամբողջ մարմինը ծածկող քող կրելու սովորույթները հայության շրջանում գոյություն ունեին դեռևս վաղ ժամանակներից և տարածված էին նաև Օսմանյան կայսրության սահմաններից դուրս ապրող հայության շրջանում¹⁸:

¹⁴ Creagh 1880: 98.

¹⁵ Ibid: 99.

¹⁶ Ibid.

¹⁷ Ibid: 100.

¹⁸ Վարդան 1970: 20:

Ձ. Քրեզն առանձնացնում է նաև հագուստի մեջ մուգ կարմիր քավչի ասեղնագործ զոզնոցը՝ տեղեկացնելով, որ այն խորհրդանշում էր ամուսնացած կնոջ կարգավիճակը¹⁹:

Խոսելով Էրզրումի վիլայեթի հայ կնոջ էուրյան՝ կերպարի մասին, հեղինակը քավականին հակասական կարծիքներ է հայտնում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա քննության է առնում տարբեր իրավիճակներում հայտնված կանանց դեպքեր: Բացի այդ, նա առանձնացնում է Էրզրում քաղաքում և շրջակա գյուղերում ապրող հայ կանանց: Օրինակ՝ նա կասկածի տակ է դնում Էրզրումում ապրող հայ կնոջ բարոյական կերպարը՝ մատնանշելով, որ Էրզրումցի կինը փորձում է հնարավորինս առավել առաքինի ներկայանալ, քան իրականում կա²⁰: Եվ եթե հայտնի է դառնում որևէ կնոջ՝ չամուսնացած օրիորդի կամ էլ ամուսնացած տիկնոջ, քերականաբար պահվածքի մասին, հրապարակայնորեն նրան պատժում են: Եվ հեղինակը չի բացառում, որ այն կանայք, ովքեր ամենաբարձրն են գտնում և վիրավորում՝ փորձելով շեշտել իրենց առաքինությունը, հաջորդ օրը նույն իրավիճակում կարող է հայտնվել²¹: *«Թուրք կամ հայ կանայք, շնայած այն հանգամանքին, որ քավականին փակ են հագնվում, ցանկության դեպքում, խաբելով ամուսնուն և հարազատներին, կարող են հանգիստ հաճողիպել իրենց սիրեկաններին»*²²: Այստեղից նա եզրակացնում է, որ *«հայ կինը ոչնչով չի տարբերվում նվրուպացի իր քույրերից»*²³: Միաժամանակ նա մատնանշում է այն հանգամանքը, որ, ի տարբերություն նվրուպացի կանանց, արևելքի կանայք՝ շնորհիվ իրենց հագուստի, հեշտությամբ կարող են խաբել և մոլորեցնել շրջապատին. նրանց հագուստը այնպես է ծածկում մարմինը, որ որևէ մեկը չի կարող վստահորեն հաստատել, որ տեսել է տվյալ կնոջը²⁴:

¹⁹ Creagh 1880: 101.

²⁰ Ibid: 104.

²¹ Ibid: 112.

²² Ibid: 113.

²³ Ibid.

²⁴ Ibid.

Հետաքրքիր է, որ հեղինակը աշխատությունում քվարկում է նույնիսկ այն արդարացումները, որոնք Էրզրումի հայ կանայք բերում են, եթե այդ գիշեր չեն վերադառնում տուն՝ «մնացիլ հմ հիվանդ ընկերուհու մոտ»²⁵, «ժամանակը այնպես անցավ, որ չնկարեցինք, որ մութն ընկել է և վրանգավոր էր փողոց դուրս գալ և ամենասպառնալից այնքան մնալն էր՝ մինչև լուսանար»²⁶:

Բացի այդ, նկատում է, որ հիմնականում ամուսիններին դավաճանում են հայ առևտրականների կանայք²⁷, քացատրելով, որ վերջիններիս ամուսինները քացակայում են երկար ժամանակ, և այդ ընթացքում նրանց կանայք սիրեկաններ ու ավելի հարուստ հովանավորներ են գտնում²⁸:

Հեղինակը դա պայմանավորում է կնոջ քնական անկայունությամբ, աշխատանքի հնարավորությունից զրկված լինելու հանգամանքով, չիմանալով ինչպես իր ժամանակը վատնել²⁹: Ի վերջո գալիս է այն եզրակացության որ «ցանկացած ազգի կնոջը քնորոշ է կանացի խորամանկությունը», վերջինս նրա էությունն է³⁰:

Բացի այդ, Ջ. Ջրեզը նկատում է, որ հայ կանայք, ի տարբերություն մյուս ազգերի, ավելի հանդուրժողական են ամուսնության հարցում: Նա գրում է, որ Էրզրումում կան շատ դեպքեր, երբ «երիտասարդ օրիորդը, սիրահարվելով քուրք երիտասարդի, հրաժարվում է իր ընտանիքից և կրոնից, սեփական կամքով ընդունում է իսլամ, որպեսզի հավերժ սպրի իր սիրելի էակի հետ»³¹: Միաժամանակ հեղինակը նկատում է, որ այդ երևույթը ընդունված չէ մուսուլման կանանց մեջ³², ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մուսուլմանական հասարակությունում, այդ բվում Օսմանյան կայսրությունում, մուսուլման տղամարդը կարող է ամուսնանալ ոչ մուսուլման կնոջ

²⁵ Ibid: 114.

²⁶ Ibid.

²⁷ Ibid: 112.

²⁸ Ibid.

²⁹ Ibid: 115.

³⁰ Ibid.

³¹ Ibid: 105.

³² Ibid: 106.

հետ, մինչդեռ կինն իր հերթին չէր կարող ամուսնանալ այլադավան տղամարդու հետ:

Ձ. Քրեզը նկատում է, որ «*հայկական մշակույթի անբաժան մասն է ընտանեկան ամուր կապերը և, իհարկե, արևելքում հայերի նման չկա մի ժողովուրդ, որի մուր կնոջ սոցիալական դիրքն այդքան բարձր լինի*»³³: Նա բավականին բարձր է գնահատում այն երևույթը, որ հայ օրիորդները իրենց եղբայրների հետ հավասար ժառանգորդներ են, նրանց ստանում են եղբոր ժառանգությանը հավասար մասնաբաժին: Սակայն երե վերջիններս առանց ծնողների համաձայնության ամուսնանում են, ապա նրանք կորցնում են իրենց ժառանգությունը³⁴:

Հեղինակը համեմատական է տանում հայկական, մուսուլմանական և եվրոպական ընտանիքների միջև և հանգում է այն եզրակացության, որ հայերը եվրոպացիների նման «*քաղաքակիրթ ազգ են*»³⁵:

Ըստ Ձ.Քրեզի՝ արևելքում տղամարդը ճնշում և բռնության է ենթարկում կնոջը: Մինչդեռ նույն արևելքում ապրող հայ ընտանիքում հարգում են կնոջը: Նա նկատում է, որ այդ երևույթները բնորոշ են եղել եվրոպական երկրներին ևս, սակայն վերջիններս հասել են քաղաքակրթության այն մակարդակին, որ կարողացել են հաղթահարել դրանք՝ հասկանալով կնոջ արժեքը³⁶:

Նա քննադատում է քազմակնության երևույթը և նկատում, որ կնոջ սերը ամուր հիմք է հանդիսանում լավ տղամարդու ձևավորման համար: Մինչդեռ քազմակնությունը թույլ չի տալիս տղամարդուն պայքարել իր սիրելի էակի համար, ինչն էլ պատճառ է հանդիսանում, որ տղամարդու մոտ չի առաջանում սեր և հարգանք կնոջ նկատմամբ: Նա դատապարտում է այն հարաբերությունները, որտեղ կինը

³³ Ibid: 115.

³⁴ Ibid: 116.

³⁵ Ibid.

³⁶ Ibid.

որպես ստրուկ կամ մեքենա է դիտվում, որի միակ արժանիքը երեխա ունենալն է³⁷:

Այդ առումով հայկական ընտանիքը տարբերվում է մուսուլմանական ընտանիքից: Նա նշում է, որ հայ տղամարդը, եթե նույնիսկ դեռ չի տեսել իր հարսնացուին, արդեն նրան սիրում է, քանի որ վերջինս արժանացել է իր մոր հավանությանը³⁸:

Այուս կարևոր հատկանիշը, որի մասին նա երկար խոսում է, երիտասարդ աղջկա նոր ընտանիք մտնելն է, որտեղ նա առաջին իսկ օրվանից կրթություն է ստանում³⁹: Ըստ նրա՝ օրիորդի համար ամուսնությունը դպրոց է, որտեղ նա սովորում է հարգել մեծերին: Եվ եթե այդ դպրոցը չլիներ, ապա մի ընտանիքում այդքան հարսներ չլին կարող միասին ապրել⁴⁰: Առաջին կանոնն է՝ «*գաղղրնապահ լինել և մեկը մյուսի մասին չքամքասել*»⁴¹: Ավելին՝ ընտանիքում աղմուկից, անիմաստ վեճերից խուսափելու համար հարսներին արգելվում էր միմյանց հետ խոսել, քացառությամբ իրենց ամուսինների, քանի դեռ իրենք երեխաներ չունեին⁴²: Երեխայի ծնունդից հետո նրանք իրավունք էին ստանում խոսել իրենց երեխաների հետ, այնուհետև քավական ցածր ձայնով՝ կանանց հետ, որպեսզի տղամարդիկ չլսեին իրենց ձայնը: Ավելի ուշ՝ տարիների ընթացքում կնոջ հեղինակությունը գնալով մեծանում է և նրա ձայնը ամենաարժրն է հնչում⁴³:

Նկատենք, որ ընտանիքում հայ կնոջ կարգավիճակի նման նկարագիրը գալիս է հաստատելու այն ենթադրությունը, որ ճանապարհորդը որոշ ժամանակ ապրել է հայ ընտանիքում: Քանի որ իրականում հայ կինը ամուսնանալուց հետո իրավունք չունեի խոսելու ոչ որի հետ, նույնիսկ ընտանիքի կանանց և շատ դեպքերում՝ անգամ ամուսնու հետ⁴⁴: Այդ սովորույթը հայերը քացառում են նրա-

³⁷ Ibid: 117.

³⁸ Ibid.

³⁹ Ibid.

⁴⁰ Ibid: 118.

⁴¹ Ibid.

⁴² Ibid.

⁴³ Ibid: 119.

⁴⁴ Նոսիսպետյան 2017: 81:

նով, որ նորահարսը պետք է պատկանի իր ամուսնուն ոչ միայն մարմնով, այլև հոգով և մտածելակերպով, ուստի պետք է բացատրապես նրա հետ շփվի⁴⁵: Այն ծառայում էր անաղարտ ժառանգ ունենալու նպատակին և հայերի շրջանում գոնե ժամանակավոր բնույթ էր կրում. հիմնականում դա տևում էր մինչև առաջնեկի ծնունդը, իսկ երբեմն՝ 15 օրից մինչև 7 տարի: Այս արգելքը պահպանվել է մինչև XX դարի սկիզբը՝ առավելապես սովորութային իրավունքի ուժով⁴⁶:

Ձ. Քրեզը մի շարք հետաքրքիր դիտարկումներ էլ է անում: Օրինակ՝ ցանկացած փոքր հարս ամենաշատն է ուրախանում տեղորոշ ամուսնությամբ՝ քանի որ իր կարգավիճակը փոխվում է և իր պարտականությունները բարդվում են նոր հարսի ուսերին⁴⁷: Կամ էլ ցանկացած ընտանիքում խառնակիչը աղջկա մայրն է՝ գորանչը, որը իր բարի և չար խորհուրդներով վեճի պատճառ է դառնում ընտանիքում⁴⁸:

Հեղինակը հայ հասարակությանը դատապարտում է միայն նրանում, որ վերջինս ձեռք չի մեկնում սխալ բույլ տված և սայրաբաժ աղջկան, որի միակ ճանապարհը ինքնասպանությունն է կամ էլ ավելի խճճվելը իր սխալների մեջ:

Այսպիսով, Ձ. Քրեզը իր աշխատության մեջ հայերին վերաբերող հատվածում բավականին մեծ տեղ է հատկացնում հայ կնոջ կերպարին, պահվածքին և սոցիալական կարգավիճակին՝ փորձելով ցույց տալ, որ պետականության բացակայության և օտար տիրապետության շրջանում հայ կինը կարողանում էր պահպանել ազգային նկարագիրը: Աշխատանքը վերլուծելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ քրիտանագի հեղինակի գնահատմամբ՝

- հայուհիները բավականին գեղեցիկ են.
- մուսուլմանական միջավայրում նրանք փորձում են ամեն կերպ բացքնել իրենց գեղեցկությունը և հմայքը.

⁴⁵ Елисеева 1888: 36.

⁴⁶ Կոնստանդյան 2017: 81:

⁴⁷ Creagh 1880: 114.

⁴⁸ Ibid: 120.

- նրանց պահվածքը և հագուստի ընտրությունը պայմանավորված է միջավայրով.
 - արևելյան կանայք, այդ թվում հայուհիները, իրենց էությունը չեն տարբերվում եվրոպացի կանանցից.
 - ի տարբերություն մուսուլմանական աշխարհի՝ հայ կնոջ սոցիալական դիրքը հասարակության մեջ բավականին բարձր է.
 - ընտանիքում հայ կինը սիրո և հարգանքի է արժանանում:
- Ի վերջո նա նշում է, որ *«չնայած նոր ընտանիք մուտք գործած աղջիկը սրիպված է դժվարություններ հաղթահարել, սակայն ավելի ուշ նա դառնում է տան իրական տիրուհին՝ բավականին մեծ իշխանությամբ, և բոլորը նրան են ենթարկվում»⁴⁹:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Բարդաղյան Գ. 2018.** Հայաստանը և հայերը 19-րդ դարի անգլիացի ճանապարհորդների աչքերով, 13.01.2018, <http://www.cultural.am/hy/norutyunner/hodvacnet/3460-hayastany-ev-hayery-19-rd-dari-angliacijanaparhordneri-achqerov> (19.08.2020)
- Նահապետյան Ռ. 2009.** Կինը հայոց ավանդական ընտանիքում, Պատմաբանասիրական համդես, 2009/1, 71-87:
- Մովսեսյան Գ. 1982.** Երկեր, հ. 2, Երևան:
- Վարդան Լ. 1970.** Խորականությունը Օսմանեան կայսրության մեջ, «Հայկազեան հայագիտական համդես», Պէյրոս, հ. Ա., 9-45:
- Елисава А. В. 1888.** Положение женщины на Востоке, Северный вестник, Санкт-Петербург, No 10, 29-72.
- Creagh J. 1880.** Armenians, Koords and Turks, V. 1-2, London.

⁴⁹ Ibid: 120.

THE ARMENIAN WOMAN'S IMAGE REPRESENTED BY THE BRITISH TRAVELER OF THE XIX CENTURY J. CREAGH

Keywords: Ottoman Empire, British traveler, the Armenian woman's image, Islamic world, Christian society, Armenian settlements, traditions, customs.

Abstract

The image of the Armenian woman was used by many European travellers in their works; one of them was the British traveller of the 19th century of James Creagh. The image of the Armenian woman was interpreted as the embodiment of beauty and motherhood. An Armenian man in the book of J. Creagh is presented as a courageous, honest, loyal person who can rely on his family, and the woman is a dedication to both family and national values.

Accordingly, endowing the image of an Armenian by many positive features allows us to conclude that the British traveler has a sense of deep respect for the Armenian people.

Christine Melkonyan
PhD, Institute of Oriental Studies NAS RA,
Department of Turkish Studies, Senior Researcher,
chmelkonyan@orient.sci.am

**ԿՐՈՋ ԳԵՐԸ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՄՈՆԴՈԼԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Բանալի քառեր՝ մոնոլոլ կանայք, Թորեզենն, Սորխոխարանի, Օղուլ
Գայնիչ, խնամակալ, մոնոլոլական հասարակություն, Մոնոլոլական տերու-
րյուն:

Համառոտագիր

*Միջնադարյան մոնոլոլական հասարակությունը քոչվորական քաղա-
քակրթության ուրույն մողել է հանդիսանում: Այդ հարացույցի հիմքում
կանգնած է Չինգիզ խանը, ով կարողացավ միավորել մոնոլոլական ցեղե-
րին և հիմնադրել համամոնղոլական կայսրություն: Չինգիզ խանը համա-
դրել էր քոչվորական քաղաքակրթության գրաբեր սվանդույրներն ու
ինստիտուտները՝ դրանց ավելացնելով փարածաշրջանի ավելի զարգա-
ցած ժողովուրդների, մասնավորապես ուլդուրների ու չինացիների չեղքե-
րումները:*

Միջնադարյան մոնոլոլական հասարակությունը, ինչպես և բոլոր
միջնադարյան արևելյան հասարակությունները, կազմակերպված էր
հայրիշխանության սկզբունքի հիման վրա, թեև կանայք ևս ունեին
զգալի իրավունքներ¹: Ըստ ռուբյան՝ քյուրք-քաթարական հանրու-
թյան մեջ կանանց դերը կարելի է քնութազրել երկակի: Մի կողմից՝
նրանք ունեին զգալի իշխանություն թե՛ ընտանիքում, թե՛ հասարա-
կության մեջ, մյուս կողմից՝ կանանց վաճառում, զնում կամ փոխա-
նակում էին, հաճախ նաև փախցնում: Այս վերջինը յուրահատուկ

¹ Չինգիզյանների տոհմի ժազոմնաքանության ակունքներում կանգնած է կին՝ Ալան-
Գուան: Նա ամուսնու մահից հետո անհասկանալի հանգամանքներում յույս աշխարհի
է քելում երեք տղաների, որոնցից Բոլոնշարը և նրա սելունդները համարվում են
Չինգիզ խանի նախնիները: Տե՛ս **Рамона-Аа-Дин** 1952: 10-15; **The Secret History of
the Mongols** 2015: 3-4.

ավանդույթ էր մոնղոլական ցեղերի շրջանում, քանզի հաճախ տարբեր ցեղերի միջև բախումների ժամանակ փախցնում էին կամանց, առաջին հերթին դրանք ցեղապետի և նոյննների կամայք էին: Սովորաբար ամուսնանում էին փախցրած կնոջ հետ, և նա դառնում էր այդ ցեղի լիիրավ անդամը, սակայն քիչ չէին դեպքերը, երբ փախցրած կնոջը հետ էին քերում, և նա իր նախկին կարգավիճակով շարունակում էր ապրել այդ հանրույթում: Պատմիչներն այսպիսի տեղեկություններ են հաղորդում ինչպես Չինգիզ խանի մոր, այնպես էլ նրա առաջին կնոջ՝ Բորտեի մասին²:

Կամանց մասին Չինգիզ խանի պատգամներից մեկում ասվում է. «Տղամարդը արև չէ, որ մարդկանց երևա ամենուր: Կինը, երբ նրա ամուսինը զնում է որսի կամ պատերազմի, պիտք է պահպանի փունջ և հոգ փանի այն մասին, որ դեսպան կամ հյուր կանգ առնի այդ փանջը, փեսան, որ ամեն ինչ կարգին է իսկ հեղտ համեղ սնունդ պատրասարի և այն, ինչ հարկավոր է հյուրի համար: Նման կինը, անշուշտ, լավ համբավ կարեղծի իր ամուսնու համար, կրարչրացնի նրա ամուսնը, և նման ամուսինը հասարակական ժողովներում կրարչրանա ինչպես լիռը: Ամուսնու լավ հարկանիչներն իմացվում են կնոջ լավ հարկանիչներով: Երե կինը հիմար է և անխելամիտ, փնրի է և քափքիված, ապա նրանով ամուսինն էլ է ճանաչվում»³:

Միջնադարյան մոնղոլական հասարակության մեջ որպես կանոն տղամարդը զնում էր կնոջը նրա ծնողներից բավականին բանկ զնով: Մոնղոլները նաև կնության էին վերցնում նվաճված կամ իրենց ենթակա ժողովուրդների կամանց, ընդ որում՝ հաճախ մանկահասակ երեխաների հետ միասին: Այս մասին հիշատակում է միջնադարյան հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին, երբ նկարագրում է մոնղոլների կողմից հայկական ծաղկուն բնակավայրերի ավերումը. «Եւ անցաւ առ վրդին ակամայ իջուցեալ զնոսա, և անցաւ արքուցեալ ջուր, արգե-

² See The Secret History of the Mongols 2015: 30-32, 38-39.

³ Рашид-Ал-Дин 1952: 261.

⁴ Иоанн де Плано Карпини 1911: 5; Вильгельм де Рубрук 1911: 78.

լին ի մէջ իրեանց և առին զվանայս, որոց ցանկացան, և սպանին զարս նոցա. և զկէս բողին առ արանց իրեանց»⁵:

Իտալացի ճանապարհորդ Պլանո Կարպինին հիշատակում է, որ մոնղոլները վերցնում էին այնքան կին, որքան կարող էին պահել, և այս առումով հստակ սահմանափակում չկար: Մոնղոլներն ամուսնանում էին իրենց զարմուհիների հետ՝ բացի իրենց մորից, աղջկանից ու քրոջից, եթե նույն մորից էին ծնվել: Նրանք ամուսնանում էին նաև իրենց մահացած հոր և եղբայրների կանանց հետ, որն այս դեպքում ավելի շուտ պարտավորություն էր հիշեցնում: Սակայն այս դեպքում հստակ առանձնացվում էր գլխավոր կինը, որը մյուս կանանց նկատմամբ ուներ ավելի մեծ իշխանություն, և միայն նրա երեխաները կարող էին ժառանգել գահը: Մյուս կանայք ենթարկվում էին գլխավոր կնոջը, քեև նրանք ևս կարող էին ունենալ առանձին վրաններ, իսկ եթե հարուստ ընտանիքից էին՝ նաև առանձին տարածքներ:

Կանայք մասնակից էին միջնադարյան մոնղոլական հասարակության կյանքի բոլոր քննազավառներին: Նախ կարևոր էր ընտանիքում նրանց դերը, որը հասկանալու համար պետք է անդրադառնալ մոնղոլական քննազավառներ համդիսացող յուրդերին (վրաններին - Ն. Մ.): Ըստ էության՝ յուրդերում աշխատանքները կազմակերպում էին հիմնականում կանայք: Նրանք էին հոգ տանում յուրդի մասին, ամբարում մթերքը, կարում շորերը և կատարում մնացած աշխատանքները այն դեպքում, երբ տղամարդիկ զբաղված էին պատերազմներով կամ որսով: Մոնղոլները հիմնականում վարում էին քույրական կենսաձև, այսինքն՝ հաճախ էին տեղափոխվում մի վայրից մյուսը, իսկ այս դեպքում յուրդի հավաքման և տեղափոխման աշխատանքները ևս մեծ մասամբ կատարում էին կանայք⁶:

Մոնղոլական հասարակության մեջ կանանց բարձր կարգավիճակի մասին է վկայում այն, որ նրանք ներգրավված էին հասարա-

⁵ Կիբակու Պաննուկեցի 1961: 255:

⁶ Չլամանդացի ճանապարհորդ Գիլյոմ դը Ռոբբորը «Ճանապարհորդություն արևելյան երկրներ» աշխատության մեջ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում մոնղոլական վրանների, դրանց տեղափոխման, տեղադրման, կանանց հատկացված բաժինների և նրանց կենցաղավարության մասին: Ավելի մանրամասն տե՛ս **Восточная Азия** 1911: 69-71.

կական իրադարձություններում, այդ բնույթում և մասնակցում էին պատերազմներին: Նրանք ոչ միայն մասնակցում էին ռազմական զործողություններին, այլև իրենց հրամանատարության տակ ունեին զինվորներ⁷: Տարբեր աղբյուրների վկայությամբ՝ խանական ընտանիքի կանանց և զինվորներ էր հատկացվում, ինչպես, օրինակ, Չինգիզ խանի մորը, կնոջը, դուստրերին և հարսներին⁸: Հարկ է նշել, որ միջմադարում մոնղոլ կանայք ստանում էին խիստ դաստիարակություն, դեռևս մանուկ հասակից նրանք սովորում էին ծիսվարել, նետահարել և կռվել⁹. Խոսքը մասնավորապես վերաբերում է նոյոնների ու խանական ընտանիքի կանանց ու աղջիկներին: Մոնղոլների «Գաղտնի պատմություն»-ում առանձնացված են խանի դուստրերը, որոնք ղեկավարում էին ուլուսը՝ միաժամանակ հանդես գալով որպես զորքի հրամանատարներ և մասնակցելով պատերազմների¹⁰: Պարսիկ պատմիչ Ջուվայնին նշում է, որ մոնղոլական զորքի Նիշապուր մտնելուց հետո «*Չինգիզ խանի դուստրը, որ Թոգաչարի գլխավոր կինն էր, իր պահակախմբով մտնում է քաղաք, և նրանք խնայում են միայն 400 մարդու կյանք, որոնք արհեստավորներ էին, և փանում են Թուրքեստան*»¹¹: Կարծում ենք՝ այս իրողությունը զարմանալի չէ, քանզի Մոնղոլական տերության հիմքում դրված էր ռազմական ուժը, հասարակական-քաղաքական համակարգն ամբողջությամբ ռազմականացված էր, հետևաբար կանայք ևս հանդիսանում էին այդ համակարգի մասը:

Մոնղոլ կանայք մասնակից են դարձել նաև հասարակության հոգևոր կյանքին: Այսպես, շամաններ էին լինում հավատարապես քնտրամարդիկ, և քն՝ կանայք:

Մոնղոլ կանայք թեև ուղղակիորեն քաղաքականությամբ զբաղվելու իրավունք չունեին, սակայն լայնորեն ներգրավված են եղել միջմադարյան մոնղոլական հասարակությունում տեղի ունեցող քա-

⁷ Nicola de Bruno 2008: 104-105.

⁸ Nicola de Bruno 2008: 105-107.

⁹ Hoan de Plano Carpino 1911: 16.

¹⁰ Peter Jackson 1999: 15-16.

¹¹ Juvaini Ata-Malik 1958: 177.

դարական գործընթացներում: Չինգիզ խանի ժամանակներից սկսած՝ նկատվում է կանանց ակտիվ մասնակցություն տերության քաղաքական կյանքին՝ իհարկե, այս շրջանում նրանք հիմնականում հանդես էին գալիս որպես խորհրդատուներ: Չինգիզ խանի հիմնական խորհրդատուներն են եղել մայրը՝ Օելունը և կինը՝ Բորտեն¹²: Փաստորեն, Թենուշինի ընտանիքում փոխվում է կնոջ դիրքը. մինչ-խանական շրջանի հետ հանձնատած՝ նկատվում է կնոջ դերի բարձրացում, մասնավորապես կինը մասնակցում է ոչ միայն պետության սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական կյանքին¹³: Չինգիզ խանի տերության քաղաքական ու հասարակական կյանքին մասնակցել են ոչ միայն այս երկու կանայք, այլև Չինգիզ խանի դուստրերը: Չինգիզ խանը քաղաքական հարցեր լուծելու համար իր դուստրերին կնության է տվել տարբեր ցեղերի առաջնորդներին: Կլանների միջև փոխադարձ կապեր հաստատելու համար կարևոր դեր ունեին կանայք. քանզի նրանք միավորում էին ցեղերին¹⁴: Անգամ մոնղոլների «Գաղտնի պատմություն»-ում հիշատակություն կա, որ Չինգիզ խանը ցանկացել է իր կայսրությունը թողնել դուստրերին, այլ ոչ թե որդիներին: Անձնայն հավանականությամբ՝ տարբեր կլանների միջև ընթացող պայքարի արդյունքում նա կայսրությունը թողնում է որդիներին, սակայն տերության ռազմավարական կարևոր տարածքները վստահում է իր դուստրերին:

Չինգիզ խանի մահից հետո Մոնղոլական տերության հետագա կայացման ու հզորացման գործում մեծ ներդրում են ունեցել կանայք, այս դեպքում՝ նրա հարսները: Արդեն ձևավորված պետական համակարգի պայմաններում վերջինները հանդես են եկել որպես խնամակալներ: Գիտենք, որ Չինգիզ խանի մահից հետո մեծ խան է հռչակվում նրա որդի Ուգեդեյը (1229-1241): Վերջինս առանձնապես աչքի չէր ընկնում ղեկավարելու ունակություններով և զբաղվում էր հարբ-

¹² Չինգիզ խանի մասնավոր կյանքում կարևոր դեր են կատարել նրա 4 կանայք՝ Բորտեն, Քուլանը, Յետսին և Յետգեները: Իրանը նրանց յուրաքանչյուրին առանձին վրան էր հատկացրել: Արչավանքների ժամանակ այս կանանցից մեկը ուղեկցում էր նրան: Hartog de Leo 2004: 140; Broadbridge 2018: 73-100.

¹³ Nicola de Bruno 2017: 48.

¹⁴ Крадин, Сурьянникова 2006: 84.

ցողոքյամբ, ուստի իշխանությունն աստիճանաբար իր ձեռքում է կենտրոնացնում նրա կինը՝ Թորեզենեն¹⁵: Նշենք, որ Թորեզենեն Ուզեղեյի երկրորդ կինն էր՝ մերկիտների ցեղից¹⁶: Պարսիկ հայտնի պատմիչ Ռաշիդ ադ-Դիմի վկայությամբ «այս կինը շար գեղեցիկ չէր, բայց իր քնությանը շար իշխանացին էր...»¹⁷: Թորեզենի ունեցած իշխանության ու հեղինակության մասին են վկայում նրա անունով հատված դրամները: Դառասկան տեքստերում տեղեկություններ են պահպանվել, որ դեռևս Ուզեղեյի կենդանության օրոք նա ներկայացվում էր որպես Մեծ Կայսրուհի¹⁸ և անգամ հանդես էր գալիս դատավորի դերում: Սա փաստում է այն մասին, որ կայսրության ներսում իշխանությունը գտնվում էր նրա ձեռքում: Աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել, որ նա զբաղվել է կրոնական հարցերով, հատուկ ուշադրություն է դարձրել կրթությանն ու շինարարությանը:

Ուզեղեյի մահից հետո՝ 1241 թ., Թորեզենեն ստանձնեց երկրի կառավարումը որպես խնամակալ¹⁹, քանի որ նրա ավագ որդի Գույուք խանը դեռևս չէր վերադարձել Դաշտ-ի Դիշադ ձեռնարկված արշավանքից: Ըստ էության՝ նա իր նախաձեռնությամբ զավթեց իշխանությունը և Մոնղոլական տերությունում հիմք դրեց կանանց խնամակալության ավանդույթին: Թորեզենի խնամակալության ժամանակաշրջանում թե՛ մայրաքաղաքում, թե՛ կայսրության մյուս վայրերում քարձր պաշտոնների են նշանակվում կանայք: Այսպես,

¹⁵ Ուզեղեյի մահից հետո մոնղոլական վերնախավի շրջանում ցնճարկումներ սկսվեցին խնամակալի ընտրության շուրջ: Այս հարցի շուրջ մոնղոլական վերնախավը բաժանվել էր երկու հատվածի: Մի հատվածը ցանկանում էր խնամակալ դարձնել Ուզեղեյի կանացից Մոզեխարունին, իսկ մյուսը՝ Թորեզենի խաբունին: Վերջինս կարողանում է հասնել աստվելության, քանզի համդխանում էր ապագա խանի մայրը: Տե՛ս *Nicola de Bruno* 2017: 68; *Juvaini Ata-Malik* 1958: 240:

¹⁶ Թորեզենի ծագման մասին զոյություն ունեցած տեսակետներից է, որ նա մերկիտների ցեղից էր, իսկ մեկ այլ տեսակետի համաձայն՝ նա եղել է մերկիտների ցեղի առաջնորդի կինը և գերի է վերցվել, երբ Չինգիզ խանը նվաճել է մերկիտներին, որից հետո խանը նրան կնության է տվել իր որդի Ուզեղեյին: Տե՛ս *Cyrranon* 2006: 41. (Որոշ հետազոտողներ կարծում են, որ նա եղել է նայմանների ցեղից, տե՛ս *Hartog de Leo* 2004: 183):

¹⁷ *Рамис-Аз-Дин* 1960: 9.

¹⁸ *George Lane* 2006: 236.

¹⁹ *Hartog de Leo* 2004: 183.

այդ ժամանակ պետությունում Թորեզենեից հետո առաջին դեմքն էր Ֆարսիման, որը գերվել էր Խորասանի նվաճման ժամանակ: Ռաշիդ ադ-Դիհի բնութագրմամբ. «*Նա շար մկուն էր ու հնարամիտք և իր փրոտիու վարսահեյ անչն էր ու գաղտնիքների պահապանը: Պնկուրթյան բոլոր կարևոր հարցերը վճռվում էին նրա միջնորդությամբ*»²⁰: Ինչպես վկայում է պարսիկ պատմիչ Ջուվեյնին, Ֆարսիման եզակի մարդկանցից էր, ով անարգել էլումուտ էր անում Թորեզենեի վրան, ինչպես նաև ազատ էր իր գործողություններում ու հրամաններում²¹: Այս տեղեկությունները վկայում են, որ Ֆարսիման լայնորեն մասնակցում էր պետության քաղաքական կյանքին²²:

Թորեզենեի կառավարման ժամանակաշրջանը Մոնղոլական տերության պատմության կարևոր շրջաններից, քանզի այս ժամանակաշրջանում շարունակվում էին պետականաշինության գործընթացները: Հարկ է նշել, որ այս շրջանից սկսած՝ մոնղոլական վերնախավն աստիճանաբար հեռանում է քոչվորական ավանդույթներից և պետական համակարգերի ձևավորման ու կայացման գործընթացներում հիմնականում ընդօրինակում կամ առաջնորդվում էր չինական կայսերական ավանդույթներով: Բացի այդ, առկա էր նաև կրոնական կողմնորոշման խնդիրը, քանզի շամանականությունը չէր կարողանում ապահովել հսկա կայսրության գաղափարական-կրոնական հիմքերը: Այս պայքարը սկիզբ է առնում Չինգիզ խանի մահից հետո, հետևաբար նրան հաջորդած խաների, ինչպես նաև խնամակալների համար առաջնային խնդիր էր տերության մոնղոլական կերպարի պահպանումը: Պատահական չէր, որ այս խնդիրը հուզում էր նաև Թորեզենեին, ուստի և նա ձեռնարկում է մի շարք բարեփոխումներ: Ըստ էության՝ Թորեզենեն իր դիվանագիտական ընդունակություններով կարողանում է վերահսկել իրավիճակը և ապահովել տերության

²⁰ Рашид-Ал-Дин 1960: 115.

²¹ Juwaini Ata-Malik 1958: 245.

²² Գույուք խանի գահ բարձրանալուց հետո Ֆարսիմանի քաղաքական հսկառավորչներին հաջողվում է խանին համոզել, որ նա զբաղվում է մեզոքությամբ: Խանի հրամանով նրան մեքրակալում են և ենթարկում կասանքների, որոնց արդյունքում Ֆարսիման ընդունում է բոլոր չգործած հանցանքները և տանջամահ է արվում (Рашид-Ал-Дин 1960:117):

զարգացումը: Թորեզենեն մեծ տեղ է հատկացնում մահ արտաքին հարաբերություններին, և սկզբնաղբյուրների վկայությամբ՝ ինչպես կայսրության մեջ ընդգրկված տարբեր երկրների առաջնորդները, այնպես էլ հարևան պետությունների պատվիրակությունները ժամանում էին մայրաքաղաք Կարակորում և բանակցություններ վարում նրա հետ: 1246 թ. Թորեզենեն դուրուլայ է հրավիրում և գահ բարձրացնում իր որդի Գույուքին (1246-1248): Վերջինիս թագադրությունից մի քանի ամիս անց Թորեզենեն մահանում է:

Գույուքը ևս երկար չի կառավարում, և նրա մահից հետո կայսրությունը կառավարում էր նրա այրի Օղուլ Գայմիչը: Ի տարբերություն Թորեզենեի, որ հավասարապես տեղ էր տալիս բոլոր կրոններին և հովանավորում հայտնի հոգևորականներին ու նրանց դպրոցները՝ Օղուլ Գայմիչը միայն շամանականությանն էր տեղ տալիս: Նա շատ ժամանակ էր անցկացնում շամանների հետ՝ տրվելով նրանց երևակայություններին ու անհեթեթություններին, ուստի անգամ մեղադրվեց կախարդության մեջ²³: Օղուլ Գայմիչն անգամ չկարողացավ համախմբել իր որդիներին, որոնցից յուրաքանչյուրը ցանկանում էր զբաղեցնել մեծ խանի գահը: Սակայն առավել կարևորն այն էր, որ նա չկարողացավ իշխանությունն ամբողջությամբ վերցնել իր ձեռքը, հատկապես համագործակցել Չինգիզյանների տոհմի ավագ ներկայացուցիչ Բաբու խանի հետ, ինչպես մահ վերահսկողություն հաստատել գործի նկատմամբ:

Ստեղծված իրավիճակից հնտորեն օգտվեց Օղուլ Գայմիչի հակառակորդ մեկ այլ իմաստուն ու իշխանատենչ կին, ինչպիսին էր Մորխտխբանին: Վերջինս Չինգիզ խանի կրտսեր որդու՝ Թուլուի այրին էր: Նա չորս երեխաների հետ մնաց մեմակ, երբ Թուլուն մահացավ, և ղեկավարում էր Հյուսիսային Չինաստանում ու Արևելյան Մոնղոլիայում: Նշենք, որ այս նույն ժամանակաշրջանում Չինգիզ խանի երկրորդ որդու՝ Չաղաբայի մահից հետո, նրա այրին՝ Էրուսկունը, ղեկավարում էր Թուրքեստանը²⁴: Ռաշիդ ադ-Ղիսն իր երկասիրության մեջ Մորխտխբանին ներկայացնում է որպես խելացի ու

²³ Juvaini Ata-Malik 1958: 265; Lane George 2006: 239.

²⁴ Juvaini Ata-Malik 1958: 273.

հնարամիտ կին, ով աչքի էր ընկնում իր կամքով, համեստությամբ, ամոթխածությամբ և իմաստունությամբ²⁵: Ամուսնու մահից հետո նա չի ամուսնանում և խնդրում է Ուգեղեյ խանին քույլ տալ զբաղվելու իր որդիների դաստիարակությամբ, և խանը համաձայնվում է չամուսնացնել նրան²⁶: Սորխտխարանին անծամբ էր դաստիարակել ու կրթել իր չորս որդիներին, որոնք բոլորն էլ դարձան մեծ խաներ՝ Մուներեն, Արիկ Բուկեն, Խուրիլայը և Հուլաղուն:

Չինգիզ խանի մահից հետո Թղուի հրամանատարության տակ անցավ կայսերական բանակի մեծ մասը: Թղուի մահից հետո՝ 1234 թ., Ուգեղեյը «*հրամայեց, որ ուլուսի գործերը և քանակի վերահսկողությունը պնար է վարահվի նրա գլխավոր կնոջը՝ Սորխտխարանի քեկիին*»²⁷: Հարկ է նշել, որ Թորեզենեի և Օղուլ Գայմիշի խնամակալության ժամանակաշրջանում տեղեկություններ չկան, որ նրանք վերահսկել են նաև կայսերական բանակը²⁸: Ըստ էության՝ զորքի նկատմամբ վերահսկողությունը դարձավ Սորխտխարանի իշխանության ու ազդեցության հիմնական հենքը, քանզի դա նրան հնարավորություն էր տալիս սերտ հարաբերություններ հաստատելու Չինգիզյանների ընտանիքի անդամների հետ, չենքարկվել Օղուլ Գայմիշին և նախածեռնել իր որդու գահակալությունը: Նշենք, որ Սորխտխարանին պաշտոնապես խնամակալ չի եղել, սակայն ակտիվորեն մասնակցել է ժամանակաշրջանի քաղաքական իրադարձություններին և ունեցել է մեծ ազդեցություն²⁹:

Սորխտխարանին հետևում էր կայսրությունում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին, մասնավորապես գահի շուրջ ըն-

²⁵ Рашид-Ал-Дин 1960: 111.

²⁶ Рашид-Ал-Дин 1960: 111-112.

²⁷ Рашид-Ал-Дин 1960: 112.

²⁸ Nicola de Bruno 2008: 106.

²⁹ Սորխտխարանին մեծ տեղ էր հատկացնում նաև կրոնին: Թեև նա նեստորական քրիստոնյա էր, սակայն հովանավորում էր կայսրությունում դավանող մյուս կրոնները ևս: Նա հովանավորում էր բուդդայականներին ու դառականներին՝ սիրաշահելով չինացի հպատակներին: Նա ողորմություն էր տալիս արքայա մուսուլմաններին, պաշտոնում էր մուսուլման տեղական առաջնորդներին, ինչպես նաև չինաստական միջոցներ էր տրամադրում մզկիթների ու մեղրեսների կառուցման համար: St's George Lane 2006: 240.

բացող պայքարին: Այսպես, երբ գահ է բարձրանում Գույուքը, մոնղոլական ավանդույթի համաձայն՝ քուրը պետք է այցելելին նրան, սակայն Ոսկե Հորդայի տիրակալ Բաթուն, որը մոնղոլական արքայազունների շարքում ամենամեծն էր ու պատկառելին, չի գալիս Կաթակորում՝ պատմառարանելով, Ռաշիդ աղ-Ղինի վկայությամբ, ոտքերի ցավը³⁰: Գույուք խանը Բաթուի այս քայլի մեջ դավադրություն է տեսնում և որոշում պատժել նրան³¹: Այս մասին Սորխտխսանին տեղյակ է պահում Բաթուին³²: Սակայն Գույուք խանը 1248 թ. մահանում է և, քնականաբար, չեղարկվում է Ոսկե Հորդայի դեմ նրա պատժիչ արշավանքը: Մյուս կողմից՝ նոր խան ընտրելու խնդիրն է առաջանում, ուստի և պայքար է սկսվում գահի համար: Սորխտխսանի խորհրդով նրա որդի Մունքեն այցելում է Բաթուին, որը, ինչպես վերևում նշել ենք, Չինգիզյանների տոհմի ավագ արքայազունն էր և, ըստ էության, խանի ընտրության հարցում նրա ձայնը վճռական նշանակություն ուներ: Բաթուն Մունքենին ընդունում է և ճանաչում նրա խանական իրավունքները³³: Ավելի ուշ Սորխտխսանի գործունեության արդյունքում, մասնավորապես Բաթուի աջակցությամբ, 1251 թ. հուլիսի 1-ին հրավիրվում է դուրուքայ, որտեղ մեծ խան է ընտրվում 43-ամյա Մունքեն (1251-1259)³⁴: Մի քանի ամիս անց՝ ամենայն հավանականությամբ 1252 թ. փետրվարին, Սորխտխսանին մահանում է: Փաստորեն Մոնղոլական կայսրությունում տեղի է ունենում մի յուրահատուկ հեղաշրջում, քանզի գերագույն իշխանությունն Ուգեդեյի ժառանգներից անցնում է Թուլուի ժառանգներին:

Հարկ է նշել, որ իշխանություն ունեցող կանանց մեծ մասը մոնղոլական ծագում չունեի և չէր դավանում մոնղոլների կրոնը՝ շամանականությունը: Այսպես, Սորխտխսանին դավանում էր քրիստոնեու-

³⁰ Рашид-Ал-Дин 1960: 112.

³¹ Султанов 2006: 46.

³² Рашид-Ал-Дин 1960: 112.

³³ Рашид-Ал-Дин 1960: 113, 130-131; Тренкалов 1993: 79-80.

³⁴ Սորխտխսանին և Բաթուն համաձայնության են գալիս կայսրությունը քաժանել երկու մասի. Բաթուն և Ջուչի ժառանգները իշխելու էին տերության արևմտյան մասում, Մունքեն և Թուլույի ժառանգները ղեկավարելու էին արևելքը, և կողմնորոշում համաձայնվում են, որ Սեծ խանի տիրոջն անցնեի Մունքենին (Broadbridge 2018: 205):

բյուն՝ նեստորական ուղղությամբ, սակայն միաժամանակ հովանավորում էր մուսուլմաններին: Մոնղոլները, կնուրյան վերջնելով տարբեր ցեղերին ու ժողովուրդներին պատկանող կամանց, չէին ստիպում նրանց կրոնափոխ լինել, ավելին, այս հարցում հանդուրժողականությամբ էին ցուցաբերում: Հետագայում նվաճված տարրեր երկրներում հաստատված մոնղոլական վերնախավը ենթարկվում է տեղական կրոնական ազդեցությանը:

Այսպիսով, միջնադարյան մոնղոլական հասարակությունում կամանց դերը չէր սահմանափակվում միայն ընտանիքով, նրանք մասնակցում էին երկրի հասարակական և քաղաքական կյանքին: Ըստ էության կամայք ավելի քիչ իրավունքներ ունեին տոհմատիրական հասարակարգում, իսկ կայսրության ստեղծման ու պետական համակարգի ձևավորմանը զուգահեռ նկատվեց կնոջ դերի ու կարգավիճակի բարձրացում: Սա առաջին հերթին կապված էր Մոնղոլական տերության հիմնադիր Չինգիզ խանի անվան հետ, քանզի նա սկսեց կամանց ընդգրկել պետական համակարգի ու հասարակական կյանքի տարրեր ոլորտներում: Այս շրջանից սկսած՝ կամայք հանդես էին գալիս որպես խորհրդատուներ, ինչպես նաև հրամանատարներ, ուստի ուղղակիորեն սկսում են մասնակից դառնալ կայսրության քաղաքական կյանքին: Կարծում ենք՝ կամանց ներդրումը հատկապես մեծ էր Չինգիզ խանից հետո կայսրության կազմակերպման ու կայացման գործընթացներում: Այս շրջանում կամայք արդեն ղեկավար դեր են ստանձնում կայսրությունում՝ հանդես գալով որպես խնամակալներ, ուլուսների ղեկավարներ և բարձր պաշտոնյաներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Վիրալուս Փանձակիցի 1961. Պատմություն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան:

Вильгельм де Рубрук 1911. Путешествие в восточные страны, С.-Петербург.

Ноани де Плано Карпини 1911. История монголов, СПб.

Кразин Н. Н., Скрынникова Т. Д. 2006. Империя Чингиз-хана, Москва.

Рашид-Ад-Дин 1952. Сборник Летописей, том I, Книга II, Москва-Ленинград.

- Рашид-Ад-Дин 1960. Сборник Летописей, том II, Москва-Ленинград.
- Султанов Т. И. 2006. Чингиз-хан и Чингизиды. Судьба и власть, Москва.
- Трепавлов В. В. 1993. Государственный строй Монгольской империи XIII в., Москва.
- Broadbridge F. Anne 2018. Women and the Making of the Mongol Empire, New York.
- George Lane 2006. Daily Life in the Mongol Empire, London.
- Hartog de Leo 2004. Genghis Khan Conqueror of the World, New York.
- Jackson P. 1999. From Ulus to Khanate: The Making of the Mongol States c. 1220 - c. 1290, in The Mongol Empire & its Legacy, R. Amitai-Preiss & David O. Morgan (eds), Leiden, 12-38.
- Juvaini Ata-Malik 1958. The History of the World-Conqueror, Cambridge – Massachusetts.
- Nicola de Bruno 2008. Women's Role and Participation in Warfare, in Soldatinnen. Gewalt und Geschlecht im Kring vom Mittel alter bis heute, Vol 60, 95-112.
- Nicola de Bruno 2017. Women in Mongol Iran: The Khatuns, 1206-1335, Edinburgh.
- The Secret History of the Mongols 2015. Translated by Igor de Rachewiltz.

THE ROLE OF A WOMAN IN THE MEDIEVAL MONGOL SOCIETY

Keywords: Mongol women, Toregene, Sorghaghtani, Oghul Qaimish, regent, Mongol society, Mongol Empire.

Abstract

Medieval Mongol society like all medieval Eastern societies was organized on the basis of the patriarchy, but women had significant rights. Women participated in all spheres of life in medieval Mongol society. First of all a woman played an important role in the family, because she was organizing all the works when the man was busy with war or hunting. The women took part in wars and had soldiers under their command. The Mongolian sources give such information about Genghis Khan's daughters. Mongolian women directly had no right to be engaged in politics, but since the time of Genghis Khan they were actively involved in the political life of the empire. The main advisors of Genghis Khan were his mother and chief wife, and later his daughters-in-law ruled the empire as regents. It is worth to mention two women - Toregene and Sorghaghtani. After Ogedei's death Toregene ruled the empire as a regent and by this she established the tradition of women's guardianship. On the other hand

Sorghaghtani wasn't a regent, but she was widely involved in political life of that period. As a result of her activities the throne of Great khan passed to her son Mongke, which means that there took place a specific coup in the Mongol Empire because the supreme power had passed from Ogedei's family to Tolui family. Thus, women played a major role in medieval Mongol society.

Nelli Minasyan
Kh. Abovyan Armenian State Pedagogical Univers.
Department of World History, PhD
minasyan.nelli@yahoo.com

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի գիտաշխատող
Էլ.փոստ՝ mtigran2002@yahoo.com

**ԿԱՆԱՆՅ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ՎԱԿՄԻՋՆԱԿԱՐՅԱՆ
ԱՐԱՐԱԼԵԶՈՒ ԱՂՅՈՒՐՆԵՐՈՒՄ (IX-XI Գ.Գ.)**

Քանալի քառեր՝ կարծրատիպեր, կանայք, վաղմիջնադարյան, արա-
բալեզու աղբյուրներ, ալ-Մուկադդասի, Իքն ալ-Ֆակիհ:

Համառոտագիր

*Հոդվածում ներկայացվում և փերլուծվում են միջնադարյան արաբալե-
զու հեղինակների գործերում տարբեր ուսանների և ժողովուրդների կա-
մանց փերաբերյալ ժամանակի մուսուլման հասարակության մեջ գոյություն
ունեցած կարծրատիպերը և նախապաշարմունքները:*

Միջնադարյան մուսուլման հեղինակները բազմաբնույթ տեղե-
կություններ են հաղորդում ինչպես խալիֆայության տարբեր մա-
հանգների բնակիչների, այնպես էլ նրա սահմաններից դուրս ապրող
ժողովուրդների և ցեղերի մասին: Ներկայացնելով նրանց ապրելա-
կերպը, հավատալիքները, սոցիալական և քաղաքական կազմավո-
րումները՝ մուսուլման հեղինակները անդրադառնում են նաև այդ ժո-
ղովուրդներին բնորոշ հատկանիշներին՝ մարդաբանական տիպին,
ազգային բնավորության առանձնահատկություններին՝ բացասական
կամ դրական գնահատական տալով դրանց: Իհարկե, նրանց գնա-
հատման շափանիշները լիովին իրական հիմք չունեն, հաճախ պայ-
մանավորված են որոշակի կարծրատիպերով և նախապաշարմունք-
ներով, սակայն նման կարծրատիպերի կարելի է հանդիպել նաև այլ
ժողովուրդների գրականության և բանահյուսության մեջ, պոեզիա-
յում և այլն՝ դրանք կրում են համամարդկային բնույթ: Այս իմաստով
բացառություն չեն նաև արաբական միջնադարյան պոեզիան և բա-
նահյուսությունը:

Այս կարգի դատողությունները և կարծրատիպերը կարող են վերաբերել իսլամական երկրներում կամ դրանցից դուրս ապրող ժողովուրդներին, այս կամ այն մահանգների բնակիչների ամենազանազան՝ մարդկային, մարդաբանական, մասնագիտական հակվածություններին, ֆիզիոլոգիական և անզամ սեռային հատկանիշներին¹:

Տարբեր ազգերի, մահանգների բնակիչների կերպարների վերլուծությունները մենք կդիտարկենք հատկապես աշխարհագրագետ հեղինակների՝ Իբն ալ-Ֆակիհի (IX-X դար), ալ-Մուկադդասիի (X դար) և այլոց հայտնի աշխատություններում:

Արաբ աշխարհագրագետ ալ-Մուկադդասին (կամ ալ-Մակդիսին) գրում է. «.... Չկան ավելի ազահ մարդիկ, քան մեքքացիները, ավելի աղքատ, քան յասրիբցիները, ավելի կիրք, քան հերաբցիները, ավելի ըմբռնող, քան ռեյցիները, ավելի տգետ, քան ամմանցիները, ավելի անառակ, քան սիրաֆցիները, ավելի անհմազանդ, քան սիջիստանցիները և դամասկոսցիները, ավելի տգեղ, քան խորեզմցիները, ավելի կովարար, քան սամարղանդցիները և Շաշի բնակիչները, ավելի ցածրահասակ, քան եգիպտացիները, ավելի հիմար, քան բահրեյնցիները և հոմսեցիները, ավելի սիրալիր, քան նաբլուսցիները, ռեյցիները և բադդադցիները, ավելի գեղեցիկ լեզու ունեցող, քան բադդադցիները և ավելի տգեղ հնչող լեզու ունեցող, քան սալյացիներ և հերաբցիները, ավելի ճիշտ լեզվով խոսող, քան խորասանցիները և ավելի գեղեցիկ պարսկերենով խոսող, քան բալսցիները և Շաշի բնակիչները»²:

Պարսիկ հեղինակ Իբն ալ-Ֆակիհ ալ-Համադանին նույնպես գնահատականներ է տալիս տարբեր մահանգների բնակիչներին և այլ երկրների ժողովուրդներին. «Հնդկաստանի բնակիչները բարոյական են, գեղեցիկ կազմվածք ունեն, գեղեցկադեմ են և շափավոր...: Եգիպտացիները անհոգ են և խորաբափանց: Բերբերները գլխի ընկնող են, զուրկ են գոտզությունից և սրիկայությունից: Հոռոմները (իմա՝ հույները) գոտզամիտ են և պայմանականություններ սիրող, իսկ Սիրիայի բնակիչները անհոգ են և խաղաղասեր: Հիջազցի-

¹ Միքայելյան 2000: 188-195:

² Descriptio al-Moqaddasi: 34.

ները երաժշտական են, սիրում են զվարճանալ և սիրահետել կանանց»³:

Մուսուլման հեղինակների կողմից բերված այս կարծրատիպերը տարածվում են նաև տարբեր ազգային պատկանելություն ունեցող կանանց վրա:

Իրն ալ-Ֆակիհը գրում է. «Եզիպտոսիներին և դպտոսիներին կարելի է հակադրել Նորասանի կանանց. նրանք տղաներ են ծնում, մինչդեռ շատ քիչ դպտոսիներ տղաների են աշխարհի բերում, այլ ծնում են երկու, երեք կամ չորս աղջիկներ»⁴:

XI դարից սկիզբ է առնում մի յուրատեսակ ժանր, որ կարելի է բնորոշել որպես ստրուկների գնման ուղեցույցներ: Այդ ուղեցույցների հեղինակները տարբեր ազգային պատկանելություն ունեցող ստրուկներին դիտարկում են այս կամ այն ոլորտում նրանց սխտանության կամ հմտությունների կիրառման տեսակետից: Այսպիսի աշխատության հեղինակներից է բաղդադցի բժիշկ, հավատքով քրիստոնյա Իբն Բուտլանը: Բացի գործնական խորհուրդներից, որ պարունակում է այս աշխատությունը, այն հաղորդում է նաև հետաքրքրական ազգագրական տեղեկություններ տարբեր ազգերի բնավորության գծերի և այլ հատկանիշների մասին: Հատկապես հետաքրքրական են կանանց վերաբերող դիտարկումները:

Այսպես, ըստ Իբն Բուտլանի՝ «Հնդիկ կանայք հնազանդ են, սակայն շուտ են բառամուտ»: Մասնագիտությամբ բժիշկ հեղինակը հավատացած է, որ «նրանք (այսինքն՝ հնդկուհիները - Տ. Մ.) ունեն մի առավելություն այլ կանանց նկատմամբ. ասում են, որ նրանք բաժանվելուց հետո նորից կույս են դառնում...»⁵: Այնուհետև հեղինակը շարունակում է. «Սինդի կանայք հայտնի են իրենց բարակ իրանով և երկար մազերով: Մեղիմուսին իր մեջ միավորում է հաճելի խոսքը, հոյակապ մարմինը, պչրանքը և աշխույժ խելքը: Նա խանդոտ չէ, չարամիտ չէ, ճղճղան չէ, լավ երգչուհի կարող է դառնալ: Մեքրուսին փափկասուն է, նրբամկան և ունի քախձագորով

³ Ибн ал-Факих 1979: 92-93.
⁴ Ибн ал-Факих 1973: 91.
⁵ Мен 1973: 143.

աչքեր: Թախիի բնակչուհիները ոսկեթուխ են, սպցիկ, բերամիտ, կատակասեր և խաղացկուն, սակայն հակված չեն հղիանալու և մահանում են ծննդաբերելիս: Բերքերուհիները, ընդհակառակը, հաջողությամբ ծննդաբերում են, շատ հնազանդ են և ցանկացած գործում հմուտ»⁶:

Սևամորթների մասին կարծիքը բարենպաստ չէ: «Սևամորթ կանայք որքան սև են, այնքան ավելի տղեղ, և այդքան ավելի սուր են նրանց առամները: Նրանք ոչ մի աշխատանքի համար պիտանի չեն, շատ հեշտ դատում են թափփված և, ընդհանրապես, ոչինչի մասին հոգ չեն տանում: Նրանց էությունը ձգտում է պարհն և տակտ խփելուն: Ասում են, որ եթե անգամ սևամորթը երկնքից ցած է ընկնում, ապա տակտով է ընկնում: ... Նրանց քնատակների հոտը տհաճ է, իսկ մաշկը՝ կոպիտ»⁷ «Թյուրքուհիները գեղեցիկ են, փափուկ և սպիտակամաշկ: Նրանց աչքերը փոքր են, քայց հաճելի, նրանք ցածրահասակ են...: Նրանք ծննդաբերության անսպառ աղբյուր են...: Հույն կնոջ մաշկը վարդագույն-սպիտակ է, մազերը՝ ուղիղ, աչքերը՝ կապույտ, նա հնազանդ է, զիջող, ընկերասեր է, հավատարիմ և հոսալի»⁸:

Ալ-Մուկադդասին երբեմն, ի միջի այլոց, նույնպես հիշատակում է այս կամ այն երկրի կանանց հատկությունների մասին. այսպես, օրինակ, Հերաթում աճող բույսերը նկարագրելիս նա գրում է. «Ասում են՝ Հերաթի կանայք արևադարձերի (հելիոտոլոգների) ծաղկման ժամանակ կրքոտում են կատունների նման»⁹:

Չնայած այս նկարագրությունները վերաբերում են ստրուկ կանանց, այնուամենայնիվ, կարող ենք պատկերացում կազմել տարբեր ազգությունների կանանց վերաբերյալ տարածված կարծրատիպերի մասին, որոնցում արտացոլված են նրանց թե՛ առավելությունները, թե՛ թերությունները:

⁶ Ibid.

⁷ Ibid.

⁸ Ibid.

⁹ Descriptio al-Moqaddasi: 436.

Արաբ կառավարիչների պալատական զվարճանքների համար հավաքագրվում էին ստրուկ-երգչուհիներ: Արուլ-Ֆարաջ ալ-Իսֆահանիի «Քիրաթ ալ-աղանիի» (Գիրք Երգոց, (100րդ դար)) հաղորդմամբ՝ ոմն ստրկավաճառ Իբրահիմ ալ-Մաուսիլիմ առաջինն էր, որ սկսեց ուսուցանել ոչ թե մուգ կամ դեղին մաշկ («սափրա») ունեցող, այլ սպիտակամաշկ կանանց, որոնց զեղեցկությունը բարձր էր գնահատվում արաբների շրջանում: Սակայն, ըստ աղբյուրների, Աբբասյան խալիֆաների պալատներում մեծամասնություն էին կազմում հենց մուգ մաշկով կանայք¹⁰:

Ընդհանուր առմամբ, նախապաշարմունքները և կարծրատիպերը կարող էին նաև վերաբերվել այս կամ այն կրոնի ներկայացուցիչներին, և՛ տղամարդկանց և՛ կանանց: Այսպես, խոսում էին հրեաներից արձակվող զարշահոտի (Իրն Կուտայբա, Աղաթ ալ-Քատիթ), քրիստոնյաների հարբեցողության (Յաթիմա), նրանց միանձնուհիների և երգչախմբերի տղաների մատչելիության, տաբաղիների՝ միմյանց նկատմամբ անզուր վերաբերմունքի մասին¹¹:

Չնայած կանանց նկատմամբ միջնադարում և մինչև նոր ժամանակները տիրող անհավասար և կանխակալ վերաբերմունքին՝ ինչպես Միջին Արևելքում և այլուր (սրա մասին կարող են վկայել կանանց վերաբերյալ ասացվածքները՝ օրինակ՝ արաբական՝ «Կնոջ խելքը նրա մազերում է», «Քո կնոջից խորհուրդ հարցրու և արա հակառակը», հայկական՝ «Կնոջ մազը երկար, խելքը՝ կարճ», անգլիական՝ «Կնոջը, շանը և ընկույզի ծառին ինչքան շատ խփես, այնքան [ավել կդառնան]»)¹², իսլամի կայացման դարաշրջանում կանայք կարևոր դեր են խաղացել: Այստեղ, առաջին հերթին, կարելի է հիշել Մուհամմադ մարգարեի կանանց՝ Խադիջային, Այշային և նրա դստերը՝ Ֆաթիմային:

Մուհամմադի առաջին կնոջ՝ Խադիջա քինթ Խուվայլիդի դերը մարգարեի կյանքում անհնար է թերագնահատել: Հենց Խադիջան մյուրական ապահովություն տվեց իսլամի մարգարեին, երբ վերջինս

¹⁰ Gordon 2017: 34.

¹¹ Meu 1973: 52.

¹² Al-Zubeidi 2017: 11.

երիտասարդ էր: Կինը մահ մեծ քարոյական աջակցություն էր ցույց տալիս Մուհամմադին այն պահից, երբ մարգարեն սկսեց քարոզել: Խաղիջան համարվում է իսլամ ընդունած առաջին կինը: Մարգարեն այնպիսի հարգանք էր տաժում իր առաջին կնոջ նկատմամբ, որ ամուսնացավ նրա մահից հետո 25 տարի անց միայն¹³:

Իմաստուն Խաղիջային, որ մարգարեից տասնհինգ տարով մեծ էր, կարելի է հակադրել առաջին խալիֆա Աբու Բաքրի դուստր Այշային (Այշա բինթ Աբի Բաքր)՝ մարգարեի երրորդ կնոջը, որը Մուհամմադից քառասունյոթ տարով փոքր էր: Իսլամական կենսագրական գրականության մեջ հաղորդվում է, որ Այշան սեքսեթող էր, սրամիտ, խելացի և կիրք: Հետագայում՝ մարգարեի մահից հետո, Այշան վերածվեց ազդեցիկ քաղաքական դեմքի:

Այշան առանձնանում էր մահ իր ոչ միանշանակ արարքներով: Քաջ հայտնի է այսպես կոչված վզնոցի պատմությունը, երբ նրան մի գեղեցկադեմ երիտասարդ անապատից տուն բերեց, ինչը լրջորեն վտանգեց մարգարեի հետ նրա ամուսնությունը¹⁴: Մուհամմադի շրջապատը երկվեհղկվեց. մի մասը մարգարեին առաջարկում էր այդ դատապարտելի արարքի համար Այշային վերադարձնել հորը: Ապագա խալիֆա և առաջին շիա իմամ Ալի իբն Աբու Թալիբը նույնպես Այշային հորը վերադարձնելու կողմնակիցներից էր, ինչը հետագայում պատճառ դարձավ Ալիի և Այշայի միջև տևական բռնամական հարաբերությունների: Այշան մասնակցեց Ալիի դեմ այսպես կոչված «Ուդտի ճակատամարտին», որը կոչվեց այդպես հենց այն պատճառով, որ ուդտը ճակատամարտի ընթացքում կրում էր Այշայի վրանը¹⁵: Այշան կատակասեր էր և անգամ չէր վարանում մարգարեին իր զվարճանքների առարկան դարձնել: Այսուհանդերձ, Այշայի կարծիքը շատ էր կարևորվում վաղ մուսուլմանական համայնքում: Մարգարեի կենդանության օրոք Այշային շատերը կոչում էին «հավատացյալների մայր»: Այշան բինտ Աբու Բաքրը մեծածավալ տեղ է գրավում մահ հաղիսական ավանդություն:

¹³ Ислам ЭС 1991: 262.

¹⁴ EoI NE: 329.

¹⁵ EoI NE: 330:

Իսլամում ամենամշահակալից կանանցից է Ֆաթիման (Ֆաթիմա ալ-Չահրա, «Հիասրանչ Ֆաթիմա»)՝ Մուհամմադ մարգարեի և Խադիջայի կրտսեր դուստրը, ով ի հակադրություն սեքսեքող Աշայի, բարոյականության, հոգատարության և քարեպաշտության օրինակ է հանդիսանում մուսուլմանների համար, իսկ շիաների կողմից նա ուղղակի պաշտամունքի առարկա է դարձել: Մարգարեն Ֆաթիմային կնության տվեց հենց Ալի իբն Թալիբին՝ չորրորդ քարեպաշտ խալիֆային, շնայած նրան, որ Ալին մեղմ ասած հարուստ չէր: Ֆաթիման խորհրդանշում է մուսուլման կնոջ իդեալը: Լինելով մարգարեի դուստր՝ այսուհանդերձ, նա շատ համեստ կյանք էր վարում, անձամբ էր տանում տան հոգսերը, ջուր էր կրում, հաց քիտում, այլ ծանր աշխատանքներ կատարում¹⁶, շատ նվիրված էր իր հորը, ամուսնուն, երեխաներին, որոնք ապագա շիա իմամներ Հասան և Հուսեյնն էին, իսկ դուստրերը՝ Ջայմարն ու Ռամ-Ռուլսումը:

Ամփոփելով կարելի է ասել, որ վաղմիջնադարյան արաբալեզու հեղինակների աշխատություններում տարբեր ազգերի նկատմամբ ներկայացվող բնորոշումները կամ կարծրատիպերը, այդ թվում նաև կանանց նկատմամբ, հաճախ սուբյեկտիվ և կանխակալ են, երբեմն ինչ-որ տեղ պայմանավորված են կրոնա-քաղաքական ազդեցությամբ, սակայն նրանք կարող են պարունակել նաև այս կամ այն ազգին հատուկ ազգային բնավորության գծերի ճշմարտացի և օբյեկտիվ նկարագրության որոշ տարրեր: Բացի սրանից՝ դրանք հետաքրքրական են նաև այն տեսակետից, որ հնարավորություն են տալիս բացահայտելու կանացի գեղեցկության, խելքի, ֆիզիոլոգիայի մասին վաղմիջնադարյան արաբ-մուսուլմանական հասարակության պատկերացումները, նախապաշարմունքները և ընդհանրացումները: Իսլամում ևս, ինչպես քրիստոնեության մեջ, հավատակ վաղմիջնադարյան մուսուլման հասարակության խոր նահապետական էության՝ Մուհամմադ մարգարեին մոտ կանգնած կանայք կարևոր դեր են խաղացել այդ կրոնի կայացման գործում:

¹⁶ Ashraf 2005: 42-43.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Մրրայեղյան 2000. Ազգերի կերպարները միջնադարյան արաբական տիրույթներում (IX-XI դդ.), ՄԱԱԵԺ, հ. XIX, 189-195:
- Ибн ал-Факих 1979. Ахбар аль-буддан (Известия о странах), Введение, перевод с арабского, издание текста и комментарий А.С. Жамкояна, Ереван.
- Ислам Э. С. 1991, Ислам энциклопедический словарь, Ответственный редактор С.М. Проzorov, Москва, 1991.
- Мен А. 1973. Мусульманский ренессанс, перевод с немецкого, предисловие и указатель Д.Е. Бертельса, Москва.
- Asraf Sb. 2005. Encyclopedia of Holy Prophet and Companions, Anmol Publications PVT. LTD.
- Descriptio al-Moqaddasi 1967. de Goeje, Bibliotheca Geographorum Arabicorum, Indices, Glossarium et Addenda et Emendanda ad Part I-III; Descriptio imperii moslemici auctore Shams ad-Dīn Abū Abdallah Mohammed Ibn Ahmed Ibn Abī Bekr al-Bannā al-Basshārī al-Moqaddasi, edidit M.J. de Goeje, Editio tertia, Lugduni Batavorum.
- Eol NE 1986. Encyclopedia of Islam, New Edition, vol. I, A-B, Brill.
- Gordon M., Hain K.A. 2017. Concubines and Courtesans: Women in Slavery in Islamic History, New York.
- Ibn al-Faqih 1973. Ibn al-Faqih al-Hamadani, Abrégé du Livre des Pays, traduit par Henri Masse, Damas, 1973.
- Al-Zubeidi 2017. Azhar Al-Zubeidi, Patriarchal Concepts of Woman in English, and Arabic Proverbs, The 18th Yearly Conference of the College of the Basic Education, Baghdad, Iraq. https://www.researchgate.net/publication/3307-78616_Patriarchal_Concepts_of_Woman_in_English_and_Arabic_Proverbs

STEREOTYPES REGARDING WOMEN IN EARLY MEDIEVAL ARABIC SOURCES (IX-XI cc.)

Keywords: Stereotypes, women, early medieval, Arabic, sources, al-Muqaddasi, Ibn al-Faqih

Abstract

The author presents stereotypes and view of the early Arab medieval authors of X-XI cc. (mainly al-Muqaddasi and Ibn al-Faqih) on women of various nations, regions of the Islamic world. The 'positive' and 'negative' features of

women belonging to various nations is important part of the slave purchase guide written by Christian Bagdadi doctor Ibn Butlan.

For instance Ibn al-Faqih writes:

و نساء اهل مصر و القبط عند نساء خراسان لان نساء خراسان يلدن الذكور و نساء القبط لا يكاد
يرى منها الا ميئات و تكاد الاثنيون الثلثة و الاربعة

"Les femmes égyptiennes et coptes sont tout le contraire des femmes du Khorasan: en effet, celles-ci enfantent des males, tandis que pour les Coptes, on ne voit guère parmi elles que des femmes enfantant des filles: elles en enfantent deux, trios et quatre".

Or Ibn Butlan states: "The women of Sind are known for thin bodies and long hair. The women of Medina combine pleasant language, beautiful body, luxury and agile mind...".

The article also discusses the important role of the Prophet Muhammad's wives and the youngest daughter (Khadija, Aisha and Fatima) in the first years of establishing of the Islamic faith.

Tigran Mikayelyan
Institute of Oriental Studies NAS RA, Researcher,
Department of Source Studies and Historiography,
mtigran2002@yahoo.com

ԱՐԱՄ ԲՈՍՅԱՆ

պ. գ. դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,

Հին Արևելյի քամնի վարիչ

էլ. փոստ՝ aramkossyan@yahoo.com

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԿՐԱՆՅՔ ԸՍՏ ԽԵԹԱԿԱՆ
ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

Թանայի քառիք: Հայկական լեոնաշխարհ, Իսուվա, Հայաստ, Խուլկկա-
նա:

Համառոտագիր

*Հայկական լեոնաշխարհի վաղ պեդագոգական կազմավորումների պատ-
մությանն առնչվող խեթական սեպագիր աղբյուրներում (մ.թ.ա. II հազ.)
պահպանվել են որոշ փեղեկություններ իգական սեռի ներկայացուցիչների
վերաբերյալ: Հոդվածը ներկայացնում է ներկայացնում է մինչև օրս հայտնի
բոլոր փեթքերի համահավաքը: Դրանց շարքում հատկապես կարևոր փեղ
ունի խեթական արքա Սուպղիլուլիումաս I-ի և Հայաստի կառավարիչ
Խուլկկանայի միջև կնքված պայմանագիրը, որպեսզի հիշատակվում է «պաշա-
րի կանանց» հեղ փոփոխարեթվելու մասին խեթական արքունիքում ըն-
դունված պաշարական էրիկները:*

Հայկական լեոնաշխարհի պետական կազմավորումներին
առնչվող խեթական սեպագրական աղբյուրներում հիշատակվում են
սահմանափակ քվով կանայք, ընդ որում՝ հիմնականում մարզիմալ
քնույթի հատվածներում երբեմն էլ անվանապես, սակայն առանց
հստակեցնելու նրանց դերը քննվող իրադարձություններում: Այս
հանգամանքը տարօրինակ չէ, քանի որ մեր պարագայում գործ
ունենք ակնհայտ հայրիշխանական հասարակության հետ: Չկա
որև տեղեկություն, որը կվկայեր կնոջ սակրալ/ժիսապաշտամու-
քային գործառույթների առկայության մասին, շնայած այդպիսիք
կարելի էր ենթադրել, հատկապես Բարձր Հայքի պարագայում, որը
ոչ միայն Հայկական լեոնաշխարհի, այլև Առաջավոր Ասիայի կա-
րևորագույն պաշտամունքային կենտրոններից էր:

Ներկայացվող հողվածը նվիրված է Հայկական լեոնաշխարհի արևմտյան շրջանների պետական կազմավորումներին առնչվող խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակվող կանանց՝ անկախ նրանց էրնիկ պատկանելությունից և կարգավիճակից:

Կանանց անուններ

1. KBo XVI 45 (մ.թ.ա. XV դարի վերջ – XIV դարի սկիզբ)¹ - այս տեքստը իրենից ներկայացնում է խեթական պետության և Հայաստանի միջև մ.թ.ա. XV դարի ինչ-որ հատվածում կնքված պայմանագրի կամ հրահանգի րեկոր²: Այստեղ անվանապես հիշատակվում են Հայաստայի կառավարչի երկու դուստրերը:

Haniyatta

Hapiyanah(-)

Մրանք վերինեփրատյան ավազանի ինչ-որ քաղաքական միավորի կառավարչի դուստրերն են: Ավելի քան հնարավոր է, որ խոսքը Հայաստայի մասին է, ընդ որում՝ վնասված հատվածում ճշվում է ռազմական գործողությունների ծավալման մասին:

2. HT 2 («կանանց ցուցակ»)³

AMA-iš (= Anniš)– Զրնուի Իսուվայի Վատարուսնա քաղաքից, ով տրվել էր խեթական Kukuwawa քաղաքի տաճարին:

Այս տեքստի համապատասխան հատվածի՝ Հայկական լեոնաշխարհին առնչվելու մասին նախկինում արտահայտված տեսակետը⁴ ներկայումս կարելի է միայն որոշակի վերապահությամբ ընդունել: Բանն այն է, որ այս ընդարձակ տեքստը ներկայացնում է

¹ CTH 832 (ինվենտարային համարը՝ 2678/c): Այս տեքստը խեթական տեքստերի կատալոգում ներառված է այսպես կոչված «Աննայտ բովանդակության խեթերեն լեզվով գրված րեկորներ» անվանումը կրող գլխաբառի տակ: Տեքստի հրատարակչի կարծիքով՝ այն անվերապահորեն պատկանում է «Հին խեթական գուլին», այսինքն՝ կազմված է մինչև մ.թ.ա. XV դարի կեսերը ընկնող շրջանում (KBo XVI: V; նաև Košak 2005, 2: 166): Կարծիք կա, որ սա կարող է լինել ճամակ (Kassian 2002: 81): Տեքստի հրատարակությունը տե՛ս Քոսյան և այլք 2018: 63-69:

² Քոսյան 2004: 128:

³ Կրկնօրինակը KBo II 31:

⁴ Տե՛ս Քոսյան 2004: 102:

Խերական տերության տարրեր շրջաններում տեղակայված բնակավայրերի տաճարների համար քրմուհիների և երգչուհիների ցուցակ: Ի բիվս մյուսների՝ այստեղ հիշատակվում է Վատարուսնա քաղաքից **AMA-is** անունը կրող քրմուհի: Վատարուսնան հստակ տեղադրվում է Իսուվայում, քանի որ սա մեկն է հետագայի հայկական Շուփր նահանգում անվանապես հիշատակվող քաղաքական միավորներից⁵: Ընդ որում, դատելով Վատարուսնան հիշատակող տեքստերից մեկից (KUB LVI 40)⁶, այն պետք է լիներ Իսուվայի քույր թագավորության գլխավոր բնակավայրերից մեկը: Սակայն հետագայում HT 2-ում Վատարուսնա տեղանվան համար առաջարկվեց նոր ընթերցում՝ **Wa-ra-ta-ru-uš-na** (**Wa-at-ta-ru-uš-na**-ի փոխարեն, տեղանվան գրության մեջ երկրորդ վանկը զգալիորեն քերված է), որը խոչընդոտում է վերոհիշյալ տեղանվան տեղադրմանը վերիննեփրատյան գոտում:

3. KUB XV 1 (թագուհի Պուդուխեպայի աղոթքը); **KUB XL 80** (հնարավոր է՝ «Դատական պրոցես»); **KUB LVI 14** (պատմական բնույթի տեքստի բեկոր):

Կիլուշեսպա - Թագուհի Իսուվայի արքա Արի-Շարբումայի կից, խերական արքա Խաբբուսիլի III-ի և Պուդուխեպայի դուստրը կամ վերջինիս քույրը) – մ.թ.ա. XIII դարի կեսեր⁷:

Ահա սրանք են Հայկական լեռնաշխարհի՝ անվանապես հիշատակվող կանայք:

4. Պայմանագիր՝ կնքված խերական արքա Սուպիլուլումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև⁸:

Այս տեքստում ուշագրավ հիշատակություն կա հայասական և խերական հասարակությունների սովորությանն օրենքներում կնոջ խաղաղացած դերի մասին, ինչը որոշակիորեն լուսարանվում է խերական արքա Սուպիլուլումաս I-ի և Հայասայի կառավարիչ Խուկ-

⁵ Տե՛ս **Քոսյան և այլք 2018: 116-124**:

⁶ Տեքստի հրատարակությունը տե՛ս **Քոսյան 2002: 316-323**:

⁷ **Կիլուշեսպայի մասին տե՛ս De Roos 1987; 2005**:

⁸ **Հրատարակությունը՝ Քոսյան 2016: 16-57** (նախորդ հրատարակությունների հղումներով):

կանայի միջև կնքված պայմանագրում: Նշենք, որ այդ օրենքների հարցում մասնագետների արտահայտած կարծիքները զգալիորեն տարբերվում են միմյանցից, ըստ այդմ՝ հատուկ մեկնաբանության կարիք ունեն:

Ներկայացնենք վերոիշյալ պայմանագրի համապատասխան հատվածները, որոնք բույլ կտան բացահայտելու խնդրի էությունը:

Գիտական տառադարձում

§ 30

40*) nam-ma-^{at}-ta ^dUTU^{ŠT} [k]u-in ku-u-un NIN₉-YA A-NA DAM^[UT-TI-KA] AD-DIN

41*) *nu⁻-uš-[š]i NIN₉^{MES}-ŠU ŠA *MÁŠ-ŠU ŠA *NUMUN⁻ŠU me-eq-qa-e-eš a-ša-an-zi

42*) [ŠA NUMUN-K]A-at-ta-at a-pé-^e-ya^z zi-ga-aš-ma-aš-za NIN₉-[ŠU] ku]-it har-ši

43*) A-NA [K]UR^{URU} Ha-at-ti-ma-kán ša-a-ak-la-iš du-u[q-qa]-ri

44*) *ŠEŠ-aš^[z]a NIN₉-ŠU^{MUNUS} a-a-an-ni-in-ni-ya-mi-in Ú-UL d[a]-a]-i

45*) Ú-[UL]-at a-a-ra ku-iš-ma-at i-e-zi a-pi-ni-iš-[š]u-u-w)a-an^{ut}-tar

46*) na-aš^{URU} Ha-at-tu-ši Ú-UL hu-u-iš-š]u-u-iz-zi a-ki-pa?-a[š-š]a-an

47*) *š]u⁻-me-en-za-an KUR-e dam-pu-u-pí ku-it an-da-[a]t za-[ah]-ha]-an ŠA

48*) [DAM?- ŠU-z]a *NIN₉-ŠU^{MUNUS} MUNUSa-a-an-ni-in-ni-ya-mi-in da-aš-ká[n-zi(-pát)??]

49*)^{URU} Ha-at-tu-ši-ma-at Ú-[UL a]-^a-ra^{*}

§ 31

50*) nu-ut-ta ma-a-an ŠA DAM-KA ku-wa-pí *NIN₉-ŠU^{ŠU} *na-aš-ma ŠA [ŠE]Š *DAM⁻ŠU

51*)^{MUNUS} a-a-an-ni-in-ni-ya-mi-iš kat-ta-an ú-iz-zi nu-uš-ši [a-d]a-an-na

52*) a-ku-wa-an-na pa-a-i nu-za e-za-at-tén e-ku-ut-tén du-uš-ki-iš-ki-tén

- 53') da-an-na-ma-za le-e i-la-li-ya-ši *Ú-UL*-at a-a-[r]a a-pé-e-ez-kán
 54') ud-da-na-az ar-ha ak-'ki' -iš-kán-zi na-at zi-i[k] tu-'el' ZI-it
 55') le-e e-ep-ši ma-an-ták-kán a-pí-ni-iš-šu-wa-an-ti ud-'da'-ni-i
 56') da-ma-iš-ša ku-'iš-ki' pár-ra-an-da ti-it-ta-nu-uz-'zi' zi-ga-an
 57') le-e iš-ta-ma-'aš-ti' na-at le-e i-ya-ši
 58') *ŠA-PAL NI-İS* DINGIR^{LIM}-y[a]-at-ta ki-it-ta-ru

§ 32

- 59') *ŠA É.GAL*^{LIM}-y[a]-'za' MUNUS^{TUM} me-ek-ki uš-ga-ah-hu-ut
 ku-i-ša-aš im-ma k[u-i]š
 60') *ŠA É.GAL*^{LIM} 'MUNUS' ma-a-na-aš *EL-LUM* ma-a-na-<aš>
 MUNUS^{SUHUR.LÁ}
 61') nu-uš-ši ma-n[i-i]n-ku-wa-an le-e ti-ya-ši nu-uš-ši ma-ni-i[n-
 ku]-wa-an
 62') le-e pa-a-i-ši me-mi-ya-an-na-aš-ši le-e me-ma-at-ti
 63') *ARAD-KA*-ya-aš-ši *GÊME-KA* ma-ni-in-ku-wa-an le-e pa-iz-
 'zi'
 64') na-an-za-an me-ek-ki uš-ga-ah-hu-ut *ŠA É.GALLIM* ku-'wa-pi'
 MUNUS a-u[t-ti]
 65') na-aš-ta *KASKAL*-az ar-ha me-ek-ki wa-at-qa-ah-hu-ut
 66') [n]u-uš-ši *KASKAL*-an ar-ha tu-u-wa tar-na nu-za ki-i *ŠA*
É.GAL^{LIM}
 67') [A]-*WA-AT* MUNUS me-ek-ki a-ru-ma uš-'ga'-ah-hu-ut

§ 33

- 68') ^mMa-ri-ya-aš ku-iš e-eš-ta na-aš ku-e-da-ni ud-da-ni-i BA.Ú[Š]
 69') *Ú-UL* MUNUS^{SUHUR.LÁ} i-ya-at-ta-at 'a-pa-a-ša'-an-kán an-da
 a-uš-zi
 70') 'A'-BI ^aUT[U]^Š-ma-kán im-ma ^{GiS}AB-az ar-ha a-uš-zi na-an
 wa-aš-tú[1] *İS-BAT*
 71') zi-ik-wa-kán a-pu-u-un an-da ku-wa-at a-'uš'-ta
 72') na-aš a-pé-e-da-ni ud-da-ni-i še-er BA.ÚŠ nu tu-u-wa-za ú-wa-
 an-<na>-y[a]

73') še-er' an-tu-uh-ša-aš har-ak-ta nu-za zi-iq-qa me-ek-ki uš-ga-ah-h[u-u]t

§ 34

74') 'I-NA KUR^{URU}Ha-ya-ša-ya ku-wa-pi pa-i-ši n[u] nam-ma MUNUS^{MES} ŠA ŠE[Š]-KA

75') [NIN₉-KA]A le-e nam-ma da-aš-ki-ši^{URU}Ha-at-tu-ši-y[a-a]t Ū-UL' [a-a-r]a

76') [ke-e-e]z-ma-'kán' I-NA É.GAL^{LIM}-ya ša-ra-a i-y[a-a]t-ta-'ti'

77') [nu a-pa-a-a]t ut-tar Ū-UL a-a-ra ŠA KUR^{URU}-Az' <-zi>-y[a-za MU]NUS nam-ma A-NA

DAM^{UT-TIM}

78') [I]e-e 'da-at-ti' 'a-pu-u-un-na-za 'a[r-ha] d[a-a-l]i ka-ru-ú-za

79') 'ku'-in har-ši^{MUNUS}NAP-TER'⁵ <TI>-ma-at-ta a-a-ra e-eš-kán-zi

80') 'DAM'-an-ma-an-za le-e i-ya-ši A-NA^mMa-ri-ya-ya-kán DUMU.MUNUS-KA ar-ha da-a

81') na-an ŠEŠ-ni pa-a-i

Թարգմանություն

§ 30

40') Այնուհետև, այս քույրս, ում Արևս քեզ կնության տվեցի,

41') նա (իր) ընտանիքից (և) տոհմից շատ քույր(եր) ունի:

42'): Դու նրանց որպես [քո] քույրերի վերաբերվիր:

43') Խաբբիում կարևոր սովորույթ կա:

44') Եղբայրը իր քրոջը (կամ) ազգականուհուն չի [վերցնում]:

45') Դա արգելված է: Ով այդ անի, այդպիսի բան,

46') նա Խաբբուսասում կենդանի չի մնա, այլ կսպանվի: (Իսկ)

47') ձեր երկիրը բարբարոսական է,

48') եղբայրը իր քրոջը (կամ) ազգականուհուն վերց[նում է]:

49') Խաբբուսասում դա արգելված է:

§ 31

50') Եվ եթե քեզ մոտ կնոջդ քույրը կամ նրա ազգականուհին

51') զա, նրան ուտելիք

52') (և) խմելիք տուր: Կերեր-խմեր, զվարճացեր:

53') Բայց նրան վերցնել չկամենաս, դա արգելված է: Այ[դ]

54') քանի պատճառով սպանվում են: [Դ]ու այդ (քանը) քո հոգում

55') չունենաս: Երե քեզ այդպիսի քանի

56') ուրիշ մեկը դրդի, դու նրան

57') չլսես և այդ (քանը) չանես:

58') Քեզ (այս) էլ երդման տակ թող դրվի:

§ 32

59') Պալատի կնոջից էլ շատ զգուշացիր: Ինչպիսի

60') պալատական կին որ լինի՝ «ազատ» (կին) թե սպաստի,

61') նրան մոտ չքայլես, նրան մոտ

62') չգնաս, նրան խոսք չասես:

63') Քո ստրուկը (կամ) ստրկուհին նրան թող մոտ չգնա:

64') Նրանից շատ զգուշացիր: Երբ պալատական կնոջ տեսնես],

65') ճանապարհից շատ հեռու թիր,

66') նրա համար լայն ճանապարհ թող: Այս պալատական

67') կանանցից (տեքստում եզրվով - Ա.Ք.) շատ ու շատ զգուշացիր:

§ 33

68') Ով էր Մարիյասը և ինչ քանի պատճառով նա մահացավ:

69') Չէր գնում (արդոք) սպաստիին, և նա նրան նայեց:

70') Բայց Արևիս հայրը այնուամենայնիվ լուսամտուից դուրս նայեց և նրա հանցանք[ը] բռնեց:

71') «Դու նրա վրա ինչո՞ւ նայեցիր»:

72') Եվ նա այդ քանի պատճառով մահացավ: Հեովից նայելու պատճառով]

73') մարդը վերացավ: Դու շատ զգուշացիր:

§ 34

74') Երբ դու Հայասա գնաս, հեռո [քո] եղբոր կանանց,

75') (և) քո [քրոջը] չվերցնես. Խաբբուսասում այդ [արգելված է]:

76') Իսկ եթե[ն] իմ պալատ գաս,

77*) [այ]դ բանը արգելված է: Հետո, Ազգի[ից] կնության համար կին

78*) չվերցնես: Եվ [հեռացր]ու նրան, ում արդեն

79*) ունես. քեզ համար նա օրինական հարճ կլինի (հոգն. բվով - Ա.Բ.),

80*) բայց նրան կին չդարձնես: Մարիյայի մոտ (եղած) քո դստերը ետ վերցրու:

81*) Նրան եղբորը բող տա:

Վերջ հղված ընդարձակ տեքստային մյուսը հստակ պատկերացում է տալիս հայաստանյան և խեթական հասարակություններում, մասնավորապես վերնախավի շրջանում, երկու սեռերի միջև փոխհարաբերություններում ընդունված նորմերի մասին:

Այսպես, խեթական արքան՝ Մուպալիուլիումաս I-ը, հիշեցնում է Հայաստայի կառավարիչ Խուկկանային, որ խեթական արքունիքում արգելված է նայել պալատական կանանց կամ նրանց հանդիպելիս անհրաժեշտ է ճանապարհը զիջել: Հակառակ դրան՝ խեթական արքան նշում է Հայաստյում մեծանարգելի բացակայության մասին՝ ասելով, որ Հայաստյում քրոջ կամ ազգականուհու հետ հարաբերվելը ընդունված է (43-49): Որպես օրինակ նշվում է Հայաստայի նախկին կառավարիչ Մարիյասի հետ Խաթթուսասի արքունիքում պատահած դեպքը: Ըստ դրա՝ խեթական արքայի հայրը՝ Քուդխալիյաս III-ը, լուսամուտից տեսել էր, թե ինչպես է Մարիյասը նայում սպասուհուն, որի՝ պատճառով Մարիյասը մահապատժի էր ենթարկվել: Հետաքրքիր է, որ այդ արգելքը խեթական արքունիքում տարածվում էր նաև սպասուհիների հետ հարաբերությունների վրա:

Արդյո՞ք Մուպալիուլիումաս I-ը իսկապես ներկայացնում էր Խաթթիում գոյություն ունեցող սովորույթը: Խնդիրն այն է, որ խեթական օրենքներում մեծանարգելի մասին որևէ ակնարկ չկա: Այստեղ որևէ հողվածում չի քննարկվում արքունիքի կանանց հետ հարաբերությունների խնդիրը: Իհարկե, սա չի նշանակում, որ այդպիսի օրենք չէր կարող լինել: Խեթական օրենքները ընդհանրապես չեն

պարունակում որևէ հողված արքունիքում գործող էթիկետի մասին⁹։ Խեթական մի շարք օրենքներ հստակ նշում են Խաթթիում ազգականների հետ հարաբերությունների վրա դրված արգելքի գոյությունը, ինչը և հստակ ներկայացված է սլայմանագրում, որտեղ Խուկկանային արգելվում էր հարաբերվել իր եղբայրների կանանց և սեփական քրոջ հետ (74-75*)¹⁰։

Խեթական արքունիքում կանանց հետ հարաբերություններում ընդունված էթիկետի և, դրան հակառակ, Հայաստան վերը նկարագրված վիճակը մասնագետների մոտ տարակարծությունների տեղիք է տվել։

Այդ խնդրին առաջինը անդրադարձած՝ տեքստի հրատարակիչ Յ. Ֆրիդրիխը հակված էր հավատ ընծայելու մեծանուն հանցանքի՝ իրականությանը համապատասխանելուն, ինչպես դա ներկայացված է սլայմանագրում (պալատական կնոջ վրա նայել)։ Նա նույնիսկ օրինակներ է բերում պատմական ավելի ուշ շրջաններում վկայված ազգագրական նյութերից, որպես ասվածի ապացույց հղելով ականատեսի մի վկայություն, որը վերաբերում է Արևմտյան Աֆրիկայի ցեղապետություններից մեկին։ Ըստ դրա՝ երբ Աշանտիի թագավորի 3000 կանայք անցնում էին փողոցով, բոլորը դեմքերը շրջում էին կամ փոխում իրենց ճանապարհը, որպեսզի չտեսնեն նրանց։ Նույնպիսի սովորույթ է արձանագրված «Հազար ու մի գիշեր» շարքի պատմվածքներից մեկում. քաղաքի փողոցներով արքայադուստրերի անցնելու պահին բոլոր քաղաքացիները ծնկի էին իջնում և գլուխները հարմար գետնին՝ նրանց չտեսնելու համար¹¹։

Սակայն հետազայում, ինչպես նաև ներկայումս մասնագետները թերահավատորեն են վերաբերվում այս սլայմանագրի քննարկվող հատվածին։ Մարիյասի սլանության պատմության հետ կապ-

⁹ Խեթական օրենքները վերաբերում է առօրյա կյանքի ամենատարբեր ոլորտներին՝ կենցաղային բնույթի հանցանքներ, ժառանգությունային խնդիրը և այլն (տե՛ս Hoffner 1997)։

¹⁰ Hoffner 1997, հողվածներ 189, 190, 193, 195։ Ըստ դրանց՝ արգելվում էր հարաբերվել մոր, դստեր, քրոջ, հորաքրոջ, մորաքրոջ, խորք մոր, խորք դստեր, կնոջ քրոջ։ Այս խնդրի մասին տե՛ս Fringlé 1993: 200ff.

¹¹ Friedrich 1930: 159.

ված միջադեպը սովորաբար քննարկվում է խեթական Հին քաղավորության շրջանից վկայված այսպես կոչված «Պալատական անեկդոտներ» անվանումը ստացած տեքստերի համատեքստում¹²: Այս տեքստերը իրենցից ներկայացնում են գերազանցապես Խաթրուսիլիս I-ի, հնարավոր է նաև նրա հաջորդ Մուսիլիս I-ի օրոք ստեղծված գրական ժանր, որտեղ արքունիքում հավաքված քաղաքիվ ազնվականների ներկայությամբ արքան հանդիմանում է այս կամ այն նախկին և ներկա բարձրաստիճան անձանց՝ նշելով նրանց անբույլատրելի արարքները: Այդ արարքները կարող էին նրանց մահապատժի պատճառ դառնալ:

Օրինակ՝ Պ. Դարդանոն համարում է, որ հայասական արքայի սպանության հիմնավորումը իրականությանը չի համապատասխանում: Խեթական արքայի նպատակը այդ եղանակով պայմանագրում արժարժվող հարցին (Խուկկանայի՝ Հայասայում իր տոհմակից կանանց հետ լքույրեր և եղբայրների կանայք) սեռական հարաբերություններ չունենալ) էլ ավելի մեծ արտահայտչականություն հաղորդելն էր¹³:

Բ. Ջրիստիանսենը փորձել է խեթական արքայի՝ լուսամուտից Մարիյասի արարքին ակնհաստես լինելը դիտարկել որպես գրնական ժանրի դրսևորում՝ համեմատելով այն Աստվածաշնչում առկա նման միջադեպի հետ¹⁴: Նրա կարծիքով՝ լուսամուտից ինչ-որ անբույլատրելի արարք տեսնելը ծիսական ոլորտում և առասպելներում հաճախակի հանդիպող «աստվածային սարսափազդու/պատժող ներկայության» (*locus numinosus*) մոտիվն է, որը ասոցացվում է լուսամուտի հետ:

Խուկկանայի պայմանագրի՝ Հայասայի կառավարիչ Մարիյասի սպանության իրական պատճառի կապակցությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում միջինասորեստանյան փոչի արքաներից երկուսի՝ պալատական էթիկետին նվիրված տեքստերը:

¹² CTH 8.

¹³ Dardano 2007: 8f.; միևնույն ժուռնալում է առկա նաև այլոց մոտ (Gilan 2007; De Martino 2012).

¹⁴ Christiansen 2007.

Դրանցում հանգամանորեն ներկայացվում են արքունիքում կանանց հետ հարաբերությունների վրա դրված արգելքները, որոնք, ինչպես ցույց կտրվի ստորև, հարևան ման են Սուպպիլուլիումաս I-ի և Խուկկանայի միջև կնքված պայմանագրի համապատասխան հատվածին:

1. Աշշուր-ուշա-իշի (մ.թ.ա. 1232-1215)

«Եթե պալատի կինը [և տղամարդը] կանգնած են դեմ-դիմաց և նրանց միջև ոչ որ չկա, սիրաբանում են նրանք [թե լուրջ մտադրություն ունեն], ապա նրանց պետք է սպանել: Եթե պալատի ծառայողը, կին թե տղամարդ, տեսնի նրանց և չտեղեկացնի արքային, ապա վկային, կին թե տղամարդ, պետք է նետել վառարանի մեջ»¹⁵:

Թիգլաթալասար I (մ.թ.ա. 1114-1076)

«Եթե պալատի կինը քացի իր ուսերը և դրանք չփակի ծածկոցով, և իր մոտ կանչի պալատի ծառայողին, ասելով, թե նրան ինչ-որ հրաման պետք է տա, և վերջինս խոսի նրա հետ, ապա նրան պետք է պատժեն ճիպտի 100 հարվածով»:

«Եթե պալատի ծառայողը ցանկանա խոսել պալատի կնոջ հետ, ապա նա պետք է մոտենա նրան ոչ ավելի մոտ, քան յոթ քայլ»:

«Եթե որևէ մեկը խախտի այս հռչակագիրը, և պալատի գործերի կառավարիչը լսի այդ մասին և նրան չպատժի, ապա նա պատասխան պետք է տա այդ պատժելի արարքի համար: Նույնիսկ եթե պալատի կառավարչի ծառայողները քարեխղճորեն չեն հետազոտել պալատի ողջ տարածքը և նրան տեղեկացրել պատժելի արարքի մասին, և հետագայում արքան լսել է այդ արարքի մասին, պալատի կառավարիչը պետք է պատժվի»¹⁶:

Այսպիսով, ասորեստանյան արքունիքում ընդունված պալատական էթիկետի վերոհիշյալ կետերի լույսի ներքո ստիպված ենք ընդունել, որ Սուպպիլուլիումաս - Խուկկանա պայմանագրում «պալատական անեկդոտի» մասին խոսելը ուղղակի հիմնազուրկ դատողություն է: Ամենայն հավանականությամբ՝ Սուպպիլուլիումաս I-ը իրոք կա-

¹⁵ Roth 1995: 204f.

¹⁶ Roth 1995: 206f.

րող էր մերկայացնել խեթական արքունիքում կանանց հետ հարա-
բերվելու վրա դրված արգելքը՝ լինեն դրանք արքայատոհմի անդամ-
ներ թե սպասուհիներ: Ավելին, նույնիսկ նրանց վրա նայելը համար-
վում էր պատժելի հանցանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Քոսյան Ա. Վ. 2002.** Իսուվայի կրոնական կենտրոնները խեթական դարա-
շրջանում, ՄՄԱԵԺ XXI, 315-331:
- Քոսյան Ա. 2004.** Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական
սեպագիր աղբյուրների), Երևան:
- Քոսյան Ա. Վ., Ռ. Ղազարյան, Մ. Խանգաղյան, Ս. Մարտիրոսյան 2018.**
Մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայկական
լեռնաշխարհի մասին, Երևան:
- Christiansen B. 2007.** Der Blick aus dem Fenster. Bemerkungen zu einem
literarischen Motiv in einigen Texten des hethitischen Schrifttums und des
Alten Testaments, in *Tabularia Hethaeorum. Hethitologische Beiträge* Silvin
Košak zum 65. Geburtstag (Hrsg. D.Grodeek und M.Zorman), Wiesbaden
(= *Dresdner Beiträge zur Hethitologie*, Bd.25), 143-152.
- De Martino S. 2012.** Il banchetto nell'Anatolia ittita, in *Mangiare divinamente.*
Pratiche e Simbologie alimetary nell'antico Oriente (ed. L.Milano),
Firenze, 133-151.
- De Roos J. 1987.** Who was Kulušhepa?, *Jaarbericht van het Vooraziatisch-
Egyptisch Genootschap „Ex Oriente Lux“* 29, 74-83.
- De Roos J. 2005.** DUMU.MUNUS GAL Reconsidered, *Anatolica* 31, 211-215.
- Kassian A. 2002.** Glossary of Verbal Forms and Derivatives from Published Old
Hittite Texts, in *Anatolian Languages* (eds. V.Shevoroshkin and P.Sidwell),
Canberra, 72-136.
- Dardano P. 1997.** L'aneddoto e il racconto in età antico-hittita: la cosiddetta
„Cronaca di Palazzo“, Roma.
- Friedrich J. 1930.** Staatsverträge der Hatti-Reiches in hethitischen Sprache,
Leipzig, Bd.2 (= *MVAG* 34).
- Gilan A. 2007.** Bread, Wine and Partridges – a Note on the Palace Anecdotes
(CTH 8), in einigen Texten des hethitischen Schrifttums und des Alten
Testaments, in *Tabularia Hethaeorum. Hethitologische Beiträge* Silvin
Košak zum 65. Geburtstag (Hrsg. D.Grodeek und M.Zorman), Wiesbaden
(= *Dresdner Beiträge zur Hethitologie*, Bd.25), 299-304.

- Kořak S. 2005. Konkordanz der hethitischen Keilschrifttafeln, T.1-5, Wiesbaden.
 Roth M.T. 1995. Law Collections from Mesopotamia and Asia Minor, Atlanta.
 Zorman M. 2004. The Palace Chronicle Reconsidered, in *Šarnikzel* (Hrsg. D.Groddek, S.Rossle), Dresden, 691-708.

Համառոտագրություններ

- ՄՄԱԵԺ - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (երեսան):
 CTH - Laroche E. 1971. Catalogue des textes cunéiformes, Paris.
 KBo - Keilschrifttexte aus Boghazköi. XVI, Leipzig und Berlin.
 KUB - Keilschrifturkunden aus Boghazköy, Berlin.

**WOMEN OF THE ARMENIAN HIGHLAND IN THE HITTITE
 CUNEIFORM SOURCES**

Keywords: Armenian Highland, Hittite cuneiform texts, Šuppiluliumaš I, Hukkana, Hayaša, Mariyaš, Palace anecdotes

Abstract

The article is an attempt to collect all references regarding female individuals who are attested in the Hittite cuneiform texts which represent two political entities of the Armenian Highland (Hayaša and Išurwa). Besides this, the author focuses on the episode dealing with the execution of Mariyas, the ruler of Hayaša, as it is told in the treaty signed between the Hittite king Šuppiluliumaš I and Hukkana of Hayaša. The comparison of the background of this episode points on the existence of palace etiquette in the Hittite court, as well as that of the Middle Assyria, according to which any contact with the female entourage of the palace was regarded as punishable action.

Aram Kosyan
Doctor in History
Institute of Oriental Studies,
Head of the Department of Ancient Orient.
aramkosyan@yahoo.com

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻՆԸ ԱՐԵՎԵԼ-ՔՈՒՄ

Համակարգչային էջադրումը՝ Կարինե Զալարյանի

Չափսը՝ 60x84 1/16: 8.5 տպ. մամ.:
Տպաքանակը՝ 100:

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

[1200mm]

ՀԱՍ ՌԻՃՆԱՐԿԱՐ ՁԻՆ. ՁԻՆԿ



FL0669202

A π
108295

ISBN 978-9959-875-63-7



9 789939 875637